



ԱՐՅԱՅԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
АРЦАХСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

УЧЕННЫЕ ЗАПИСКИ

1/2008

Արցախի պետական համալսարան
Арцахский государственный университет

Գիտական տնօրենագիր
Ученые записки

1 (17)
2008

Ստեփանակերտ
Степанакерт

Հրատարակվում է 1998թ.

Издается с 1998г.

Խմբագրական կոլեգիա

Գրիգորյան Տ.Վ. (գլխ.խմբագիր), Աբրահամյան Ա.Ն., Աղալովյան Լ.Ա., Ավանեսյան Վ.Գ., Արամյան Կ.Ս., Բալայան Վ.Ռ., Գուլյան Ա.Ա., Դադայան Ս.Վ., Խանյան Ս.Ա. (պատ. քարտուղար), Խաչատրյան Վ.Ռ., Խաչատրյան Ա.Մ., Հակոբյան Գ.Ա., Հայրապետյան Է.Ա., Հարությունյան Գ.Տ., Հովսեփյան Ռ.Վ., Դովկասյան Ա.Ա., Մարտիրոսյան Ռ.Մ., Միրզոյան Վ.Ս., Մխիթարյան Ա.Մ., Ներսիսյան Կ.Ա., Պետրոսյան Ս.Է., Սարգսյան Ա.Յու., Սիմոնյան Ա.Հ., Սուվարյան Յու.Մ.:

Редакционная коллегия

Григорян Г.В. (гл.редактор), Абрамян А.Н., Аванесян В.Г., Агаловян Л.А., Айрапетян Э.А., Акопян Г.А., Арамян К.С., Арутюнян Г.А., Балаян В.Р., Гукасян А.А., Гулян А.А., Дадаян С.В., Мартиросян Р.М., Мирзоян В.С., Мхитарян А.М., Нерсисян К.А., Осипян Р.В., Петросян С.К., Саркисян А.Ю., Симонян А.Г., Суварян Ю.М., Ханян С.А. (отв. секретарь), Хачатрян В.Р., Хачагрян А.М.

ՍՏԵՃԱՆԱԿԵՐՏԻ ՄԱՆԿԱԿԱՐԺԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ
1973-1974 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Ն.Պ.Սարումյան

Հոգվածում լուսաբանվում են Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի հիմնադրման և 1973-74 թթ. նրա գործունեությանն առնչվող մի շարք առանցքային հարցեր: Մասնավորապես ներկայացվում է Ստեփանակերտում նոր կրթական կենտրոնի նկատմամբ աղբյուրառական իշխանությունների կողմից տեսքվող քաղաքականությունը՝ ուղղված նրկրամասի ազգագրական պատկերը փոխելուն: Նման պայմաններում բուհի կայացումը և նրա լուսավոր հետաճկարը մեծ ձեռքբերում էր տրգոխաեություն համար:

1960-70-ական թվականներին Լեռնային Ղարաբաղի Ինքնավար մարզի կրթական համակարգում շրջադարձային նշանակալից նրկույթներ արձանագրվեցին:

1969 թվականին Դաքվի մանկավարժական ինստիտուտի հայկական բաժինը փակվեց և Ստեփանակերտում բացվեց այդ ինստիտուտի մասնաճյուղը: Խորհրդային կարգերի առաջին երեք տասնամյակներին Դաքվի պետական համալսարանը, իսկ մինչ 1969 թվականը՝ Դաքվի մանկավարժական ինստիտուտը, ունեցել են հայկական բաժանմունք՝ հայոց լեզվի ու գրականության, պատմության ու աշխարհագրության և բնական գիտությունների ֆակուլտետներով, որտեղ «Հայ ժողովրդի պատմություն» առարկան չէր ուսուցանվում, իսկ «Աղբրեջանի պատմություն» ուսուցանվում էր այնպիսի դասագրքերով, որոնցում կոդաբուտի էին եւրաբրկված Հայաստանի հին ու միջնադարյան պատմությունը, հայ ժողովրդի բազմադարյան մշակույթի գանձերը:

Այսինքն, Աղբրեջանի բուհերում կրթություն ստացած հայ պատմաբան-ուսուցիչներն իրենք ստիպված պիտի լինեին զբաղվել բացահայտ հակահայկական կեղծարարություններով՝ առանց տեղեկություններ ունենալու իրենց ազգային պատմությունից: Նմանատիպ իրավիճակ էր նաև մարզի հայկական դպրոցներում:

Աղբրեջանի ղեկավարությունը, 1973 թվականի ղեկտմեքերին ընդունած որոշման համաձայն, Աղբրեջանի Վ.Ի.Լենինի անվան մանկավարժական ինստիտուտի Ստեփանակերտի նախկին մասնաճյուղի հիմքի վրա ստեղծում է մանկավարժական ինստիտուտը՝:

Լեռնային Ղարաբաղի պատմության մեջ նոր և առաջին բարձրագույն ուսումնական հաստատությունը կոչված էր դառնալու հայերեն, ռուսերեն և աղբրեջաներեն լեզուներով մանկավարժական կադրերի պատրաստման առաջնորդող կենտրոն: Ինստիտուտն ուսուցիչներ էր պատրաստում Աղբրեջանի հայկական և հայաբնակ շրջանների միջնակարգ հարակրթական դպրոցների համար՝ մաթեմատիկայի, ֆիզիկայի, հայոց լեզվի և գրականության, պատմության, մանկավարժության և տարրական կրթության մասնագիտություններով՝:

Աղբրեջանի իշխանությունները կողմից Ստեփանակերտում մանկավարժական ինստիտուտի բացումը ռազմավարական խնդիրներ իրականացնելու նպատակ էր հետապնդում՝ առավել ակտիվացնել նրկրամասում աղբրեջանական տարրի ներթափանցման գործընթացը: Այդպես փակվեց մերթին հայկական կրթականության օջախը Դաքվում:

ԼՂԻՄ իշխանությունները քաջատեղյակ էին հանրապետական մարմինների կողմից ձեռնարկվող այդ ծրագրերին: Հայկական տարածաշրջանում հայկական բուհ ունենալու ԼՂԻ մարզի հայ բնակչության (արցախահայության) արդար պահանջը, անկասկած, ինչպես աղբրեջանական, այնպես էլ կենտրոնական խորհրդային իշխանությունների կողմից կորակավորվող որպես ազգայնամոխական պահանջ և անմիջապես կիրականացվեին դրանից բխող խորիդրային պատժամիջոցները: Այսինքն, հայրուրավոր հայ մտավորականներ ստիպված

կլինեին նորից թողնել հայրենիքը, ինչը ձեռնտու էր Բաքվին: Արցախը կանգնած էր երկրնորանքի առջև և իր լուռ համաձայնության մեջ էր տեսնում ինքն իրեն փրկելու միակ միջոցը:

Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտն իր նրբեր բաժիններով (հայկական, ռուսական, անգլերենական) եղանի բուռ էր ամբողջ խորհրդային Միությունում: Արցախահայության առջև ծառացած խնդիրը կայանում էր նրանում, որ անգամ նման կատարվածք ունեցող բուռը կարողանար ծառայեցնել հայ երիտասարդությանը բարձր հայրենասիրական ոգով դատարկվելու նպատակներին: Այդ դժվարագույն խնդիրն ստանձնեցին հայկական, հնուագայում և՛ ռուսական բաժինների դասախոսական անձնակազմը:

1973-74 ուսումնական տարում ինստիտուտում գործում էր երկու ֆակուլտետ՝ պատմա-բանասիրական (ղեկան՝ պատմ. գիտ. թեկ. Ս. Ջնյալով) և ֆիզիկա-մաթեմատիկական (ղեկան՝ ֆ. մ. գ. թ., պրոֆ. Ս. Ս. Բաղդասարյան), ութ ամբիոն, հինգ լաբորատորիա և մեկ միջանիկական արհեստանոց³:

Պատմաբանասիրական ֆակուլտետի համակարգում ընդգրկված էր հայոց (եզվի և գրականության ամբիոնը (վարիչ՝ բան. գիտ. դոկ. պրոֆ., գիտության վաստակավոր գործիչ Գ. Գ. Անտոնյան), մանկավարժության և հոգեբանության ամբիոնը (վարիչ՝ մանկ. գիտ. թեկ., դոցենտ Ա. Ա. Ներսիսյան), հասարակական գիտությունների ամբիոնը (վարիչ՝ էլի. գիտ. թեկ., դոցենտ Շ. Ա. Աբրահամյան), ֆիզիկատիարականության ամբիոնը (վարիչ՝ ավագ դասախոս Վ. Պ. Իսկին), անգլերենական (եզվի և գրականության ամբիոնը (վարիչ՝ բան. գիտ. դոկ., պրոֆ. Ն. Ախունդով), և օտար լեզուների ամբիոն (վարիչ՝ մանկ. գիտ. թեկ., դոցենտ Ա. Ն. Խալատյան):

Ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետի համակարգում գործում էր մաթեմատիկայի ամբիոնը (վարիչ՝ ավ. դաս. Ն. Մամուդով), ֆիզիկայի ամբիոնը (վարիչ՝ ֆ. մ. գ. դ., պրոֆ. Ս. Ս. Բաղդասարյան): 1974 թվականին ինստիտուտի ժեկտոր է նշանակվում Սերգեյ Գերասիմի Սարկիսովը, պատմ. գիտ. թեկ., դոցենտ: Նախկինում նա աշխատում էր Բաքվի կուսակցական բարձրագույն դպրոցում՝ որպես ամբիոնի վարիչ: Ինստիտուտի ուսումնական աշխատանքների գծով պրոբելետոր էր մ. գ. թ., դոցենտ Ա. Ա. Ներսիսյանը (հասարակական էլիմոնեքներով): Նշված ժամանակաշրջանում դաստիարակչական աշխատանքները կարգավորելու նպատակով կար հատուկ հաստիք՝ դաստիարակչական աշխատանքների գծով պրոբելետոր (թ. գ. թ., դոցենտ Ս. Ա. Անանյան): Ինստիտուտում գործում էր ուսանողական կոմերիտիության կոմիտե (քարտուղար՝ Ա. Լ. Կադարյան):

Կազմավորված էր ինստիտուտի գիտական խորհուրդը, որը, ամիսը մեկ անգամ, նիստ էր գումարում ժեկտոր Ս. Գ. Սարկիսովի ղեկավարությամբ՝ քննարկելու ուսումնա-դաստիարակչական և տնտեսական գործունեությանը վերաբերող հարցեր: Ուսանողների գաղափարա-քաղաքական մակարդակի բարձրացման էր ուղղված հատուկ դասընթացների («Հասարակական-քաղաքական պրակտիկա» և «Մասնագիտական ներածություն») անցկացումը, որոնց պարամունքների կազմակերպման համար հրավիրվում էին պատմաբանատու կուսակցական, սովետական, կոմերիտական կազմակերպությունների, կոլտուրայի, ժողկրթության և այլ մասնագետներ⁴:

1973 թվականից էլ Սովետական Ադրբեյջանի 60-ամյակի անվան Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտը տվեց իր առաջին շրջանավարտ-ուսուցիչները (400-450 հոգի)⁵: Չնայած այդ մանկավարժական ինստիտուտն ստեղծվել էր մարզի և հարակից շրջանների շուրջ մեկ սիլիոն բնակչության համար, բայց ինստիտուտի 65-70 տոկոսը կազմում էր ադրբեյջանական բաժանմունքը, որն այստեղ Բաքվի, Լիբովաբադի, Նախիջևանի ադրբեյջանական մանկավարժական ինստիտուտների գոյության պայմաններում պարզապես չունեց ոչ մի անելիք, բացի նրանից, որ կոչված էր փոխելու մարզկենտրոնի ազգագրական պատկերը: Ադրբեյջանական բաժանմունքը, բնական է, իր հիմն Ստեփանակերտ բերեց ադրբեյջանցի դասախոսների, վարչական աշխատողների, այլևայլ սպասարկողների ու նրանց հարազատների մի անեղիք քանակություն: Ինստիտուտին էլ հետևեցին Ստեփանակերտում գործող հայկական բժշկական ու գյուղատնտեսական տեխնիկումներին, մանկավարժական ուսումնարանին և այլազան կրթական հաստատություններին կցված ադրբեյջանական բաժինները:

Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտը ձևավորման ժամանակ չունեց ոչ ուսումնական շենք և ոչ էլ՝ ուսանողական հանրակացարան:

1973 թվականի դեկտեմբերից հետո Ադրբեյջանի Վ. Ի. Լենինի անվան մանկավարժական ինստիտուտի Ստեփանակերտի մասնաճյուղը լուծարվեց և նրա հիմքի վրա ստեղծվեց

Սովետական Ադրբեյջանի 60-ամյակի անվան Մոեփանակերտի մանկավարժական ինստիտուտը:

ԼՂՀ պետարխիվի փաստաթղթերից մեկում նշվում է, որ Սոեփանակերտի մանկավարժական ինստիտուտի ռեկտորադ, առաջին հերթին, Ադրբեյջանի ԼՂՀ ԼՂՀ մարզկոմի և պետգամավորների գործկոմի մարզային սովետի միջոցով հասել է նախկին Սոեփանակերտի գյուղատնտեսական տնխնիկուռի ուսումնական շենրը և հանրակացարանը մանկավարժական ինստիտուտին տալու փաստին: Նրկերող, կապիտալ վերանորոգում է կառավրվել 300 տեղանոց հանրակացարանում և 1975 թվականի մարտի 5-ից սկսվել է ուսանողների բնակեցումը: Արդյունքում, 1975 թվականի մարտի 23-ի դրությամբ, հանրակացարանում բնակեցվել է 211 ուսանող, որից 119-ը՝ ադրբեյջանցի, 92-ը՝ հայ⁹:

Պետր է նշել նաև, որ, անհրաժեշտ պայմանների ստեղծման համար, նույն ժամանակ, ուսումնական շենքում գրադարանին կից, ստեղծվել էր 100 տեղանոց ընթերցասրահ¹⁰: Կարգավորվել էր ուսանողական ճաշարանը, միջոցներ էին ձեռնարկվել հանրակացարանում բուժկետ բացելու համար, շահագործման էր հանձնվել թաղնիք՝ սպորտդահլիճին կից և 648 հուզու համար հանդերձարանի՝ ուսումնական շենքում: Սպորտպարտախմբների և այլ միջոցառումների անցկացման համար, հանրակացարանին կից, կառուցվել էր սպորտդահլիճը:

1974 թվականի վերջի դրությամբ Սոեփանակերտի մանկավարժական ինստիտուտում սովորում էր հանրապետության 30 շրջաններից և միութենական հանրապետություններից, ինչպես և արտասահմանից¹¹, Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզ ժամանած 1365 ուսանող: Նրանցից «առկա բաժնում» 526, հեռակա բաժնում՝ 839 մարդ: Ուսանողների ընդհանուր թվաքանակի 63,5 տոկոսը կամ 866-ը աղջիկներ էին¹²:

1973 թվականի ընթացքում, տարբեր պատճառներով, ինստիտուտից հեռացվել էին 38 ուսանող, այդ թվում 14-ը՝ անբավարար սովորելու պատճառով, որը ուսանողների ընդհանուր թվի 1,02 տոկոսից էլ պակաս թիվ էր կազմում:

Սակայն, պետր է նշել նաև, որ այդ ընթացքում այլ բուհերից Սոեփանակերտի մանկավարժական ինստիտուտ են տեղափոխվել 22 ուսանող¹³:

1974 թվականի գարնանն ու ամռանը հաջորդությամբ կազմակերպվեցին դիմորդների առաջին ընդունելության քննությունները, որոնց արդյունքներով հրամանագրվեց 407 դիմորդ: Նրանցից 208-ը բանվորի և գյուղացու ընտանիքների անդամներ էին:

Ուսանողների ազգային պատկանելիության պատկերը հետևյալն էր. «1365 ուսանողից 903-ը ազգությամբ հայեր էին, 460-ը՝ ադրբեյջանցիներ, իսկ 2-ը՝ ռուս»¹⁴:

Ուսանողների հասարակական դրության մասին խոսում էին հետևյալ թվերը՝ «1365 ուսանողից 38-ը հԱՄԼԿ անդամ էին, 896-ը՝ ՀամԼԿԵՄ անդամ, 431-ը՝ անկուսակցական»¹⁵:

1973-74 ուսումնական տարում Սոեփանակերտի մանկավարժական ինստիտուտում աշխատում էին 59 հաստիքային դասախոսներ, որոնցից 3-ը՝ պրոֆեսորի և դոկտորի կարգավիճակով, 15-ը՝ դոցենտի և գիտությունների թեկնածուի: Այդ դասախոսներից էին ֆիզմաթ. գիտ. դոկ. պրոֆ. Ս.Ս.Բաղդասարյանը, բան.գիտ. դոկ. պրոֆ. գիտության վաստակավոր գործիչ Գ.Գ.Անտոնյանը, պատմ. գիտ. թեկ. դոցենտ Ա.Մ.Իոնեսյանը, բան. գիտ. թեկ., դոցենտներ Ս.Ա.Խաչյանը, Գ.Խ.Բաղդասարյանը, Լ.Ս.Դավթյանը, փիլ. գիտ. թեկ., դոցենտ Շ.Մ.Աբրահամյանը, մանկ. գիտ. թեկ., դոցենտներ Ա.Ս.Ներսիսյանը և Ս.Ե.Խալատրյանը:

Գիտական կոլեկտիվներով ու աստիճաններով դասախոսները կազմում էին դասախոսների ընդհանուր թվակազմի ամօրին քան 20 տոկոսը: Ռեկտորատի գլխավոր խնդիրը կայանում էր նրանում, որպիսի ամբիոններ համարվեին բարձրակարգ մասնագետներով, որոնց կարելիք տվյալ պահին շատ մեծ էր: Հարցը դժվարանում էր նրանով, որ Ադրբեյջանի իշխանություններն արհեստական արգելքներ էին ստեղծում Հայաստանից մասնագետներ հրավիրելու գործում: Դարաբաղից գիտական աստիճան ունեցող շատ մասնագետներ ցանկություն էին հայտնել աշխատել նորաբաց բուհում: Ինստիտուտի ղեկավարությունն իրավունք չունեցրեց առանց Բաքվի համաձայնության որևէ մեկին ընդունել աշխատանքի: Երևանից դասախոսական աշխատանքի հրավիրվեց ֆիզմաթ. գիտ. դոկտոր, պրոֆ. Ս.Ս.Բաղդասարյանը, որը նախկինում Բաքվի մանկավարժական ինստիտուտի ֆիզիկայի դասախոս էր:

Տեղի մասնագետների նկատմամբ իշխանություններն անվստահություն էին հայտնում, որը և տանում էր ընդհուպ մինչև աշխատանքից հեռացում: Այդ քաղաքականության հետևանքով

կերկրովշինայի գոհ դարձան բանգիտ թեկ. ժ.Մ.Անդրյանը, բանասեր, ալիագ դասախոս Շ.Մարտիրոսյանը և մի խումբ այլ դասախոսներ:

1973-74 ուսմանական տարում ինստիտուտն ավարտել էր 1101 ուսանող, որից 17-ը կամ 1,54 տոկոսը՝ գերազանցելությամբ: Երկու ֆակուլտետներում (պատմաբանափրական և ֆիզիկամաթեմատիկական) ընդհանուր առաջադիմությունը 80,6 տոկոս էր կազմում: Առաջադիմության բարձր ցուցանիշները հասարակական և հումանիտար գիտությունների ուղղությամբ էին: Տարվա վերջին անբավարար աշխուղոցների թիվը կազմում էր 264 ուսանող կամ 19,4 տոկոս, այդ թվում ներքև և ավելի աստիճաններից՝ 81 ուսանող:

Երկու ֆակուլտետներում պետական քննություններին թույլատրվեցին մասնակցել 132 ուսանողներ: Նրանցից 108-ը հաջողությամբ հանձնեցին քննությունները և ստացան միջնակարգ դպրոցի ուսուցչի որակավորում՝ մեկնելով աշխատանքի վայրերը¹³: Թողարկվել են 39 մագիստրոս, 44 բանասեր, 25 տարրական կրթության մասնագետ:

Ինստիտուտում կատարվել էր նաև գիտահետազոտական աշխատանք: Նման աշխատանք կատարել են 58 դասախոսներ, այդ թվում՝ 3 պրոֆեսոր, գիտությունների դոկտոր և 15 դոցենտ, գիտությունների թեկնածուներ: Ընթացքի մեջ էին գտնվում նաև երկարատև ժամկետներով նախատեսված գիտահետազոտական մի շարք թեմաներ:

Նշված ժամանակաշրջանում դասախոսների կողմից հրատարակվել են 50 հրատարակումներ և գիտական հոդվածներ¹⁴:

1974 թվականին տեղի ունեցավ գիտական կոնֆերանս՝ «միջկամ գիտահետազոտական աշխատանքների արդյունքներին»: Պլենար և բաժանմունքային նիստերում լսվեցին 16 զեկուցումներ:

Բացի դրանից, տեղական կոմունիստական և հասարակական կազմակերպությունների հետ համատեղ անցկացվեցին մի քանի գիտատեսական կոնֆերանսներ, որոնց մասնակցում էին և պրոֆեսորադոսախոսական անձնակազմը և ուսանողները:

Ուսանողների բարոյական դաստիարակության նպատակով և ընդհանուր կուլտուրական մակարդակի բարձրացման համար սերտ կապեր էին հաստատվել մարզային ստեղծագործական կազմակերպությունների հետ. կազմակերպվել էին դրամատիկ խմբակներ աղբյուրներին և հայերեն լեզուներով, ժողգործիչների համույթ, ինչպես նաև զրախան խմբակներ՝ «Շնչել» և «Հողբոց»¹⁵, որոնք միավորում էին տասնյակ ուսանողների:

Ինստիտուտում կազմակերպվել էր նաև «Ինտելեկտ» անունով հասարակական կազմակերպություն:

Դասախոսների, ուսանողների և հասարակության համար տարվա ընթացքում կարդացվել էին 80 զեկուցումներ և դասախոսություններ¹⁶:

Ուսանողական շինարարական ջոկատների գործունեությունը ևս ռեկտորատի ուշադրության կենտրոնում էր:

1974 թվականին ինստիտուտում առաջին անգամ կազմակերպվել էր երկու շինջոկատ, որոնց մեջ ընդգրկված էին 61 ուսանող: Նրանք աշխատել էին Մոսկվայի ակերտի, Շուշիի և Մարտակերտի շրջաններում: Նրանցին հաշվարկներով աշխատանքի ծախսը կազմել էր 44 հազար ռուբլի: Միաժամանակ որոշակի գումար էր փոխանցվել Գագարինո քաղաքի կառուցման, ինչպես նաև խաղաղության ֆոնդը: Առաջափոր աշխատողները պարգևատրվել և շնորհագրեր էին ստացել Մարտակերտի շրջկոմի կոմերիտության կողմից:

Սպորտմասսայական աշխատանքներն ինստիտուտում ղեկավարում էր ֆիզգաստիարակության ամբիոնը, որն ուներ համեմատաբար համապատասխան որակավորված դասախոսներ, մասնագիտական բազային կրթությամբ, սպորտային և վարպետական կարգեր: Բացի դրանից՝ այդ աշխատանքներով զբաղվում էին կոմերիտական, արհմիութենական և սպորտային կազմակերպությունները:

Ինստիտուտում ընթանում էր սպորտհամալիրի շինարարությունը: Շահագործման էր հանձնվել սպորտդահլիճը, ձեռք էին բերվել անհրաժեշտ սպորտկահույք և այլ կահավորանք: Անց էին կացվում համաինստիտուտային սպորտմրցումներ:

Նորաբաց ինստիտուտի ուսումնական գործընթացի կազմակերպման հիմնահարցում մեծ նշանակություն ուներ բուհի գրադարանի գործունեությունը, որը սեպտեմբեր 1-ից 3 սեյսյակից կազմված գրքապահոցը և 150 տեղահոց ընթերցասրահը¹⁷ (1974 թ. վերջի դրությամբ):

Գրադարանն ստեղծվել էր ինստիտուտի կազմավորումից հետո և արդեն 1974 թվականի վերջի դրությամբ ուներ 27 հազար միավոր հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով գիտական, գեղարվեստական, քաղաքական և ուսումնամանկավարժական գրականության ֆոնդ: Բացի դրանից գրադարանը դուրս էր գրում մի քանի տասնյակ անուն թերթեր, ամսագրեր և պարբերական մամուլ: Գրադարանն աշխատում էր նրկու հերթով, քննությունների ժամանակ՝ ասանց հանգստյան օրվա: Գրադարանը սիստեմատիկորեն կազմակերպում էր տարատեսակ միջոցառումներ՝ ընթերցասերների կոնֆերանսներ, հորեկյանական գրական ներկուներ, հանդիպումներ գրողների հետ և այլն: Այն միջբուհական կապեր էր հաստատել Մոսկվայի, Նրևանի և Բարվի հանրային գրադարանների հետ:

1974 թվականի ֆինանսական տարում Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտը ֆինանսավորվել է 592,9 հազար ռուբլով¹⁸:

Այսպիսով, Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտը իր գործունեության սկզբնականում, հաղթահարելով բազմաթիվ դժվարություններ, նոր հիմքեր ստեղծեց ապագա ձեռքբերումների համար:

Резюме

В статье рассматриваются вопросы, связанные с открытием Степанакертского педагогического института и его деятельностью в 1973-74 гг.. Раскрываются также политическая цель азербайджанских властей в отношении нового учебного центра в Степанакерте: стремления этнического изменения армянской области и последствия этой политики. В таких условиях деятельность вуза и перспективы светлого будущего стали большим приобретением для арцахского народа.

Ծանոթագրություններ

1. «Սովետական Ղարաբաղ», 18 հունվարի, 1976թ., թիվ 14:
2. ԼՂՀ պետարխիվ, ֆ.55, ց.1, գ.2, թ.1:
3. Նույն տեղում:
4. Նույն տեղում, թ.2:
5. Նույն տեղում, ֆ.250, ց.3, գ.200, թ.155:
6. Նույն տեղում:
7. Նույն տեղում:
8. Նույն տեղում, թ.2:
9. Նույն տեղում, գ.2, թ.2:
10. Նույն տեղում, գ.1, գ.9, թ.2:
11. Նույն տեղում:
12. ԼՂՊ պետարխիվ, ֆ.55, ց.1, գ.1, թ.3:
13. Նույն տեղում:
14. Նույն տեղում, թ.5:
15. ԼՂՀ պետարխիվ, ֆ.55, ց.1, գ.9, թ.6:
16. Նույն տեղում, թ.7:
17. ԼՂՀ պետարխիվ, ֆ.55, ց.1, գ.9, թ.8:
18. Նույն տեղում, թ.9:

ОБ ОСЦИЛЛЯЦИИ СОБСТВЕННЫХ ФУНКЦИЙ ОДНОГО ОПЕРАТОРА ДИРАКА*¹

Г.Г.Саакян

В работе, с применением теоремы сравнения для систем однородных линейных дифференциальных уравнений, доказывается теорема об осцилляции компонент собственных вектор-функций одного одномерного оператора Дирака.

Рассматривается следующий одномерный оператор Дирака (см., напримр, [1])

$$D = S \frac{d}{dt} + G, \quad (1)$$

где $S = \begin{pmatrix} 0 & 1 \\ -1 & 0 \end{pmatrix}$, $G = \begin{pmatrix} p(t) & q(t) \\ q(t) & -p(t) \end{pmatrix}$, $p, q \in C[a, b]$, с областью определения, состоящей из вектор-функций $\bar{y}(t) = \begin{pmatrix} y_1(t) \\ y_2(t) \end{pmatrix}$, удовлетворяющих условиям:

1. $\bar{y}(t) \in L^2[0, \pi]$,
2. $\bar{y}(t)$ абсолютно непрерывна на $[0, \pi]$,
3. $D\bar{y}(t) = S \frac{d\bar{y}(t)}{dt} + G(t)\bar{y}(t) \in L^2[0, \pi]$,
4. компоненты $\bar{y}(t)$ удовлетворяют граничным условиям

$$y_1(0) \sin \alpha + y_2(0) \cos \alpha = 0, \quad (1a)$$

$$y_1(\pi) \sin \beta + y_2(\pi) \cos \beta = 0, \quad (1b)$$

где α и β — произвольные действительные числа.

Теорема Штурма об осцилляционных свойствах решений уравнения Штурма-Лиувилля давно известна и до сих пор публикуются работы, обобщающие результаты Штурма (см., напримр, [2]–[4]). Осцилляционные свойства решений Дирака мало изучены (см., напримр, [5]). Основная цель настоящей работы — доказать теорему об осцилляции компонент собственных вектор-функций рассматриваемого оператора Дирака.

Определение. Если при некотором λ_0 уравнение $D\bar{y}(t) = \lambda_0 \bar{y}(t)$ имеет нетривиальное решение $\bar{y}(t, \lambda_0) = \begin{pmatrix} y_1(t, \lambda_0) \\ y_2(t, \lambda_0) \end{pmatrix}$, то число λ_0 называется *собственным значением*, а соответствующее решение $\bar{y}(t, \lambda_0)$ — *собственной вектор-функцией* оператора D .

Известно (см., [1]), что

1. собственные значения рассматриваемого оператора D действительны и образуют счетное множество, неограниченное ни снизу ни сверху;

* Публикуемые результаты были доложены на международной конференции, посвященной 85-летию Л.Д.Кузнецова в г.Москве 25-28 мая 20008 года.

2. нули компонент собственных функций оператора D простые и не имеют предельных точек накопления, а, следовательно, на любом отрезке их можно пронумеровать в порядке возрастания;

Очевидно, что задачу на собственные значения рассматриваемого оператора Дирака можно записать в виде краевой задачи, состоящей из канонической системы Дирака

$$\begin{cases} y_2' + p(t)y_1 + q(t)y_2 = \lambda y_1, \\ -y_1' + q(t)y_1 - p(t)y_2 = \lambda y_2, \end{cases} \quad (2)$$

и краевых условий (1a) и (1b).

Нам понадобятся следующие теоремы о сравнении и о перемежаемости нулей (см. [6]).

Сравниваются следующие системы дифференциальных уравнений

$$\begin{cases} y_1' + p_i(t)y_2 = 0, \\ y_2' + r_i(t)y_1 = 0, \end{cases} \quad (3)$$

где $p_i, r_i \in C_0[0, \pi]$ ($i = 1, 2$).

Теорема 1 (о сравнении). Пусть $\bar{u}(t) = \begin{pmatrix} u_1(t) \\ u_2(t) \end{pmatrix}$ и $\bar{v}(t) = \begin{pmatrix} v_1(t) \\ v_2(t) \end{pmatrix}$ — нетривиальные решения

систем (3) при $i = 1$ и $i = 2$ соответственно, удовлетворяющие одним и тем же начальным условиям:

$$u_1(a) = v_1(a), u_2(a) = v_2(a),$$

и пусть

$$p_1(t)p_2(t) > 0, r_1(t)r_2(t) > 0,$$

$$p_i(t)r_i(t) < 0, (i = 1, 2),$$

$$|p_2(t)| \geq |p_1(t)|, |r_2(t)| \geq |r_1(t)|.$$

Тогда если одна из компонент $\bar{u}(t)$ имеет ℓ нулей на отрезке $[a, b]$, то одна из компонент $\bar{v}(t)$ имеет на том же отрезке $[a, b]$ не менее ℓ нулей, причем k -ый нуль этой компоненты $\bar{v}(t)$ не больше k -ого нуля компоненты $\bar{u}(t)$.

Теорема 2 (о перемежаемости нулей). Если в системе (3) $p_i(t)r_i(t) \neq 0$ ($i = 1, 2$) на отрезке $[a, b]$, то между всякими соседними нулями одной из компонент всякого нетривиального решения системы (3) находится ровно один нуль другой компоненты того же решения.

Рассмотрим теперь задачу (2), (1a), (1b). Справедлива

Теорема 3 (об оспалляции). Для любого натурального числа n существует число μ_n такое, что если собственное значение задачи (2), (1a), (1b) удовлетворяет неравенству $|\lambda| \geq \mu_n$, то каждая из компонент собственной вектор-функции задачи (2), (1a), (1b) имеет на отрезке $[0, \pi]$ по крайней мере n нулей.

Доказательство. Запишем систему (2) в виде

$$\begin{cases} y_1' - q(t)y_1 + (p(t) + \lambda)y_2 = 0, \\ y_2' + (p(t) - \lambda)y_1 + q(t)y_2 = 0. \end{cases} \quad (4)$$

Если зафиксировать значение λ и воспользоваться подстановкой

$$y_1(t) = z_1(t)e^{\int_0^t q(\tau) d\tau}, \quad (5a)$$

$$y_2(t) = z_2(t)e^{-\int_0^t q(\tau) d\tau}, \quad (5b)$$

то, как нетрудно проверить, система (4) преобразуется в систему

$$\begin{cases} z_1' + p_0(t)z_2 = 0, \\ z_2' + r_0(t)z_1 = 0, \end{cases} \quad (6)$$

коэффициенты которой определяются из следующих соотношений:

$$p_0(t) = (p(t) + \lambda)e^{2\int_0^t q(\tau) d\tau}, \quad r_0(t) = (p(t) - \lambda)e^{2\int_0^t q(\tau) d\tau}. \quad (7)$$

При этом преобразовании будем иметь, что $y_1(0) = z_1(0)$, $y_2(0) = z_2(0)$ и, следовательно, краевые условия (1a), (1b) примут следующий вид:

$$z_1(0)\sin\alpha + z_2(0)\cos\alpha = 0, \quad (8a)$$

$$z_1(\pi)e^{\int_0^\pi q(\tau) d\tau} \sin\beta + z_2(\pi)e^{-\int_0^\pi q(\tau) d\tau} \cos\beta = 0. \quad (8b)$$

З а м е ч а н и е. Из соотношений (5a) и (5b) следует, что нули компонент $y_1(t)$ и $y_2(t)$ решений задачи (2), (1a), (1b) совпадают с нулями компонент $z_1(t)$ и $z_2(t)$ соответствующих им решений задачи (6), (8a), (8b).

Для заданного натурального числа n выберем натуральное число s так, чтобы имело место неравенство: $s \geq n+1$. Затем подберем пару натуральных чисел m и k так, чтобы $s = mk$.

Обозначив $\varphi(t) = e^{-2\int_0^t q(\tau) d\tau}$, заметим, что $\varphi(t) \neq 0$. Далее, так как функции $p(t)$, $\varphi(t)$, $1/\varphi(t)$ непрерывны на отрезке $[0, \pi]$, то функции $\frac{m^2}{\varphi(t)} - p(t)$ и $p(t) + k^2\varphi(t)$ также будут непрерывны на $[0, \pi]$, и, следовательно, ограничены. А, значит, найдутся такие числа l_1, l_2, L_1 и L_2 , что

$$l_1 \leq \frac{m^2}{\varphi(t)} - p(t) \leq L_1 \quad (9)$$

$$l_2 \leq p(t) + k^2\varphi(t) \leq L_2. \quad (10)$$

Выберем теперь λ_n -значение параметра λ так, чтобы оно удовлетворяло бы соотношению

$$\lambda_n \geq \max \{L_1, L_2\}.$$

Тогда, учитывая, что $\varphi(t) > 0$, с учетом соотношений (9) и (10), будем иметь

$$(p(t) + \lambda_n) \varphi(t) \geq m^2 > 0, \quad \frac{p(t) - \lambda_n}{\varphi(t)} \leq -k^2 < 0. \quad (11)$$

Сравним теперь систему (6) с системой

$$\begin{cases} y_1' + m^2 y_2 = 0, \\ y_2' - k^2 y_1 = 0. \end{cases} \quad (12)$$

Если принять $p_1(t) = m^2$, $r_1(t) = -k^2$, $p_2(t) = p_0(t)$, $r_2(t) = r_0(t)$, то с учетом соотношений (7) и (11), будем иметь

$$p_2(t) = (p(t) + \lambda_n) e^{-2 \int_0^t q(\tau) d\tau} = (p(t) + \lambda_n) \varphi(t) \geq m^2 = p_1(t) > 0,$$

$$r_2(t) = (p(t) - \lambda_n) e^{2 \int_0^t q(\tau) d\tau} = \frac{p(t) - \lambda_n}{\varphi(t)} \leq -k^2 = r_1(t) < 0.$$

Далее, известно (см., например, [7]), что общее решение системы (12) можно записать в виде

$$u_1(t) = A \cos(mkt + \phi), \quad u_2(t) = \frac{Ak}{m} \sin(mkt + \phi),$$

где A и ϕ произвольные постоянные. Предположим, что $\bar{y}(t, \lambda_n) = \begin{pmatrix} y_1(t, \lambda_n) \\ y_2(t, \lambda_n) \end{pmatrix}$ -

соответствующая собственному значению λ_n собственная вектор-функция задачи (2), (1a), (1b),

а $\bar{v}(t, \lambda_n) = \begin{pmatrix} v_1(t, \lambda_n) \\ v_2(t, \lambda_n) \end{pmatrix}$ - соответствующее ей решение задачи (6), (8a), (8b), и пусть при $\lambda = \lambda_n$

$$y_1(0, \lambda_n) = y_{10}, \quad y_2(0, \lambda_n) = y_{20}.$$

Тогда, согласно замечанию, будем иметь, что

$$v_1(0, \lambda_n) = y_{10}, \quad v_2(0, \lambda_n) = y_{20}.$$

Далее, очевидно, что можно подобрать значения A и ϕ так, чтобы для соответствующего им частного решения $\bar{u}(t)$ системы (12) имело бы место условие

$$u_1(0) = y_{10}, \quad u_2(0) = y_{20}.$$

Заметим теперь, что для систем (6) и (12) и соответствующих им решений $\bar{u}(t)$ и $\bar{v}(t, \lambda_n)$ имеют место условия теоремы 1. И так как компоненты решения $\bar{u}(t)$ имеют на отрезке $[0, \pi]$ по крайней мере $\left\lceil \frac{\pi mk}{\pi} \right\rceil = s \geq n$ нулей, то, применив теорему 1, получим, что одна из компонент решения $\bar{v}(t, \lambda_n)$, а, значит, согласно замечанию, и собственной вектор-функции $\bar{y}(t, \lambda_n)$, будет иметь на интервале $[0, \pi]$ по крайней мере $n+1$ нулей. Тогда, согласно теореме 2, другая компонента будет иметь в этом случае по крайней мере n нулей.

Выберем теперь значение параметра $\lambda - \lambda'_n$ удовлетворяющим соотношению

$$\lambda'_n < \min_{0 \leq t \leq \pi} \left(-\frac{m^2}{\varphi(t)} - p(t), p(t) - k^2 \varphi(t) \right), \quad (13)$$

и примем

$$p_1(t) = -m^2, r_1(t) = k^2, p_2(t) = p_0(t), r_2(t) = r_0(t).$$

Тогда, с учетом соотношений (7) и (13), будем иметь, что

$$p_2(t) = (p(t) + \lambda'_n) \varphi(t) \leq -m^2 = p_1(t) < 0, r_2(t) = \frac{p(t) - \lambda'_n}{\varphi(t)} \geq k^2 = r_1(t) > 0.$$

Сравнив теперь систему (6) с системой

$$\begin{cases} y'_1 - m^2 y_2 = 0, \\ y'_2 + k^2 y_1 = 0, \end{cases}$$

и, вновь, воспользовавшись теоремами 1 и 2, получим, что компоненты собственной вектор-функции $\overline{y}(t, \lambda_n)$ будут иметь на интервале $[0, \pi]$ по крайней мере n нулей. Для завершения доказательства достаточно выбрать μ_n из соотношения

$$\mu_n = \max \{ |\lambda_n|, |\lambda'_n| \}$$

Теорема доказана.

Ամփոփում

Աշխատանքում, գծային համասեռ դիֆերենցիալ հավասարումների համակարգերի համար համեմատության թեորեմի կիրառմամբ, ապացուցվում է, սեփական ֆունկցիաների կոմպոնենտների օսցիլյացիայի մասին թեորեմը մի միաշախի Դիրակի օպերատորի համար:


Литература

1. Б.М. Левитан, И.С. Сегреян. Операторы Штурма-Лиувилля и Дирака. М.: Наука, 1988.
2. Don Hilton. Sturm's 1836 oscillation results evolution of the theory. Sturm-Liouville Theory: Past and Present, Birkhäuser, Basel, 2005, 1-27.
3. B. Simon. Sturm oscillation and comparison theorems. Sturm-Liouville Theory: Past and Present, Birkhäuser, Basel, 2005, 29-43.
4. H. Krüger and G. Techlm, Relative oscillation theory. weighted zeros of the wronskian, and the spectral shift function. Arxiv. Math/0703574v1 [math. SP], 20 mar 2007.
5. Е.В. Фомина, Оцилляционная теорема для системы Дирака с параметром в краевом условии, Функциональный анализ, Межвузовский сборник научных трудов, Ульяновск, 1984, 111-122.
6. Г.Г. Саакян, О некоторых свойствах решений канонической системы Дирака, Ученые записки ЕрГУ, 2007, N 2, 3-11.
7. Дж. Савсонс, Обыкновенные дифференциальные уравнения, М.: ИЛ, т.1, 1953.

ԿՈՒՐՍԱՅԻՆ ԵՎ ԱՂԱՐՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԱՄԲՈՒՆ
ԳՈՒՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐՆԱԴՈՐ ԸՆԴՀԱՆՐԱՊԵՏՈՒՅԷ

Ա.Կ. Պետրոսյան

Բարձրագույն կրթության նախնական համակարգում



բարձր որակավորման գիտական և գիտամանկավարժական կադրերի պատրաստման հիմնական ողակը ասպիրանտուրան է: Մակայն, սովորողների մոտ գիտահետազոտական աշխատանքի կատարման որոշակի ունակություններ և մեթոդիկա պետք է ձևավորել ու աստիճանաբար զարգացնել տակավին ասպիրանտուրային նախորդող օղակներում բակալավրիատում և մագիստրատուրայում:

Ասպիրանտական ուսուցման և գիտահետազոտական աշխատանքի կազմակերպման խորհրդային մոդելը, որը ժամանակի յախագույն գիտական-մանկավարժների կողմից մշակվել էր տասնամյակների ընթացքում, բավականին արդյունավետ էր և արժանի է ընդօրինակման: Մինչդեռ, բակալավրիատ-մագիստրատուրա համակարգի համար, որը մեզանում ընդամենը 3-4 տարվա պատմություն ունի, գիտահետազոտական աշխատանքների կազմակերպման հստակ մեխանիզմներ (մոդելներ) դեռևս մշակված չեն:

Բակալավրիատում և մագիստրատուրայում ուսանողի գիտական գործունեության հիմնական ձևը կուրսային և ավարտական (մագիստրոսական) աշխատանքների կատարումն է: Այն նպատակ ունի ոչ միայն խորացնելու ուսանողների գիտելիքներն ընտրած մասնագիտության բնագավառում, այլև ծանոթացնելու գիտական հետազոտության եղանակներին ու մեթոդներին: Համալսարանն ավարտելով ուսանողը պետք է ունենա ոչ միայն գիտելիքների որոշակի պաշար, ստանձնյալ-տրամաբանելու ունակություն, այլև տիրապետի գիտական աշխատանքի մեթոդիկային:

Կուրսային և ավարտական աշխատանքներում առաջին անգամ ուսանողը դրսևորում է ինքնուրույն գիտական աշխատանք գրելու ունակություններ, հմտանում է մասնագիտական գրականության վրա արդյունավետ աշխատելու և իր մտքերն ընդունված գիտական ոճով շարադրելու գործում: Այլ խոսքով ասած, կուրսային և ավարտական աշխատանքների կատարումն ու պաշտպանությունը ապագա մասնագետի առաջին փորձերն են գիտական ապարնելում: Ուստի, այդ աշխատանքների կազմակերպումը՝ թեմաների ընտրությունից և բաշխումից մինչև պաշտպանությունը, պետք է լինի համապատասխան ամբիոնի ուղարկության կենտրոնում, նրա վերահսկողության տակ:

Գիտական հետազոտության, մասնագորապես, կուրսային և ավարտական աշխատանքների հաջողությունը պայմանավորված է ոչ միայն հեղինակի (տվյալ դեպքում՝ ուսանողի) տնական պատրաստվածությամբ և մակարդակով, այլև մեծապես կախված է հետազոտության թեմայի ճիշտ ընտրությունից: Այս տնականից խիստ կարևորվում է ամբիոնի գործունեությունը՝ կուրսային և ավարտական աշխատանքների բանկ (շտեմարան) ստեղծելու ուղղությամբ: Պետք է ի նկատի ունենալ, որ ուսանողներից շատ քչերը կարող են ինքնուրույնաբար ընտրել գիտական հետազոտության հարմար թեմա:

Հարկ է նշել, որ մինչև վերջին ժամանակները պատշաճ ուղարկություն չենք դարձրել ամբիոնների գործունեության այդ կարևոր բնագավառի վրա (համեմայն դեպք այդպես էր վիճակը մաթեմատիկայի ամբիոնում): Թեմաների ընտրությունն ու բաշխումը թողնված էր հիմնականում գիտական ղեկավարների հայեցողությանը, ուսանողը թեմայի ընտրության լայն հնարավորություն գրեթե չուներ: Ծառ դեպքերում ուսանողին տրվում էր միայն թեմայի

անվանումը, նշվում մեկ կամ երկու գրականություն, չկար աշխատանքի կատարման ընդարձակ մանրամասնված պլան, հիմնավորված չէր թեմայի կարևորությունը և աշխատանքի կոնկրետ նպատակը:

Այս ամենի արդյունքում ուսանողը պաշտպանության էր ներկայացնում մի աշխատանք, որը համարյա չէր տարբերվում պարտադիր ուսումնական ծրագրով նախատեսված նյութից, հասնել էլ ներկայացնում էր ոչ գրագետ հայերենով գրված թարգմանություն:

2003-04 ուս. տարվանից սկսած մաթեմատիկայի ամբիոնը լրջորեն ձեռնամուխ է եղել կուրսային և ավարտական աշխատանքների թեմատիկայի մշակման և թեմաների բանկ ստեղծելու գործին: Ներկայումս այդ ուղղությամբ կատարված է բավականին ծավալուն աշխատանք: Հիմնովին վերանայվել և արդիականացվել է կուրսային և ավարտական աշխատանքների թեմատիկան, մշակվել են նոր թեմաներ: Մինչ այդ Երևանի պետական համալսարանի, Խ./Լեռվանի անվան պետական մանկավարժական համալսարանի և Մ.Վ. Լոմոնոսովի անվան Մոսկվայի պետական համալսարանի մաթեմատիկական ամբիոններից նախապես ձեռք ենք բերել համապատասխան նյութեր, որոնք էականորեն վերանայվել, կոնկրետացվել և տեղայնացվել են հաշվի առնելով մեր ուսանողության պատրաստվածության մակարդակը, գոյություն ունեցող գիտական և ուսումնական գրականության բազան, ապագա մասնագետների աշխատանքային գործունեության քննադատները:

Ամբիոնի կողմից մշակված թեմաների մեծ մասը բավականաչափ ընդգրկում է, որպեսզի այն ծառայի մասամբ որպես կուրսային աշխատանք, իսկ ամբողջությամբ՝ ավարտական աշխատանք: Կան նաև թեմաներ, որոնք հետագայում կարող են հիմք հանդիսանալ մագիստրոսական թեզի համար:

Մեր կարծիքով կուրսային և ավարտական աշխատանքների կազմակերպման աչափսի փուլային մոտեցումը (կուրսային → ավարտական → մագիստրոսական) ամփոփվել նպատակահարմարն ու արդյունավետն է, քանի որ այն հնարավորություն է տալիս ուսանողին գիտահետազոտական աշխատանքի պարզ՝ ծեփերատային ձևը աստիճանաբար զարգացնելու ավելի լուրջ գիտական ուսումնասիրության: Բացի դրանից աշխատանքների կազմակերպման նման ձևը ուսանողին թույլ է տալիս իր ազնապ թեզի վրա աշխատելու անընդմեջ՝ սկսած երկրորդ կուրսից:

Կուրսային և ավարտական աշխատանքների թեմատիկան կազմելիս քննականաբար հաշվի է առնվել այն հանգամանքը, որ ամբիոնի շրջանավարտների հիմնական մասը աշխատելու է ուսուցչի մասնագիտությամբ: Ուստի, թեմաների մի մասը վերաբերում է մաթեմատիկայի դպրոցական դասընթացի գիտական հիմքերին և մաթեմատիկայի դասավանդման հիմնահարցերին:

Հաշվի առնելով, որ առավել ընդունակ ուսանողների մի մասը ուսումը շարունակելու է ասպիրանտուրայում ամբիոնը մշակել է նաև այնպիսի թեմաներ, որոնք ընդհանուր մաթեմատիկական զարգացմանը հարմար են արհեստավարժության թացի ընդգրկում են տեսական բնույթի ավելի լուրջ խնդիրներ, որոնց հաղթահարումը թույլ է տալիս ընդունալ մոտեմալու գիտական ոչ մեծ հայտնագործության շննին:

2007-08 ուս. տարում մաթեմատիկայի ամբիոնի կողմից ուսանողներին առաջադրված կուրսային և ավարտական (դիպլոմային) աշխատանքների թեմաների հետ միասին տրվել է նաև հստակ պարզաբանումներ (գրավոր ձևով), որոնք ընդգրկում են.

ա. թեմայի կարևորության (ավտուարության) հիմնավորումը և աշխատանքի նպատակը:

բ. աշխատանքին վերաբերող անհրաժեշտ տեսական դրույթների ցանկը և մաթեմատիկայի այն բաժինների անվանումները, որոնց ինտգրությունը պարտադիր է աշխատանքը հաջողությամբ կատարելու համար:

գ. աշխատանքի մանրամասնված, ընդարձակ պլանը:

դ. աշխատանքի կատարման փուլերը կուրսային → ավարտական →

(որոշ դեպքերում, նաև՝ մագիստրոսական);

ե. անհրաժեշտ գրականության ցանկը:

Ստորև ներկայացնում ենք կուրսային և ավարտական աշխատանքների թեմաների երկու նմուշ:

Նմուշ 1

(Կուրսային → ավարտական → մագիստրոսական)

Թեմա: Հաջորդականությունների գուգամիտության լոշիի սկզբունքը

I. Թեմայի կարևորությունը և աշխատանքի նպատակը

Մաթեմատիկական անալիզի հիմնական ոչ հանրահաշվական գործողությունը, որի հիմքի վրա կառուցվում են դիֆերենցիալ և ինտեգրալ հաշիվները, սահմանային անցման գործողությունն է: Այդ գործողության պարզագույն ձևը հաջորդականության սահմանն է, որի միջոցով հետագայում սահմանվում են նաև սահմանային անցման այլ ձևեր: Իսկ հաջորդականությունների սահմանների տեսության հիմնական թեորեմը լոշիի գուգամիտության սկզբունքն է: Եվ չնայած լոշիի սկզբունքը անալիզի դասական թեորեմներից է, այն ունի կարևոր ընդհանրացումներ և լայն կիրառություններ: Գոյություն ունեն տեսական բնույթի բազմաթիվ խնդիրներ, որոնք անմիջականորեն առնչվում են լոշիի սկզբունքի հետ: Դրանց լուծումը ահաանցում է ոչ միայն տեսական նյութի խորը իմացություն, այլև ստեղծագործական ունակություններ:

Աշխատանքը միջրված է հաջորդականությունների գուգամիտության լոշիի սկզբունքին և նրա գործնական ու տեսական կիրառություններին:

Աշխատանքի նպատակն է.

1. Սահմանել ֆունդամենտալ հաջորդականության հասկացությունը R^k -ում, ապացուցել լոշիի թեորեմը իրական թվերի ֆունդամենտալ հաջորդականությունների գուգամիտության մասին: Լուծել գործնական և տեսական բնույթի մի շարք խնդիրներ:

2. Սահմանել մետրիկական տարածության հասկացությունը: Ընդհանրացնել լոշիի գուգամիտության սկզբունքը մետրիկական տարածությունում: Սահմանել լրիվ մետրիկական տարածության հասկացությունը, բերել լրիվ մետրիկական տարածությունների օրինակներ և ժխտորինակներ: Ապացուցել մետրիկական տարածությունների համալրման վերաբերյալ թեորեմը: Լուծել տեսական բնույթի մի շարք խնդիրներ:

3. Կառուցել իրական թվերի R բազմությունը՝ ռացիոնալ թվերի ֆունդամենտալ հաջորդականությունների միջոցով: Ակնարկային կարգով ներկայացնել իրական թվերի բազմության կառուցման այլ մոտեցումներ՝ Էդմունդսոնի հատույթներ և անվերջ տասնորդական կոտրակներ: Ապացուցել իրական թվերի տարբեր մոդելների հոմոմորֆիզմի վերաբերյալ թեորեմը:

II. Թեմայի կատարման համար անհրաժեշտ տեսական դրույթները

Աշխատանքը կատարելու համար հնդինակը պետք է ունենա անհրաժեշտ տեսական գիտելիքներ մաթեմատիկայի հետևյալ բաժիններից՝ մաթեմատիկական անալիզ (սահմանների տեսություն), ֆունկցիոնալ անալիզ (մետրիկական և լրիվ մետրիկական տարածություններ), իրական անալիզ (Հափի տեսություն, Լեբեգի ինտեգրալ), տեսական թվաբանություն (թվային համակարգեր):

III. Գրականություն

1. Г. М. Фихтенгольц, Курс дифференциального и интегрального исчисления, том 1, Наука, 1969.
2. В. А. Зорич, Математический анализ, том I, М., Наука, 1981.
3. Ռուդին Ու., մաթեմատիկայի անալիզի հիմունքներ, Սր., Լույս, 1975:
4. Б. А. Ильин, Э. Г. Позняк, Основы математического анализа, М., Наука, 1979, часть I.
5. А. Н. Колмогоров, С. В. Фомин, Элементы теории функций и функционального анализа, М., Наука, 1981.
6. Л. А. Люстерник, В. И. Соболев, Краткий курс функционального анализа, М., Высшая школа, 1982.
7. А. А. Кириллов, А. Ю. Гивипияни, Теория и задачи функционального анализа, М., Наука, 1979.
8. Л. Д. Кудрявцев, А. Д. Кутасов, В. Н. Чехлов, М. И. Шабунип, Сборник задач по математическому анализу, т. I, М., Наука, 1984.
9. Գերշայն Գ. Գ., Գալստյան Լ. Հ. և ուրիշներ, Մաթեմատիկական անալիզի խնդրագիրք, I, II, Երևան, 1998:
10. Н. Т. Демилов, Основания арифметики, Учпедгиз, М., 1963.
11. Б. Б. Немыцкий, М. И. Слудская, А. Н. Черкасов, Курс математического анализа, т. I, М., Наука, 1961.
12. М. Рид, Б. Саймон, Методы современной математической физика, т. I Функциональный анализ, Изд. Мир, М., 1977.

IV. Աշխատանքի մանրամասնված պլանը

§1. Թվային հաջորդականությունների գույքամիտության կոշիի սկզբունքը
Գրականություն [1], [2], [3], [4], [8], [9]

1.1. Ֆունդամենտալ հաջորդականություններ R^1 -ում, հատկությունները:

ա) ֆունդամենտալ հաջորդականության սահմանումը: Օրինակներ և ժխտօրինակներ:

բ) Ֆունդամենտալ հաջորդականության սահմանափակությունը: Բերել սահմանափակ հաջորդականության օրինակ, որը ֆունդամենտալ չէ:

գ) Չուզամետ հաջորդականության ֆունդամենտալ լինելը: Բերել Q -ում ֆունդամենտալ հաջորդականությունների օրինակներ, որոնք Q -ում չուզամետ չեն:

դ) Ապացուցել, որ եթե x_n և y_n հաջորդականություններ ֆունդամենտալ են, ապա ֆունդամենտալ են նաև cx_n , $x_n \pm y_n$ և $x_n \cdot y_n$ հաջորդականությունները:

ե) Դիցուք x_n հաջորդականությունը ցանկացած m , $n \in N$ թվերի համար բավարարում է

$|x_m - x_n| > \frac{1}{n}$ պայմանին: Ապացուցել, որ x_n -ը սահմանափակ չէ: [3]

1.2. Կոշիի գույքամիտության սկզբունքը, կիրառություններ:

ա) Ձևակերպել և ապացուցել Կոշիի թեորեմը:

բ) Օգտվելով Կոշիի գույքամիտության սկզբունքից՝ ապացուցել հետևյալ հաջորդականությունների գույքամիտությունը [9]

$$1. x_n = \sum_{k=1}^n \frac{\sin k}{2^k}; \quad 2. x_n = \sum_{k=1}^n \frac{1}{k^2}; \quad 3. x_n = \sum_{k=1}^n \frac{\cos k!}{k(k+1)}; \quad 4. x_n = \sum_{k=1}^n aq^{k-1}, \quad |q| < 1.$$

գ) Օգտվելով Կոշիի գույքամիտության սկզբունքից՝ ապացուցել, որ հետևյալ հաջորդականությունները տարամետ են [9]

$$1. x_n = \sum_{k=1}^n \frac{1}{k}; \quad 2. x_n = \frac{n \cos \pi n - 1}{2\pi}; \quad 3. x_n = (-1)^n \left(1 + \frac{1}{n} \right)^n.$$

դ) Չուզամետ է արդյոք x_n հաջորդականությունը, եթե ցանկացած p բնական թվի համար

$$\lim_{n \rightarrow \infty} (x_{n+p} - x_n) = 0: \text{ Բերել համապատասխան օրինակ: [9]}$$

ե) x_n հաջորդականությունն անվանում են սահմանափակ փոփոխության հաջորդականություն, եթե գոյություն ունի այնպիսի C հաստատուն, որ կամայական n -ի համար
$$\sigma_n = |x_2 - x_1| + |x_3 - x_2| + \dots + |x_n - x_{n-1}| < C:$$

Ապացուցել, որ սահմանափակ փոփոխության հաջորդականությունը գույքամետ է: Բերել x_n հաջորդականության օրինակ, որը գույքամետ է, բայց սահմանափակ փոփոխության չէ: [9]

զ) Ապացուցել, որ մոնոտոն և սահմանափակ հաջորդականությունն ունի սահմանափակ փոփոխություն:

§2. Կոշիի գույքամիտության սկզբունքի ընդհանրացումը
Գրականություն [3], [5], [6], [7], [8], [12]

2.1. Մետրիկական տարածության սահմանումը: R^n , R^n , R_1^n , $C[a, b]$, ℓ_2 , $C_2[a, b]$, m տարածությունները: Ֆունդամենտալ հաջորդականության սահմանումը մետրիկական տարածության մեջ: Լրիվ մետրիկական տարածությունները:

2.2. Ապացուցել R^n , R_m^n , R_1^n , $C[a, b]$, ℓ_2 , m մետրիկական տարածությունների լրիվությունը:

2.3. Յուրյց տալ, որ $C_2[a, b]$ տարածությունը լրիվ չէ:

2.4. Դիցուք $\{p_n\}$ և $\{q_n\}$ թվային հաջորդականություններ ֆունդամենտալ են X մետրիկական տարածությունում: Ապացուցել, որ $\rho(p_n, q_n)$ հաջորդականությունը գույքամետ է: [3]

2.5. Ապացուցել, որ հետևյալ մետրիկական տարածությունները լրիվ չեն. [7]

ա) իրական թվերի բազմությունը $\rho, (x, y) = |\arctg x - \arctg y|$ մետրիկայով;

բ) իրական թվերի բազմությունը՝ $\rho_2(x, y) = |e^x - e^y|$ մետրիկայով;

գ) հանրահաշվական բազմանդամների բազմությունը՝ $\rho_1(P, Q) = \max_{0 \leq x \leq 1} |P(x) - Q(x)|$

մետրիկայով;

դ) հանրահաշվական բազմանդամների տարածությունը՝ $\rho_2(P, Q) = \int_0^1 |P(x) - Q(x)| dx$

մետրիկայով:

2.6. Ապացուցել մետրիկական տարածությունների համալրման վերաբերյալ թեորեմը: [5], [12]

§3. Իրական թվերի բազմության կառուցումը ժազհոնալ թվերի ֆունդամենտալ հայտորդականությունների միջոցով:

Գրականություն՝ [11], [10], [4], [1], [2]

4.1. Առաջինալ թվերի ֆունդամենտալ հայտորդականությունների հատկությունները

ա) Ապացուցել, որ ժազհոնալ թվերի ֆունդամենտալ հայտորդականությունը սահմանափակ է ժազհոնալ թվով:

բ) Ապացուցել, որ ժազհոնալ թվերի ֆունդամենտալ հայտորդականությունների գումարը, տարբերությունը և արտադրյալը ժազհոնալ թվերի ֆունդամենտալ հայտորդականություն է:

գ) Ձրոյական հայտորդականություններ Q -ում, դրանց հատկությունները:

դ) Առաջինալ թվերի դրական և բացասական ֆունդամենտալ հայտորդականություններ: Թվաբանական գործողություններ դրանց հետ:

ե) Առաջինալ թվերի ֆունդամենտալ հայտորդականությունների համարժեքությունը:

Համարժեքության դասեր: Ձրոյական, դրական և բացասական դասեր:

4.2. Իրական թվերի բազմության արսիտները:

4.3. Իրական թվի սահմանումը Q բազմության ֆունդամենտալ հայտորդականությունների համարժեքության դասերի միջոցով: Արսիտների ստուգումը:

4.4. Իրական թվերի արսիտներին բավարարող այլ բազմություններ (մոդելներ): Իրական թվերի արսիտներին բավարարող բազմությունների հոմոմորֆիզմը:

V Աշխատանքի կատարման փուլերը

Առաջին փուլ: Լուրսային աշխատանք: Ընդգրկում է §1-ի նյութը:

Երկրորդ փուլ: Բակալավրիատի ավարտական աշխատանք: Ընդգրկում է §2-ի նյութը:

Երրորդ փուլ: Մագիստրոսական թեզ: §1-ի, §2-ի հետ միասին ընդգրկում է §3-ի նյութը:

Նմուշ 2

(Լուրսային → ավարտական)

Ուսուցչի մասնագիտությունն ընտրած ուսանողի համար

Թեմա Գունկցիայի Լքստրեմումները

1. Թեմայի կարևորությունը և աշխատանքի նպատակը

Արկրաչափության, ֆիզիկայի, տնտեսագիտության և գիտության այլ բնագավառների շատ խնդիրներում հարկ է լինում գտնել մի որոշ մեծության մեծագույն կամ փոքրագույն արժեքը, որ ֆունկցիոնալ կախվածությամբ կապված է մի այլ մեծության հետ: Այդպիսի խնդիրների լայն տարածվածությունը և կիրառական մեծ նշանակությունը հանդիսացել են այն հիմնական պատճառներից մեկը, որոնք խթանել են դիֆերենցիալ հաշվի, ամբողջությամբ նաև, մաթեմատիկական անալիզի զարգացումը: Պատահական չէ, որ այդ խնդիրների ուսումնասիրմանը արտաշնորհ տեղ է հատկացվում ոչ միայն մաթեմատիկայի համալսարանական ծրագրերում, այլ նաև մաթեմատիկայի դպրոցական ծրագրերում: Այդ խնդիրների ուսումնասիրումը կարևորվում է նաև սիլաբարակայնական կապերի և սովորողների մոտ մաթեմատիկայի նկատմամբ հետաքրքրության բարձրացման տեսանկյուններից:

Աշխատանքը նվիրված է ֆունկցիայի Լքստրեմումների հետազոտմանը, մեծագույն և փոքրագույն արժեքների հետ կապված զանազան տեքստային խնդիրների լուծմանը:

Նման թեմայով Լուրսային և ավարտական աշխատանքների կատարումը մաթեմատիկայի ապագա ուսուցչի համար միանգամայն տեղին է և նպատակահարմար:

Աշխատանքի նպատակն է.

1) Մասնանել մեկ փոփոխականից կախված թվային ֆունկցիայի Լքստրեմումները: Ստանալ Լքստրեմումների գոյության անհրաժեշտ և բավարար պայմաններ: Մշակել Լքստրեմումների

հետազոտման հարմար հաշվեկանոն: Լուծել բավականաչափ վարժություններ և խնդիրներ, դրանց թվում նաև՝ մաթեմատիկայի դպրոցական դասընթացի առավել դժվարին խնդիրները:

2. Սահմանել ֆունկցիայի փոքրագույն և մեծագույն արժեքների հասկացությունները: Ապացուցել Վայերշտրասի թեորեմները փակ միջավայրում անընդհատ ֆունկցիաների փոքրագույն և մեծագույն արժեքների վերաբերյալ: Սահմանել ծայրային էքստրեմումի հասկացությունը: Մշակել հատվածում անընդհատ ֆունկցիայի փոքրագույն և մեծագույն արժեքների որոնման հաշվեկանոնը: Լուծել համապատասխան վարժություններ և խնդիրներ թե՛ բուհ-ական և թե՛ դպրոցական խնդրագրքից:

3. Մշակել ֆունկցիայի փոքրագույն և մեծագույն արժեքների վերաբերյալ տեքստային խնդիրների լուծման սխեման: Լուծել առնվազն 10 խնդիր՝ ընտրված տարբեր բնագավառներից՝ երկրաչափություն, ֆիզիկա, տնտեսագիտություն և այլն: Վերլուծել նման խնդիրների լուծման ժամանակ աշակերտների հաճախակի թույլ տված սխալների պատճառները և փորձել նշել դրանց վերացման ուղիները:

4. Ներկայացնել սեփական նկատառումները՝ ներկայումս գործող դասագրքերում «Ածանցյալի կիրառություններ» թեմայի շարադրման վերաբերյալ: Փորձել կատարել դիտողություններ և առաջարկություններ նշված թեման միջնակարգ դպրոցում դասավանդելու մեթոդիկայի վերաբերյալ:

II. Աշխատանքի կատարման պլանը

§1. Լուկա էքստրեմումներ: Գոյություն անհրաժեշտ պայմաններ և բավարար պայմաններ:

Դրականություն [1], [2], [3], [4]

Խնդիրներ §1-ի վերաբերյալ

1.1. Հետազոտել հետևյալ ֆունկցիաների էքստրեմումները [5], [1]

$$\text{ա) } y = \left(1 + x + \frac{x^2}{2!} + \dots + \frac{x^n}{n!}\right)e^{-x}, \quad n \in \mathbb{N}; \quad \text{բ) } y = x^m - (1-x)^n, \quad m, n \in \mathbb{N};$$

$$\text{գ) } y = x^3(1-x)^3 \quad \text{դ) } f(x) = (x-x_0)^n \cdot \varphi(x), \quad n \in \mathbb{M}, \quad x_0 \text{ կետում:}$$

$$\text{ե) } y = \sin^3 x + \cos^3 x \quad \text{զ) } y = x^{\frac{2}{3}} - (x^2 - 1)^{\frac{1}{3}}$$

$$1.2. \text{Դիցուք՝ } f(x) = \frac{P(x)}{Q(x)}, \quad f'(x) = \frac{P_1(x)}{Q^2(x)} \text{ և } x_0 \text{-ն } f(x) \text{ ֆունկցիայի ստացիոնար կետ}$$

է: Ապացուցել, որ $\operatorname{sgn} f''(x_0) = \operatorname{sgn} P_1'(x_0)$: Ենթադրվում է, որ $P_1'(x_0)$ -ն գոյություն ունի և $Q(x)$ -ն անընդհատ է: [5]

1.3. Դիցուք՝

$$f(x) = \begin{cases} e^{-\frac{1}{x^2}}, & \text{երբ } x \neq 0, \\ 0, & \text{երբ } x = 0 \end{cases} \quad g(x) = \begin{cases} xe^{-\frac{1}{x^2}}, & \text{երբ } x \neq 0, \\ 0, & \text{երբ } x = 0 \end{cases}$$

Ապացուցել, որ $f(x)$ ֆունկցիան $x=0$ կետում ունի մինիմում, իսկ $g(x)$ ֆունկցիան $x=0$ կետում էքստրեմում չունի (չնայած $f^{(n)}(0) = g^{(n)}(0) = 0$):

Կառուցել այդ ֆունկցիաների գրաֆիկների էսքիզները: [5]

1.4. Գտնել պարամետրաների տեսքով տրված $y = f(x)$ ֆունկցիայի էքստրեմումները:

$$\begin{cases} x = \varphi(t) = t^5 - 5t^3 - 20t + 7, \\ y = \psi(t) = 4t^3 - 3t^2 - 18t + 3, \end{cases} \quad (-2 < t < 2) \quad [6]$$

1.5. Բարձր կարգի ածանցյալների միջոցով հետազոտել ֆունկցիայի էքստրեմումները.

$$\text{ա) } f(x) = e^x + e^{-x} + 2\cos x; \quad [1] \quad \text{բ) } f(x) = \cos x - 1 + \frac{x^2}{2!} - \frac{x^3}{3!}, \quad x_0 = 0 \text{ կետում: } [6]$$

1.6. Գտնել $f(t) = \frac{1+t}{3+t^2}$ ֆունկցիայի ստորին և վերին նգրները $x < t < +\infty$ միջակայքում: [5]

1.7. Ապացուցել, որ եթե $f(x)$ ֆունկցիան ոչ բացասական է, ապա $F(x) = cf^2(x)$, ($c > 0$) ֆունկցիան ունի նույն էքստրեմումի կետերը, որ ունի $f(x)$ -ը: [4]

1.8. Ապացուցել, որ եթե $\varphi(x)$ ֆունկցիան մոնոտոն աճող է R -ում, ապա $f'(x)$ և $\varphi(x)$ ֆունկցիաներն ունեն միևնույն էքստրեմումի կետերը: [5]

1.9. Գտնել ֆունկցիայի էքստրեմումները: [7]

ա) $y = |x^2 - 2x|$; բ) $y = 3x^2 - 2x + |x + 1|$; գ) $y = 2x^3 = 3x^2 - 6x - 6|x - 1|$

1.10. Տույց տալ, որ ֆունկցիան էքստրեմումի կետեր չունի: [7]

ա) $y = \frac{4}{3}x^3 - 6x^2 + 10x - \frac{1}{2}\sin 2x$; բ) $y = x^5 + 4x^7 - 9$; գ) $y = \cos x - x$

§2. Փակ միջակայքում անընդհատ ֆունկցիաների մեծագույն և փոքրագույն արժեքները: Մայրային էքստրեմումներ:

Գրականություն [1], [2], [3], [4]

Խնդիրներ և վարժություններ §2-ի վերաբերյալ

2.1. Գտնել ֆունկցիայի մեծագույն և փոքրագույն արժեքները նշված միջակայքում: [6]

ա) $f(x) = 2x^3 - 3x^2 - 12x + 1$, $[-2; \frac{5}{2}]$ բ) $f(x) = x^3 \ln x$, $[1; 2]$

գ) $f(x) = \sqrt{(1-x^2)(1+2x^2)}$; $[-1; 1]$ դ) $f(x) = \arccos x^2$; $[\frac{-2}{\sqrt{2}}; \frac{\sqrt{2}}{2}]$

ե) $f(x) = \sin x \cdot \sin 2x$, $(-\infty; +\infty)$ զ) $f(x) = a \sin 3x + b \cdot \cos 3x + D$, $(-\infty; +\infty)$

է) $f(x) = \sqrt{12-x^2-4x} - |x+2|$ $D(7)$ -ում ը) $f(x) = 2^{10x-x^2-21} + \frac{1}{2+3|x-5|}$; $(-\infty; +\infty)$

2.2. Տրված են m և n դրական թվերը: Գտնել $x^m + x^n$ արտահայտության փոքրագույն արժեքը, եթե $x + y = a$:

2.3. Տրված են m և n դրական թվերը: Գտնել $x^m - x^n$ ($x > 0, y > 0$) արտահայտության մեծագույն արժեքը, եթե $x + y = a$:

2.4. a և b կիսաառանցքներով էլիպսի տանել այնպիսի շոշափող, որ կոորդինատային առանցքների հետ նրա հատումից առաջացած եռանկյունն ունենա փոքրագույն մակերես:

§3. Տեքստային խնդիրներ ֆունկցիայի մեծագույն և փոքրագույն արժեքները գտնելու վերաբերյալ

Գրականություն [4], [6], [7], [8]

Խնդիրներ §3-ի վերաբերյալ

1.1. R շառավղով շրջանագիծը շոշափում է հավասարաթուն եռանկյան սրույնը, իսկ կենտրոնը գտնվում է հիպի վրա: Ինչպիսի՞ փոքրագույն սրույն կարող է ունենալ այդ եռանկյունը: [7]

1.2. ABC եռանկյունը ներգծած է $AKPQ$ գուգահեռագիծ. որն ունի մեծագույն մակերես: Գտնել այդ գուգահեռագծի կողմերը, եթե $AB = c$, $AC = b$: [7]

1.3. A անկյան կողմերի վրա E և F կետերն ընտրված են այնպես, որ AEF եռանկյունն ունի S մակերես: Ինչպիսի՞ փոքրագույն արժեք կարող է ունենալ EF հատվածի երկարությունը, եթե $\angle A = 60^\circ$: [7]

1.4. Եռանկյան երկու կողմերից յուրաքանչյուրն ունի a երկարություն: Գտնել երրորդ կողմի երկարությունը այնպես, որ եռանկյանը ներգծած շրջանագծի շառավղի լինի ամենամեծը: [7]

1.5. Ուղղանկյուն եռանկյանը ներգծած է ուղղանկյուն, որի երկու զագաթները գտնվում են ներքնագծի վրա, մնակյան՝ էջերի վրա: Գտնել ուղղանկյուն մակերեսի մեծագույն արժեքը, եթե ներքնագիծը 8 է, իսկ սուր անկյուններից մեկը՝ 60° : [7]

1.6. R շառավղով գնդային մակերևույթին ներգծված է կանոնավոր քառանկյուն բուրգ: Ինչպիսի՞ն պետք է լինի բուրգի բարձրությունը, որպեսզի բուրգի ծավալը լինի մեծագույնը: [8]

1.7. R շառավղով կիսագնդի ձև ունեցող թափի մեջ գցել են ℓ նրկարությանը համասեռ ծող: Համարելով, որ ծողի և թափի միջև շփման ուժ չկա և թափն ամրացված է, գտնել ծողի հավասարակշռության դիրքը: Անդրունել՝ $2R \leq \ell \leq 4R$: [8]

1.8. m_0 սկզբնական զանգված ունեցող անձրևի կաթիլը ծանրության ուժի ազդեցության տակ կատարում է անկում՝ հավասարաչափ գոլորշիանալով այնպես, որ զանգվածի կորուստն ուղիղ համեմատական է ժամանակին (համեմատականության գործակիցը k է): Անկման սկզբից քանի՞ վայրկյան հետո կաթիլի կինետիկ էներգիան կլինի մեծագույնը և որքա՞ն է այն (օդի դիմադրությունը հաշվի չառնել): [8]

1.9. Սենյակում ի՞նչ բարձրության վրա պետք է կախել էլեկտրական լամպը, որպեսզի հատակի վրա նրա ուղղանկյուն պրոյեկցիայից ℓ հեռավորության վրա գտնվող M կետում յուսավորվածությունը լինի ամենամեծը: [8]


1.10. Ձգված զսպանակի պոտենցիալ էներգիան արտահայտվում է $u = \frac{1}{2} kx^2$ բանաձևով,

ԼԵՈՒՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՐԻ ՀԱՌՆԱՅՈՒՄ ՏԱՐԱԾՎԱԾ ՍՈՎՈՐԱԿԱՆ ՈՋՆԻՆԵՐԻ
ERINACEUS EUROPAEUS LINNAEUS 1758 ԷՆՈՒՈԳԻՆԱՅԻՆ ԵՎ ՀԵՄՈՂԻՆԱՄԻԿԱԿԱՆ
ՅՈՒՅԱՆԻՇՆԵՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐ

Վ.Տ Հայրապետյան, Մ.Ռ Գրիգորյան, Ա.Լ.Գրիգորյան

Աշխատանքում քննարկվում է սովորական ոզնիների էկոլոգիական, էթոլոգիական առանձնահատկություններին և կենսաբանությանը նվիրված որոշ հարցեր:

Առաջին անգամ ներկայացնում ենք Ղարաբաղի ֆաունայում տարածված սովորական ոզնիների ավտիվության տիպերը և հեմոդինամիկական ցուցանիշների փոփոխությունները՝ կախված ուղղահայաց գոտիականությունից և սեզոններից:

Կաթնասունների ֆաունան Լեռնային Ղարաբաղում ներկայացված է հետևյալ կարգերով՝ միջատակներն-Insectivora, ձեռքաթևավորներ-Chiroptera, կրծողներ-Rodentia, նապաստակակերպներ-Logomorphia, գիշատիչներ-Carnivora և գույգ կծղակավորներ- Artiodactula (է.Գ. Յավրույան, Վ.Տ. Հայրապետյան, 2003, 2003Ա):

Լեռնային Ղարաբաղի կաթնասունների ֆաունան լուրջ հետազոտությունների կարիք ունի: Այստեղ չկան վերջնագրված տվյալներ կաթնասունների էկոլոգիայի, բազմացման, աճի, միգրացիայի ուղիների, մակաբույծների, տեր-մակաբույծ, գիշատիչ-զոի փոխհարաբերությունների և ընդհանրապես կենսաբանությանը վերաբերող մի շարք տեսական ու գործնական նշանակություն ունեցող հարցերի վերաբերյալ: Այս առումով որպես հետազոտման օբյեկտ ենք ընտրել մեր ֆաունայում տարածման լայն արևալ ունեցող տեսակներից մեկի՝ սովորական ոզնուն- *Erinaceus europaeus* L.: Ոզնիների ընտանիքը ընդգրկում է ժամանակակից 8 ցեղեր և 16 տեսակներ, որոնք բաժանվում են երկու ենթաընտանիքների՝ հիմնուրներ –*Echinosoricidae* և ոզնիներ –*Erinaceus* (Россолинский О.И., Павлов И.Я., 1987; 1997):

Աշխատանքի համար որպես նյութ է ծառայել ինչպես ԼՂՀ տարբեր շրջաններից որսված ոզնիները, այնպես էլ մեր անձնական կոլեկցիայի թագ և չոր նմուշները: Ոզնիների էկոլոգիան ուսումնասիրելու համար Մարտակերտի և Ասկերանի շրջաններում ընտրել ենք ստացիոնարներ (քարտեզ 1): Կենդանիների կերի կազմը, էկոլոգա- էթոլոգիական առանձնահատկությունները ուսումնասիրելու համար նրանց պահել ենք նաև կենդանակեցադասնրում, ինչպես նաև դիտարկումներ ենք կատարել Իվանյան գյուղում՝ տնտեսված հողատարածքներում և բերքատու այգիներում: Էկոլոգիական դիտարկումները կատարել ենք կենդանաբանության մեջ կիրառվող դասական մեթոդներով, որոնք ժամանակին առաջարկել են Նովիկովը, Նաումովը (Новиков Г.А., 1949; Наямов Н.П., 1963): Ոզնիների համար սնունդ հանդիսացող միջատների տեսակային կազմը որոշելու համար օգտագործել ենք միջատաբանական որոշիչներ (Բաղդասարյան Բ.Ա., 1965, շՁԳ՝ 4 ն.թ., Арутюнян К.М., Абрамцян Б.Т., 2007):

Կապված ոզնիների ուղղահայաց գոտիականությամբ տարածվածության հետ ՊԲ Իվանյանի գիմնոթական հոսպիտալի կլինիկական լաբորատորիայում որոշել ենք այս կենդանիների հեմոդինամիկական ցուցանիշների փոփոխությունները, հաշվի առնելով նաև սեզոնայնությունը: Արյան հետաքննությունը և ձևավոր տարրերի հաշվարկը կատարվել է կենսաբանության մեջ ընդունված դասական մեթոդներով (Միհայսյան. Ս Մ., Հակոբյան Ն.Ս. և ուրիշներ, 2003):

Սովորական ոզնիները մեր ֆաունայում զբաղեցնում են տարբեր լանդշաֆտային գոտիներ, սկսած ծովի մակերևույթից 350-400 մ բարձրություններից մինչև 2000-2300 մ բարձրությունները

(Հայրապետյան, 2001): Ուստի հաշվի առնելով նրանց տարածման լայն արեալը առաջարկում ենք Ղարաբաղի ֆաունայում սովորական ոգնուս համարել ֆունային:

Որքան էլ առանձնակալան ինի սովորական ոգնիների տարածման արեալը, այնուամենայնիվ նրանք ունեն իրենց բնադրման սիրելի վայրերը, դրանք են գետերի, ջրամբարների ափամերձ տարածքները, անտառների բացատները, այգիները, բանջարանոցները և այլն: Ոգնիները միայնակ կենդանիներ են և վատ են տանում իրենց զնդակիցների ներկայությունը: Ակտիվ պահպանում են իրենց որսատարածքները, որոնց մեծությունը կարող է կազմել մինչև 2-2,5 հա: Որսատարածքի մեծությունը պայմանավորված է տվյալ տարածքում կերի առատությամբ և կազմով: Այս կենդանիները վարում են մթնշաղագիշերային կենսակերպ, երբևի՜ն տարվա տաք և մեղմ ժամանակներին հայտնվում են նաև օրվա լուսավոր ժամերին: Մեր դիտարկումների արդյունքում պարզվել է, որ ոգնիների ակտիվության տիպերը կարելի է բաժանել մի քանի խմբերի.

1. Վաղ մթնշաղային՝ ժամը 7³⁰ և տևում է մինչև 10⁰⁰, որից հետո թաքնվում են:
2. Գիշերային, սկսվում է ժամը 11³⁰ և տևում մինչև 03⁰⁰:
3. Վաղ առավոտյան՝ ժամը 04⁰⁰ կարող է տևել մինչև 7-7³⁰:

Նշված ակտիվության տիպը այս կենդանիների կենսակերպում բնորոշ է մայիս ամսից մինչև վաղ աշուն, որից հետո երեկոյան և գիշերային տիպի ակտիվությունը փոխվում է զերեկայինի: Ոգնիների ակտիվության տիպը պայմանավորված է նաև նրանց համար սնունդ հանդիսացող միջատների, կրծողների ակտիվությամբ:

Ոգնիները ձմեռային բնրը պատրաստում են խիտ մացառուտներում, թափված տերևների տակ, հարթվատային կիսափշեակներում, ընկած ծառերի սնամեջ բնրում և այլն: Ամառային բնր ոգնիները չեն կառուցում և թաքնվում են ցանկացած թաքստոցներում: Մեր դիտարկումների արդյունքում պարզվել է, որ ոգնիները իրենց նախկին թաքստոցներ չեն վերադառնում: Ամառային բնր կառուցում են միայն բազմացման շրջանում և բույն վերադառնում միայն ձագերին կաթով կերակրելու ժամանակ, որը տևում է 1-1,5 ամիս:

Բազմացման շրջանը սկսվում է ձմռային քնից անմիջապես հետո: Քնից առավել շուտ արթնանում են արունները: Հղիությունը տևում է 49-50 օր: Տարվա մեջ ունենում են մեկ ծին, սերնդում՝ 5-6 ձագ: Չագուկները ծնվում են մերկ, կույր և անօգնական, որոնց մաշկը լինում է վառ վարդագույն: Սակայն մի քանի ժամ հետո նկատելի են փափուկ, սպիտակ և մառ բծերով փշերը: Աչքերը բացվում են կյանքի 15-17 –րդ օրը: Կույր ձագուկները ևս կարող են կծկվել: Չնայած մայրը ձագուկներին կերակրում է 1-1,5 ամիս, սակայն խնամում է մինչև աշուն: Աշնան կեսերից ձագերը լքում են բնրը և անցնում ինքնուրույն կյանքի: Մեռահաւուն են դառնում հաջորդ տարվա գարնանը:

Սովորական ոգնու կերաբաժինը բազմազան է: Մնվում են ինչպես անողնաշարավոր, այնպես էլ ողնաշարավոր կենդանատեսակներով: Կերաբաժնի ճնշող մասը կազմում են միջատները և նրանց թրթուրները: Միջատներից շատերը համարվում են գյուղատնտեսության և անտառատնտեսության վնասատուներ, օրինակ գնայուկները, մայիսյան բզնգները և նրանց թրթուրները, տարագույգ մետաքսագործները, մորեխները, ծղրիդները և այլն: Բացի միջատներից կերաբաժնի կզգմի մեջ են մտնում նաև մկնանման կրծողները, սողունները, գետնաբնակ թռչունների ձագուկները և նրանց ձվերը:

Մորֆոմետրիկ չափումների ենթ ենթարկելի ԼՂՀ տարբեր շրջաններից ռսված հարյուր (50♂, 50♀) առանձնյակ (աղյուսակ 1): Աղյուսակ 1-ի տվյալներից պարզ երևում է, որ սեռահասուն արունների և էգերի մոտ մարմնի, պոչի, ականջների և գանգի ընդհանուր երկարության , ականջների լայնության և կենդանի քաշի միջև կա հավաստի տարբերություն: Հետևում է նկատել, որ արեալի սահմաններում սովորական ոգնիների մորֆոմետրիկ հատկանիշները փոփոխական են: Սննդական դիմորֆիզմը արտահայտված է բոլոր էքստրեմիտային զույգանիշներում: Այս կենդանիների մոտ բացակայում է նաև գունային դիմորֆիզմը:

Սովորական ոզնու *E. europaeus* L. մորֆոմետրիկ չափումները

	n	սեռ	min	max	M	m ±	δ ±	C _v %	g	P
Մարմնի երկարությունը	50	♂	22	29	25,3	0,24	1,7	6,7	9,4	>999
	50	♀	18	20	22	0,26	1,9	8,6		
Պոչի երկարությունը	50	♂	2,6	3,2	2,9	0,02	0,15	5,17	6,7	>999
	50	♀	2,3	3	2,7	0,02	0,17	6,4		
Գանգի ընդիանուր երկարությունը	50	♂	4,5	5,8	5,1	0,04	0,32	6,2	13,2	>999
	50	♀	3,9	5	4,4	0,035	0,25	5,6		
Գանգի կոնդիլոթագալ երկարությունը	50	♂	3,8	5	4,2	0,26	0,52	12,4	0,4	< 90
	50	♀	3,5	4,7	4	0,35	0,6	15		
Ականջների երկարությունը	50	♂	2	3,5	2,8	0,05	0,33	11,9	5	>999
	50	♀	1,8	3,2	2,5	0,04	0,29	11,6		
Ականջների լայնությունը	50	♂	1,6	2,1	1,8	0,018	0,13	7,1	9,7	>999
	50	♀	1,2	2	1,5	0,025	0,18	12		
Լենդանի քաշը	50	♂	700	850	778	5,17	36,7	4,7	5,1	>999
	50	♀	670	810	739	5,24	38,5	5,2		

Լենդանի Ղարաքաղում առաջին անգամ մեր կողմից, կախված ուղղահայաց զոտիակաևությամբ, օտսումնասիրվել են սովորական ոզնու հեմադինամիկական ցուցանիշները՝ <նտագոտությունը կատարել ենք տարբեր սեզոններում (աղյուսակ 2)

Աղյուսակ 2

Սովորական ոզնիների հեմադինամիկական ցուցանիշները կախված ուղղահայաց զոտիակաևությունից և սեզոններից

Դիտարկումների ժամկետները		Իվանյան 600-620 մ.ձ.մ			Բաղաշա 850-900 մ.ձ.մ			Վարդկաթաղ 750 մ.ձ.մ		
		<նտագոտությունը գ/լ	Էլիթություն	լ/մլոցիտ	<նտագոտությունը գ/լ	Էլիթություն	լ/մլոցիտ	<նտագոտությունը գ/լ	Էլիթություն	լ/մլոցիտ
Գարուն	♂	♂134-164 ♀120-144	♂4.5.10 ¹² ♀3.7-4.5.10 ¹²	4-9.10 ³	♂134-164 ♀120-144	♂4.5.10 ¹² ♀3.7-4.5.10 ¹²	4-9.10 ³	♂134-164 ♀120-144	♂4.5.10 ¹² ♀3.7-4.5.10 ¹²	4-9.10 ³
	♀	144	4.8.10 ¹²	7.10 ³	150	4.5.10 ¹²	4.5.10 ³	118	4.7.10 ¹²	3.6.10 ³
Աշուն	♂	140	5.10 ¹²	5.2.10 ³	145	5.10 ¹²	6.2.10 ³	135	4.10 ¹²	4.5.10 ³
	♀	128	4.3.10 ¹²	6.5.10 ³	130	4.2.10 ¹²	5.8.10 ³	130	4.5.10 ¹²	5.10 ³
Ամառ	♂	135	6.3.10 ¹²	5.6.10 ³	125	5.9.10 ¹²	6.4.10 ³	140	6.10 ¹²	7.10 ³
	♀	119	5.8.10 ¹²	5.6.10 ³	110	5.6.10 ¹²	6.4.10 ³	132	5.8.10 ¹²	6.10 ³
Զմեռ	♂	108	6.10 ¹²	4.7.10 ³	101	6.1.10 ¹²	5.8.10 ³	107	6.2.10 ¹²	5.1.10 ³
	♀	106	5.10 ¹²	4.8.10 ³	104	6.10 ¹²	5.8.10 ³	109	6.10 ¹²	6.2.10 ³

Քարտեզ 1 Ստացիոնարներ



1. Բաղարա
2. Իվանյանի
3. Գանձասարի (Վանքի) ստացիոնար
4. Վարընկաթաղ (Լյուլասագ)

Աղյուսակ 2-ից ներևում է հնմողինամիկական ցուցանիշների փոփոխությունը, ըստ ուղղահայաց գոտիականության և սեզոնների: Ընտրված կենդանիների միջին կենդանի թաշը եղել է 680-700 զ.: Էզերի մոտ հղիություն չի արժանագրվել:

Քննարկելով աղյուսակ 2-ից ցուցանիշների ժամանակաշրջանի արդյունքները և նրա կախվածությունը ուղղահայաց գոտիականությունից նկատելի է աղյուսակի տարրերի քանակության կախվածությունը առանձնյակների անհատականությունից: Աղյուսակից պարզ երևում են զարնադային, ամառային և խոնավային սեզոններում հնմողությունից բարձր ցուցանիշները, որոնքն արձանների և էզերի մոտ ունեն օրաշաղկի շնորհիվ: Դա կարելի է բացատրել որպես արուների ակտիվության ցուցանիշ, որի փաստացի ապացույցն է դիտարկումների աղյուսակը: Ձմեռային շրջանում հնմողությունից քանակությունը նվազում է նորմայի սահմաններից և ավելանում է էրիթրոցիտների քանակությունը: Մեր կարծիքով աղյուսակի մեջ հնմողությունից քանակության նվազումը պայմանավորված է միջավայրի ջերմաստիճանի նվազումով:

Անագատության մեջ պահվող սովորական ձգնիների վարքագծի մեջ աչքի է զատվում այն երևույթը, որ միջավայրի ջերմաստիճանը $+9^{\circ}\text{C}$ -ից նվազելիս նրանց մոտ նկատվում է ակտիվության դանդաղում և ձգտում են մտնել քնի մեջ: Հետևաբար դրան գուցե թագ նվազում է օրգանիզմում ընթացող օքսիդա-վերականգնման գործընթացի համար պահանջվող թթվածնի քանակը: Ուստի հնմողությունից քանակի նվազումը ունի հարմարողական նշանակություն և

պաշտպանում է օրգանիզմի ներքին միջավայրի կայունությունը: Իսկ էրիթրոցիտների քանակության ավելացում, ըստ նրանց, ևս հարմարողական նշանակություն ունի համարվելով հեմոգլոբինի պակասը, որն էլ արգելակում է թթվածնային քաղցը:

Ինչ վերաբերում է լեյկոցիտների քանակության փոփոխության, ապա նրանք քանակությունը տատանվում է նորմայի սահմաններում, սակայն ուղղահայաց զատիականությունից և սեզոններից կախված առկա են որոշակի շեղումներ:

Այսպիսով արյան բաղադրությունը կենդանիների ֆիզիոլոգիական վիճակի ամենանրբագագ ցուցանիշն է և, լինելով համեմատաբար կայուն, որոշակի սահմաններում, այնուամենայնիվ, բավականաչափ արագ է արձագանքում միջավայրի պայմանների փոփոխություններին ու կարող է օրգնա ինդիկատոր ծառայել միջավայրի աղտոտման աստիճանը որոշելու համար: Միաժամանակ արյան բաղադրիչների փոփոխությունները ըստ ուղղահայաց զոտիականության հնարավորություն են տալիս պարզել ու հասկանալ հիպոթիկ պայմաններին հարմարվելու մակարդակը:

Резюме

В статье обсуждаются некоторые вопросы, касающиеся биологии, экологической и эволюционной особенностей ежей обыкновенных.

Впервые нами представлены типы активности ежей обыкновенных, распространенных в фауне Карабаха и наблюдаемые у них изменения гемодинамических показателей в зависимости от вертикальных зон и сезонов.

Գրականություն

1. Բ.Ա.Բադդասարյան, Ուղեցույց միջատներ հավաքելու, նրանց կարգերը որոշելու համար//, Երևան, 1965:
2. Վ.Տ. Հայրապետյան, ԼՂՀ միջատակներների (Insectivora) էկոլոգիան և մակարայծները// ԱրՊՀ գիտ. տեղեկագիր, 1(4), 2001, էջ 58-61:
3. Ս.Մ. Մինասյան, Ն. Ս. Հակոբյան և ուրիշներ, Մարդու և կենդանիների ֆիզիոլոգիա (լաբորատոր աշխատանքների ուսումնամեթոդական ձեռնարկ)// ԵՊՀ, Երևան, 2003թ. էջ 12-23:
4. Է.Գ.Յավրույան, Վ.Տ.Հայրապետյան, Ղարաբաղի վայրի կաթնասունները// Ստեփանակերտ, «Իզգակ պլուս», մաս I, 2003, էջ 12-15:
5. Է.Գ.Յավրույան, Վ.Տ.Հայրապետյան, Ղարաբաղի վայրի կաթնասունները// Ստեփանակերտ, «Իզգակ պլուս», մաս III, 2003Ս, էջ 4-48:
6. Н.И. Наумов, Экология животных//, Москва, 1963, ст. 3-575.
7. Г.А. Новиков, Полевые исследования экологии наземных позвоночных животных//, совет. Наука, 1949, ст. 12-574.
8. И.Я. Павлинов, О.Л.Россолимо, Систематика млекопитающих СССР//, Москва,1987, ст. 10-14.
9. О.Л. Россолимо, И.Я. Павлинов, Разнообразие млекопитающих//, Москва, 1997, ст. 43-46.
10. Э.Г.Явруян, К.М.Арутюнян, В.Т.Айрапетян, Определитель классов, подклассов и отрядов наземных членистоногих Армении и Нагорного Карабаха (учебное пособие)//, Российско-Армянский (Славянский) университет, Ереван, изд. РАУ, 2007, ст. 3-52.

ԼՂՀ-ՈՒՄ ԽՈՋՆԵՐԻ ԱՍԿԱՐԻԴՈՋ ԵՎ ԴՐԱ ԴԵՄ ՏՆԱՎՈՂ ՊԱՅՔԱՐԸ

Ս.Ա. Աղայան, Ա.Ա. Սարգսյան

ԼՂՀ-ում խոզերի ասկարիդոզը ունի մեծ տարածում, քանի որ եւրոպայեցիական բոլոր բնակչիմայական գոտիները միանգամայն նպաստավոր են այս հեղինթոզի զարգացման համար: Առանձնապես մեծ վարակվածություն լինում է միջին լեռնային և բարձր լեռնային գոտու տնտեսություններում (50-90%), և համեմատաբար թույլ հարթավայրային և նախալեռնային գոտում (10-50%): Հաշվի առնելով այս հանգամանքը տնտեսություններում միշտ պետք է հատուկ հաշվարկի վերցնել խոզամերուների ծնի, խոճկորներին մայրերի ծծից կտրելու և մատղաշների բուսման դնելու գործը ու ժամանակին կատարել զգայունակ կենդանիների անհրաժեշտ հետազոտումը, հիվանդների ժամանակին բուժումը և նախախնայարգելման բոլոր միջոցառումները:

Խոզերի հեղինթոզները (ճիճվային հիվանդություններ), այդ թվում նաև ասկարիդոզը, ամենուրեք լայն տարածված, մեծ տնտեսական վնաս պատճառող հիվանդություններ են: Դրանք մեծ տարածում ունեն նաև հանրապետությունում, չնայած տարիներ առաջ՝ ԼՂՀ-ի ինքնավար մարզը Ադրբեյջանի բնակչության ամբողջ շրջանում, այդ մասին չէր նշվում: Սակայն վերջին տարիներին Հայաստանի հանրապետության կենդանաբանության ինստիտուտի մի խումբ գիտնականների կատարած ուսումնասիրությունները վկայում են, որ ԼՂՀ-ում խոզերի շրջանում տարածված է ասկարիդոզը, մետաստրոնգիլոզը, մակրոկանտարինխոզը, էդֆագոստոմոզը, ստրոնգիլոիդոզները և տրիխինելոզը, որոնք հարուցվում են պարազիտ կլոր որդերի կողմից, ինչպես և էլիսիկելոզի թրթուրաբերողիկային ձևը, որի վերջնական տները համարվում է շունը (1):

Մեր կատարած հետազոտությունները վկայում են, որ ԼՂՀ-ում առավել տարածված է խոզերի ասկարիդոզը և մետաստրոնգիլոզը: Սույն աշխատանքը նվիրված է խոզերի ասկարիդոզի կենսաբանական լոգիստիկային առանձնահատկությունների և նրա դեմ տարվող պայքարի միջոցների ուսումնասիրությանը:

Խոզերի ասկարիդոզը հարուցվում է տիրոջ աղիքներում ապրող *Ascaris suum* տեսակին պատկանող չափահաս (սեռահասուն) կլոր որդի կողմից, որի համար խոզը համարվում է վերջնական տեր: Չափահաս ասկարիդները սպիտակավուն գույնի բավականին խոշոր որդեր են (արուների երկարությունը կազմում է 10-30, էգերինը՝ 23-30 սմ): Դրանք տիրոջ աղիքի լորձաթաղանթին ամրանում են մարմնի աջքի ծայրում, բերանի շուրջը դասավորված երկու հատակ ելունի «շրթունքների» միջոցով: Այդ պարագիտ որդերը սնվում են աղիքներում մնալով սննդով: Սեռահասուն բնդնալուծված էգը տիրոջ կղանքի հետ օրվան արտաքին աշխարհ է արձակում մինչև 200 000 ձվեր: Շրջակա միջավայրի բարձրագույն պայմաններում՝ (զերմաստիճանը՝ +20°C + 30°C, խոնավությունը շուրջ 50% և ավելի) նրանցում զարգանում է ստրիկ, որը 15-20 օրվա ընթացքում փոխակերպվում ու դառնում է շարժունակ, կլորավուն, որդակերտ և վարակիչ (ինվազիոն) թրթուր: Ձվաթաղանթներով պատված այսպիսի վարակը կնրի, ջրի, հողի հետ կամ էլ խոճկորի կողմից մոր կրծքի պտուկները ծծելիս ընկնում է խոճկորների մարսողական համակարգ, ստամոքսում ազատվում է ձվաթաղանթներից ու թրթուրը հասնում է թարակ աղիքներ ինքնուրույն ներս է թափանցում արյան և ավշային մազանոթներ: Ապա նա տարվում է կարդի դնելու և արյան համակարգ, հետին սինդրակ, աջ նախասիրտ, արյան փոքր շրջանառությանը հասնում է թրթուր: Այստեղ նա շուտով ծակում է թորաբերտները, դուրս է գալիս բորնիսնոթների լուսանցք ու պասիվորեն (թորաթաղանթի թարթիչավոր էպիթելի դեպի հասց թորաթման ճանապարհով) տեղաշարժվելով շնչափողով ընկնում է կոկորդ, ապա ընկնում ու կնրի և լորձի հետ կուլ է զննում ու նորից ընկնում է աղիքի: Ասկարիդի թրթուրները երկրորդ անգամ հասնելով աղիքներ շուրջ 1.5-2 անգամ ընթացքում մաշկափակվում և դառնում են չափահաս ու նորից կրկնում են վերը նշված կենսացիկլը: Վարակի զարգացման ուղին համարվում է հողային կամ վարակի ուղիղ ուղի (հեռնիմիդթոզային վարակում): Սակայն վերջին տարիներին պարզվել է, որ բացի վերը նշված այս ուղուց ասկարիդոզը կարող է զարգանալ նաև

խոգի կողմից ասկարիդի ձվերով վարակված անձրևաորդեր և գոմաղբաորդեր աստիճանապարհով: Ի դեպ, այս դեպքում, ինվազիոն ձվերի զարգացումը սակավախոգան այս որդան օրգանիզմում չի շարունակվում, այլ թրթուրակեր ձվերը ընկնելով մարմնի խոռչ վարակ պահեստային այս կրողների մոտ երկար ժամանակ (ամիսներ, տարիներ) պահպանվում են ոչ չեն կորցնում վարակման ընդունակությունը: Ուստի հիվանդության տարածման վերջը տարիներին բացահայտված այս ուղին ևս պետք է հաշվի առնվի ասկարիդոզի դեմ տարածքովանխարգելիչ միջոցառումները ավելի արդյունավետ դարձնելու համար:

Ասկարիդոզի ախտածնությունը քննարկելիս պետք է հաշվի առնել, որ ասկարիդները իրենց կենսացիկլում տերերին պատճառում են բազմապիսի մեխանիկական և կենսաբանական խաթարումներ (խախտում են վերը նշված շատ օրգանների բնականոն կազմվածքը, իրենց հետ այդ օրգաններն են տանում տարբեր վարակներ, ոչ սակավ դեպքերում առաջացնում են աղիների և լեղաձորանի խցանում, արտադրում են տարբեր թույներ, որից քայքայվում են արյուն էրիթրոցիտները, թորաբորբից առաջանում է տանջալից հազ և այլն): Այս և այլ ախտահարումներից հիվանդ կենդանիները վատ են ուտում կամ չեն ուտում, կորցնում են քաշաճը, սննդում են լուծ կամ կապոթյուն, մարմնի ջերմաստիճանի բարձրացում, մկանային դող, ընկալվողություն և այլն: Մեծ վարակվածություն, անբավարար սննդան ու այլ հիվանդություններով բարդացման ժամանակ լինում է նաև մահացություն: Դժբախտաբար շատ դեպքերում միայն վերջինիս ժամանակ են ուշադրություն դարձնում ասկարիդոզի վրա, չնայած անասնատերերը և խոգաբուծությանը զբաղվող տնտեսությունները բավականին մեծ վնաս են կրում նաև մինչ այդ կենդանիների քաշաճի կորստից:

Ասկարիդոզից հաճախ հիվանդանում են 2-6-8 ամսեկան խոզերը: Հասակավոր կենդանիների մոտ ասկարիդոզ հաճախ չի զարգանում, որը մենք կապում ենք նրանց սակավ վարակվածության և ոչ ստերիլ մասնակի իմունիտետի հետ:

Ասկարիդի ձվերը չափազանց կայուն են շրջակա միջավայրի անբարենպաստ գործոնների նկատմամբ, որը ևս պետք է հաշվի առնել հիվանդության դեմ տարվող արջուրանավետ պայքար կազմակերպելիս, քանի որ պարզված է, որ ասկարիդի սաղմնակիր ձվերը կարող են մինչև 10 տարի դիմանալ չոր ավազախողերում: Ընդ որում, դեռևս ոչ ինվազիոն աստիճանի հասած ձվերը իրենց զարգացումը կարող են շարունակել հաջորդ տարվա բարենպաստ ջերմաստիճանի ու խոնավության պայմաններում, որը ևս չպետք է անտեսվի: Շատ կարևոր է իմենալ, որ ինվազիոն ձվերը շարունակում են իրենց զարգացումը նույնիսկ ֆորմալինի 2% - ոգ լուծույթի մեջ: Սակայն ասկարիդի ձվերի համար մահաբեր են ազդում կծու նյութերում կամ կալիումի 2%-ոգ, ֆենոլի 4-5% լուծույթները, տաք ջրերը (60°C և ավելի), հանգած չոր կիրը, արևի ուղիղ ճառագայթների տակ չորացումը և այլն:

Մենք պարզել ենք, որ ԼՀՀ-ում խոզերի ասկարիդոզը առանձնապես ծանր է ընթանում ուշ աշնանային, ձմեռային և վաղ գարնանային շրջանում, որին մեծապես նպաստում են կենդանիների թերկերակրումը, հատկապես կենդանիների կերաբաժնում վիտամինների պակասը և ցուրտը: Միջին լեռնային և բարձր լեռնային գոտիներում, որոնք գտնվում են ծովի մակերևույթից 850-1200մ և ավելի բարձրության վրա և կենդանիները ավելի երկար ժամանակ են գտնվում արտոններում, վարակվածությունը ավելի մեծ է (50-90%), քան ցածրադիր և նախալեռնային գոտիների (500-700մ) տնտեսություններում (10-50%): Պարզել ենք նաև, որ կենդանիների մեծ վարակվածությունը հանրապետությունը բարձր լեռնային և նախալեռնային տնտեսությունների պայմաններում մեծապես պայմանավորված է տեղային վարակի պահեստային կրող սակավախոգան օրդերի (անձրևավորողներ, գոմաղբաորդեր) մեծ վարակվածությամբ (50% և ավելին): Իսկ հարթավայրային և նախալեռնային գոտում, ասկարիդի թրթուրակի ձվերով անձրևաորդերի վարակվածությունը կազմել 10-20%: Հայտնի է, որ ասկարիդոզը ախտորոշում են կենդանիների կոանքի լաբորատոր հետազոտման, հիվանդների հարկադիր մորթի ու սառեկամների հերձման հիման վրա (չափափա պարագիտներին աղիվորում հայտնաբերման եղանակներով):

Մեր աշխատանքում հիվանդության մեջ կասկածվող կենդանիները և սատկածների հերձումը կատարել ենք ինչպես տնտեսություններում, այնպես էլ հանրապետական անասնաբուժական լաբորատորիայում: Իսկ կղանքի հետազոտումը ասկարիդի ձվերի հայտնաբերման նպատակով կատարել ենք միայն լաբորատորիայում անասնաբուժական պրակտիկայում ընդունված Ֆյուլլբերգի և Շերբովիչի մեթոդով (1968թ.):

Ասկարիդոզով հիվանդ կենդանիների բուժումը կատարել ենք օգտագործելով պիպերազին, պանկոլոր, մոքսանտիլ, փնտալ, նիվերմ, ֆոտորական նստրիում և որոշ այլ դեղեր: Պիպերազինը տվել ենք աղած հատիկային կերի կամ էլ խոզերի համար պատրաստված խտացրած կերի հետ, օրվա մեջ երկու անգամ (առավոտյան և երեկոյան կերակրման ժամանակ): Միանվագ ընդունման դոզան՝ մինչև 50 կգ մատուղաներին 0.3գ մեկ կգ կենդանի քաշին, 50կգ և ավելի քաշ ունեցող 1 գլուխ չափահաս խոզերին՝ 15գ: Դեղը տվել ենք կենդանիներին կերատաշտակներում խմբային կերակրման եղանակով: Սկզբում դեղը խառնել ենք փոքր քանակությամբ կերի հետ, ապա ամբողջ կերի հետ, որից հետո ամբողջ այդ զանգվածը թեթևակի թրջել ենք (խոնավացրել ենք): Դեղը տալու օրը կենդանիների կերաբաժնի կերը պակասեցրել ենք մեկ երրորդի կամ կիսով չափ: Բուժման նախօրյակին կամ էլ դրանից հետո կենդանիներին լուծողական չենք տվել, նաև չենք սահմանափակել կենդանիների կողմից օրվա մեջ ընդունվող ջրի քանակը: Ստուգիչ խմբին դեղ չենք տվել: Ճիճվահանությունից 3-5 օր հետո կատարել ենք կողանքի կրկնակի ստուգում: Ասկարիդի ձվեր հայտնաբերել ենք միայն 10-15 % դեպքերում: Ստուգիչ խմբի համեմատ վարակվածությունը պակասած է եղել շուրջ 10 անգամ: Սակայն պետք է ասենք, որ ասկարիդոզի բուժումը այլ դեղերով, ինչպես նաև են շատ հեղինակներ ևս բավականին արդյունավետ է: Այսպես, նրանք (Վ.Դ.Տակոբյան, Գ.Ա.Գրիգորյան, Ա.Բ.Աղապյան) երաշխավորում են պանակտիդ տալ պիպերազինի նման մեկ օրվա մեջ առավոտյան և երեկոյան 0.015գ 1կգ կենդանի քաշին (2): Մորատիլը նշանակում են միանվագ ընդունման համար, առավոտյան կերակրման ժամանակ 1կգ կենդանի քաշին 0.1գ: Ասկարիդոզի բուժման համար կան նաև ուրիշ արդյունավետ դեղեր, սակայն այս հիվանդության դեմ տարվող պայքարում բուժման հետ միասին մեծ տեղ պետք է հատկացվի հիվանդության նախականխարգելիչ միջոցառումներին: Այսպես, խոզանոցները պետք է պահվեն մաքուր, չոր և տաք: Դրանք պարբերաբար (10-15 օրը մեկ) պետք է ենթարկվեն ախտահանության թարմ հանգած կրի 20%-ոց լուծույթով (կամ որևէ այլ ախտահանիչ նյութերով): Իսկ տոհմային տնտեսություններում խոզաներուններին ծնից մեկ ամիս առաջ պետք է ենթարկվել ճիճվաթափության: Մատողաշ խոզերին բուժման դնելուց առաջ ևս պետք է ենթարկվել ճիճվահանության: Դա պետք է կատարել նաև խոզերներին ծծից կտրելուց հետո: Բացի դրանից պարբերաբար պետք է լավ մաքրվի և ախտահանվի նաև խոզանոցների շրջակայքը:

Резюме

Аскаридоз свиней в НКР имеет широкое распространение, так как природо-климатические условия во всех зонах республики благоприятствуют развитию гельминтоза. Болезнь особо широко распространена в среднегорной и высокогорной зонах, где инвазированность у свиней составляет 50-90% и более, а в низменной и предгорной зонах 10-50%.

С учетом этого в хозяйствах необходимо взять в учет опорос свиноматок, сроки отделения поросят от свиноматок, сроки поставок молодняка на откорм и вовремя провести соответствующие анализы по выявлению больных, провести их дегельминтизацию и комплексные меры по профилактике.

Литература

1. Под ред. С.О.Мовсисяна, Паразитарные болезни сельскохозяйственных животных Нагорно Карабахской Республики, Степанакерт, 2004.
2. В.Д.Акопян, Г.А.Григорян, А.Б.Агасян, Аскаридоз свиней, Паразитарные болезни сельскохозяйственных животных Нагорно Карабахской Республики, Степанакерт, 2004, с.266-270.

ԼՂՀ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՎՍՅՈՐԻ ԱՃՈՐ ՄՆԵՂ-ԱՅԻՆ ԵՎ ԲՈՒԺՎԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ
ՈՒՆԵՑՈՐ ՈՐՈՇ ԽՈՏԱԲՈՒՑՆԵՐԻ ԷԿՈԼՈԳԻԱԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Կ.Վ. Բալայան

ԼՂՀ բուսական աշխարհի բազմազանությունն անգնահատելի արժեք է հանդիսանում ներկա և ապագա սննդամթերքի համար: Սույն հոդվածում ներկայացվում են ԼՂՀ տարածքում վայրի աճող սննդային և բուժական նշանակություն ունեցող որոշ խոտաբույսերի էկոլոգիա-կենսաբանական առանձնահատկությունները, մորֆոլոգիական կազմությունը, սննդային, բուժական ու տնտեսական արժեքները, պահպանության խնդիրները:

ԼՂՀ ֆլորան աչքի է ընկնում բուսական համակենցությունների ու բուսատեսակների արտահայտված բազմազանությամբ, որտեղ ուրույն տեղ են գրավում վայրի աճող ջրտեղի համեմունքային, դեղատու, նեկրոպոլոգատու և այլ բուսատեսակները: Նշված խոտաբույսերի տղ գենոֆորը կարող է դիտվել որպես ազգային հարստություն:

Կռվկասի ֆլորայի, բուսական պաշարների ու դրանց օգտագործման վերաբերյալ արժեքավոր աշխատանքներ են կատարել հայտնի բուսաբաններ Ա. Ա. Գրասպեյանը [1], Ա. Լ. Թախտաջյանը [2], Ի. Ա. Դեմիրճյանը և ուրիշներ [3]: Լեւոնային Ղարաբաղի բուսական աշխարհի ուսումնասիրման և պահպանման հարցերով զբաղվել ու հետազոտական աշխատանքներ է կատարել կենս. գիտ. թեկնածու, դոցենտ Ռ. Ի. Առուշանյանը [4]: Չնայած վերը նշվածներին, որքան էլ դա անհավանական թվա, ԼՂՀ ֆլորան համակողմանի, սննդային և բուժական նշանակություն ունեցող բուսական աշխարհի մասնավորապես, արդի պայմաններում լուրջ հետազոտությունների կարիք ունի: Ուստի ուսումնասիրելով ԼՂՀ տարածքում վայրի աճող ուտելի, համեմունքային և բուժական նշանակության խոտաբույսերի էկոլոգիա-կենսաբանական, սննդային գարգացման առանձնահատկությունները, կարող ենք պարզել նրանց տարածվածությունը, պաշարները, մշակել վայրի տնտեսական վերաբերադրման և արդյունավետության բարձրացման եղանակները:

Կտրևոր համգամանք է հանդիսանում այն, որ շատ բուսատեսակներ ու միայն ուտելի են, այլև միաժամանակ՝ համեմունքային, մեղրատու, նեկրոպոլոգատու և դեղատու, որի շնորհիվ բարձրանում է նրանց տնտեսական արժեքը: Այդ բույսերը պարունակում են մարդու օրգանիզմի համար խիստ անհրաժեշտ վիտամիններ, օրգանական թթուներ, սպիտակուցներ, ֆերմենտներ,



Ամապիացի, Մխիթար Հերացի, Ղազար Փարպեցի, Գրիգորյա, Ստեփանոս Շաիրիմալյան և ուրիշներ) բազմաթիվ վկայություններ կան հին ժամանակներում վայրի բույսերի

յղածամաշտար կիրառման վերաբերյալ [5]: Ներկայումս գիտական բժշկության մեջ նույնպես օգտագործվում են մեծ թվով բուսական ծագում ունեցող դեղամիջոցներ ու դեղաբույսներից պատրաստված տարբեր նիսուկներ, թուրմեր, ռզնթուրմեր, քսուրներ և այլն: Սույն աշխատանքում որպես հետազոտման օբյեկտներ դիտարկել ենք ԼՂՀ ֆլորայում տարածված ծնեթել դեղատու (*Asparagus officinalis* L.), ծուռապաշար (*Capsella bursa-pastoris*), եղան լեզու մեծ (*Plantago major* L.), խնկածաղիկ սափարական (*Origanum vulgare* L.), խատուտիկ դեղատու (*Taraxacum officinalis* Wigg) տեսակները: Աշխատանքի իրականացման համար ընտրել ենք որպես ստացիոնարներ Ստեփանակերտը, Աջափնյակը, Բերքածորը (քարանձավ 1): Ուսումնասիրությունների էկոլոգիական դիտարկումները, բուսամուկների հավաքումը և հերքարիումների պատրաստումը կատարել ենք բուսաբանության մեջ ընդունված մեթոդներով: Ստորև ներկայացնում ենք ԼՂՀ տարածքում վայրի աճող ուտելի, համեմունքային և բուժական նշանակության մի քանի խոտաբույսերի կենսաբանական առանձնահատկությունները:

Հովվամախաղ (ծուռապաշար) – *Пастушья сумка обыкновенная*
– *Capsella bursa-pastoris* L.



ուստճառով միաժամանակ կարելի է հանդիպել և՛ երիտասարդ, և՛ ծեր բույսերի: Տերևներում խնձորաթթու, ֆիտոնեցիդներ, վիտամիններ, եթերային յուղ, երկաթ, աղիներ, ֆոսֆոր, կալցիում և այլն: Մանուկ ոգտագործում են երիտասարդ տերևները և մատղաշ ցողունները: Բուժական նպատակներով օգտագործելու համար հավաքում են ամբողջ բույսը և չորացնում ստվերում: Ունի արյան ճնշումն իջեցնող հատկություն:

Նախածաղկավորների (կաղամբազգիների) ընտանիքին պատկանող միանյա խոտաբույս է: Արմատային համակարգն առանցքային է: Յողունը պարզ է կամ ճյուղավորվող՝ ուղղաձիգ կանգնող, 20-30սմ բարձրությամբ: Տերևները հիմնականում մերձարմատային են, երկարավուն-նշտարած, առամնավոր կամ փետրածև կտրտված և հավաքված վարդակում: Յողունային տերևները նստադիր են և նետաձև: Ծաղկաբույլը ռդկույզ է, ծաղիկները՝ մանր և սպիտակ: Պտուղը հակադիր նեանկյունաձև պատիճակ է: Մերմերը ձվածև են, դեղնաշագանակագույն: ԼՂՀ-ում տարածված է ցածրադիրք մինչև բարձրադիրք լեռնային շրջաններում: Որպես մոլախոտ աճում է ամենուրեք՝ դաշտերում, այգիներում, ճանապարհների եզրերին: Մեկ բույսը կարող է առաջացնել մինչև 60000 և ավելի սերմեր: Մերմերի հանգստի շրջանը կարճ է և մեկ սեզոնի ընթացքում կարող են սերմերը վերարտադրել 3-4 սերունդ: Այդ

Նստուտիկ դեղատու – *Одуванчик лекарственный*

– *Taraxacum officinalis* Wigg.



Բարդածաղկավորների պատկանող բազմամյա խոտաբույս է՝ արմատամերձ, փետրածև կտրտված տերևների վարդակով: Ծաղկակիր սլաքները դուրս են գալիս արմատամերձ տերևների վարդակի կենտրոնից: Ծաղկաբույլը մեկական գագաթնային գամբյուղ է, ծաղիկները՝ երկսեռ, լիզակավոր, վառ դեղին: Պտուղը փուփուլավոր սերմիկ է: Մերմիկը երկարավուն է, սեպածև: Բնորոշ սպիտակ փուփուլի օգնությամբ սերմիկները քամու միջոցով տարածվում են ամենուր: ԼՂՀ-ում խատուտիկը տարածված է մարգագետիններում, դաշտերում, այգիներում, գետափին, ճամփեզբերին և այլուր:

խատուտիկը շատ երկյններում մշակվում է որպես բանջարանոցային մշակաբույս ու համարվում է սննդային. տերևներից պատրաստում են սալաթ [6]: Այս նպատակով մատղաշ տերևները 30 րոպե թողնում են սառն աղաջրում՝ դառնությունը վերացնելու համար: Տերևներում

պարունակվում է ասկորբինաթթու (փոսփին C), իսկ արմատներում՝ ինսլին, ասպարազին, օրգանական թթուներ, երկաթ, կալիում, ֆոսֆոր և այլն: Հուժական նպատակով օգտագործում են ամբողջ բույսը, բայց հիմնականում արմատը, որը հանում են ուշ աշնանը: Խառնուրդ չի տրվում խատուտիկը հավաքել քաղաքի շրջակայքից, քանի որ նրանք կլանում և կուտակում են ավտոմեքենաների արտանետած գազում նյութ կապարն ու փնատակար այլ միացություններ: Խտառուտիկն ունի քրտնամուղ, միզամուղ, լեղամուղ հատկություններ:

Խնկածաղիկ սովորական – *Dушица обыкновенная*
– *Origanum vulgare L.*



Խողեղինգազգիներին (շրթնածաղկավորներ) պատկանում 30-80սմ բարձրությամբ բազմամյա խոտաբույս է: Ունի ուղղանկյ. քառանկյուն, կարմրամանուշակագույն գոգուր, վերի մասում ճյուղավորվող, ծածկված վալիտով մազիկներով: Տերևները հակադիր են, երկարավուն-ծվածն, ամբողջաեզր: Ծաղիկները հասկիկներով են, մանր, թուրավետ, վարդագույն՝ հավաքված վահանաձևի կամ հուրանաձևի ծաղկաբույլերում: Պտուղը քառակուսի է՝ կլոր. դարչնագույն սերմիկներով: Լճ-ում խնկածաղիկը տարածված է անտառների բացատներում, գետահովիտներում, թփուտներում, բլրալանջերին և այլու: Նախընտրում է սննդանյութերով հարուստ հողերը: Խնկածաղիկը վերգնայա հատվածը պարունակում է եթերայուղ, ասկորբինաթթու, ներկանյութեր և այլն: Հուժական նպատակով օգտագործվում է բույսի ամբողջ վերջնույն մասը, որը հավաքում են ծաղիկները լրիվ բացվելուց հետո (հավաքելու ժամանակ չպետք է արմատով հանել): Դժնպարյան ունի կենսորոնական նյութային համակարգը հանգստացնող, խալսն արտազատող, մաքսոդությունը կանաչալորող, լեղամուղ, քրտնամուղ հատկություններ: Այն հակաբուցված է եղևներին: Խնկածաղիկ եթերայուղն օգտագործվում է առամանաբուժական պրակտիկայում որպես ավտոմեքենի և ցավազրկող միջոց [7]: Խնկածաղիկն օգտագործում են նաև որպես թուրավետ թեյի բաղադրամաս և համեմունք՝ սննդի արդյունաբերության, լիկյորների, գարեջրի արտադրության մեջ: Նպատակահարմար է խնկածաղիկը մտցնել վաշմարյան մեջ որպես մղուղատու, եթերայուղատու, համեմունքային և դեղաբույս:

Ծնեբեկ դեղատու (ծնեկալ) – *Спаржа пекарственная*
– *Asparagus officinalis L.*



Ծնեբեկագզգիներին պատկանող 120-150սմ բարձրության, ճյուղավորված գոգուրով բազմամյա երկխոսն խոտաբույս է: Մատույշ ընձյուղները պատված են թեփուկանման տերևներով: Տերևածցներում առաջանում են կանաչ, ասեղանման կամ թելանման, 1-3 սմ երկարությամբ կլադոֆիտների փնջեր: Ծնեբեկ դեղատու ունի մանր, բաժանատես, բաց կանաչավուն կամ դեղնավուն ծաղիկներ: Արական ծաղիկներում լավ զարգացած են առէջնորը (թերթաբազացած է վարսանդը), իգական ծաղիկներում՝ լավ զարգացած է վարսանդը, (առէջները գտնվում են սաղմնային վիճակում): Պտուղը գնդաձև, եռաբուն հատապարուղ է, հառանաճաղի կարմրում է, իսկ սերմերը՝ սև, փայլուն: Լճ-ում

բույսն տարածված է անտառներում, քարքարոտ լանջերին, թփուտներում, մացառների մեջ և այլու: Լավ է աճում օրգանական նյութերով հարուստ, փուխր, թույլ հիմնային հողերում: Հույսի արմատներում պարունակվում են ասպարազին, եթերայուղ, փոսփիններ՝ ասկորբինաթթու(C), թիամին (B₁), նիկոտինաթթու (PP) և այլն: Որպես ուսելի վայրի աճող բույս, ծնեբեկը սպորտիստները հայտնի է շատ վաղուց: Վաղ գարնանը մատողաշ ընձյուղները, որոնք հարուստ են հանքային նյութերով, հեշտ յուրացվող սպիտակուցներով և ածխաջրերով, լայնորեն օգտագործվում են բնակչության կողմից: Ծնորիվ բույսի մեջ պարունակվող զգալի քանակությամբ ասպարազինի, նրա պարսպարտուտիկները ցուցաբերում են սրտի վրա հանգստացնող ազդեցություն և մաքրում են նրակների խցանուղ Սուսանքի բաղցկնի դեպքում ծնեբեկը համարվում է որպես լիարժեք սնունդ:

Եզան լեզու մեծ (ջղախոտ) – Подорожник большой
– *Plantago major* L.



լորձնաբույս է և այլն: Բուժական նպատակով հիմնականում օգտագործում են բույսի տերևներն ու սերմերը, որոշ դեպքերում նաև արմատը: Տերևները հազվադեպ են կոտրենքով, իսկ սերմերը՝ լրիվ հատումանալուց հետո: Սերմերը եռացնելուց զայանում է լորձային հեղուկ, որն օգտագործվում է լսողականության և ուրու մի շարք հիվանդությունների ժամանակ: Ստամոքսի քաղցկեղի դեպքում տերևներից պատրաստում են բանջարաբույր, տերևակոթերից՝ թեյ: Ջղախոտի տերևներն օժտված են հալաբույրությամբ, զավազակոթ, խորխուրներ հատկություններով: Բույսի մատղաշ և նորից տերևները օգտագործում են նաև սալաթի ձևով, հետևաբար այն համարվում է որպես բուժիչ և դիետիկ բույս:

Резюме

Разновидность растительного мира НКР представляет собой неоценимое богатство для нас и будущих поколений. В данной статье представлены морфологическое строение, эколого-биологические особенности некоторых дикорастущих съедобных и целебных растений флоры НКР.

Գրականություն

1. А.А. Гроссгейм, Флора Кавказа. М., т. 2, 1940, 284 с.
2. А.Л. Тахтаджян, Жизнь растений. М., Просвещение, т. 5 (2), 1981, 510 с.
3. И.А. Дамиров, Л.И. Прилипко, Д.З. Шукюров, Лекарственные растения Азербайджана. Б., Маариф, 1988, 318 с.
4. Ռ.Բ. Ասուրյանյան, Լեռնային Արցախի ֆլորայի հազվագյուտ և անհետացող տեսակները, դրանց պահպանումը. ԱրՊՀ գիտ. տեղեկագիր, 2 (11), 2005, էջ. 49 – 50.
5. Ա.Ա. Թորոսյան, Հայաստանի դեղաբույսերը. Ե., Հայաստան, 1983, 294 էջ.
6. Атлас ареалов и ресурсов лекарственных растений СССР. Под ред. А.И.Толмачева, М., ГУГК, 1976, 274 с.
7. А.М. Задорожный, А.Г. Кошкин, Справочник по лекарственным растениям, М., Лесная пром., 1990, 414 с.

«ՀԻՆ ԱՐԵՎԵԼԵՔԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ»-ԴԱՍՈՆԹԱՅԻ
ԲԱԿԱԼԱԿՐԻԱՏԻ ԾՐԱԳԻՐ-ՆԱԽԳԻՐ

Ա.Պ.Պետրոսյան

Բարձրագույն գիտակրթական համակարգում մերօրյա զարգացումները յրջարեն խորեելու և գործելու տեղիք են տալիս: Եվ քանի որ դրանց անմիջական պատասխանատուն մասնագիտական ամբիոնն է, ուսուի ներկայացվող նախաձեռնությունը մի փորձ է առաջադրվող նորարարությունները ընթացքավորելու համար: Այն անմիջականորեն առնչվում է բուհական կրթության մեջ աստիճանաբար հիմնավորվող կրեղիսային համակարգի հնոտ մասնագիտական դասընթացի «Հին Արեւելքի պատմություն» շրջանակում նախատեսվող համամասնված մի շարք որակական փոփոխություններ:

-Լսարանային աշխատանքի ազատականացում, որը նշանակում է առարկայական գործող ծրագրային ծավալների սկզբունքային վերափոխում:

-Ուսումնառության ընթացքում դասախոսի և ուսանողի միջև պարտավորությունների հստակեցում, առաջնահերթային համարելով գիտական ընկերակցության սկզբունքը:

-Վերափոխել դասախոսության նպատակայնությունը՝ այսօր գործող գիտա-տեսական տեղեկատվությունից անցնելով գիտա-փիլիսոփայական որակին:

-Գնահատման համակարգի կատարելագործում, ըստ օրի առաջնահերթային համարել ոչ թե ուսանողի պատասխանը, այլ նրա կողմից կատարված գիտատեսական աշխատանքների ծավալը

-Ելնելով իմաստափոխվող հասարակական առաջադիմության տրամաբանությունից՝ արժեքավորել մտավոր ապրանքի արտադրությանը գործառնությունը (այս թվում և դասընթացի շրջանակում), սահմանելով կոնկրետ չափանիշներ:

Այս ամենը տեղ ունեն ներկայացվող աշխատանքի մեջ, որոնք անկասկած գգում են համալրման կարիք:

Ելնելով բարձրագույն կրթության նկատմամբ մերօրյա պահանջների էությունից, ներկայացվող ծրագիրն իր հիմքում նախատեսում է առաջադանմտության խորիվայ առաջադրելով բուհական կրթության մեջ ինքնադրստորան երեք առաջաներթային սկզբունքներ, որոնք, մեր կարծիքով, նախադրյալ կհանգիստանան իմաստային առումով համակարգի ներսում քանակից որակին անցնելու համար:

1.Հարգելով լսարանային աշխատանքը՝ որպես կարևոր նախապայման բուհական կրթության մեջ, առաջարկում ենք այդ բնագավառում կատարել օրակական փոփոխություն, որը կարելի է տեղավորել հետևյալ բնորոշման շրջանակում՝ գիտա-տեսական տեղեկատվությունից անցում գիտա-փիլիսոփայական ընդհանրացումների, ինչը կնշանակի՝ հրաժարվել այսօր տարածված գտած սերտողական պահվածքից՝ մտնելով նյութի մատուցման և ընկալման տրամաբանական հարթություն: Այս տեսակետից՝ ներկայացվող ծրագիրը նորարարություն է, բայց ոչ հեղափոխական, քանի որ ելնում է հասարակական առաջադիմության էվոլյուցիան գործառնության էությունից: Նրա առաջին մասը լրիվությամբ համապատասխանում է այդ սկզբունքին: Որպես առաջարկի նյութականացման երաշխիք, ծրագիրը պահանջում է մասնագիտական դասընթացների վերաբերյալ կարգազգիղ դասախոսությունների /գիտա-տեսական նյութ/ հրատարակում ուսումնական ձեռնարկների տեսքով: Այս դեպքում ուսանողը կազատվի պարտադրված լսարանային պահվածքից, մտնելով ազատականացված պարապմունքների և գիտական որոնումների հարթություն:

2.Ծրագիրը տեսանելի ծավալներ է նախատեսում ուսանողական միջավայրում նպատակային գիտական գործունեություն իրականացնելու համար, որպես հիմնադրոյթ առաջադրելով՝ մասնակցություն ունենալ մտավոր ապրանքի արտադրության մեջ, որը նշանակում է հանդես բերել իրատեսություն փոփոխվող կյանքի /մասնատիրություն/ նկատմամբ, փորձելով կարգավորել նրա նյութական և մտավոր ոլորտներում այսօր առկա

անհամաձայնությունը՝ կապված մասնավոր ապրանքի արտադրության հետ: Ներկայացվող ծրագրի ներկորդ բաժինն ուսանողական միջավայրին առաջադրում է կոնկրետ գործնականաց, շարունակական գիտական գործունեություն իրականացնելու համար՝ ելնելով ունենալով ստավոր ապրանքի արտադրության գործակիցը:

3. Սովորել աշխատել և պաշտպանել ու գնահատել կատարածը՝ սրանք մեկ թանձրության համարժեքներ են: Ելնելով այն հասկացմանը, որ այսօր գործող գնահատման համակարգը թափանցիկ հեռացել է ոգևորման աղբյուր լինելուց ու միտում ունի վերածվելու յարության, առաջարկում է անցնել ուսանողների գիտելիքների գնահատման նոր համակարգի՝ իր հիմքում ունենալով ժամանակակից համաշխարհային կրթական համալիրի առաջավոր փորձը, որին անցումը համահայկական մասշտաբով պետական քաղաքականության խնդիր է: Նախատեսվում է գնահատման «կրեդիտային համակարգին» անցնել ստորճանաչար, ըստ դասընթացների ու ամբիոնների, որպես պարտադիր նախապայման համարելով մասնագիտական դասընթացի վերաբերյալ ուսումնական ձեռնարկի հրատարակման հարցը, որը նշանակում է ընդհանրացումների ժամանակ նրկվող պատասխանատվություն և վարչապետության բացառում: Գնահատման նոր համակարգը նախատեսում է ուսանողական աշխատանքի որոշակի ազատականացում, դրան համընթաց, պատասխանատվության լուրջ զգացում ուսանողի կողմից կատարվելիք գիտա-տեսական գործունեության մեջ:

Առաջադրվող սկզբունքային տեղաշարժերը նախատեսում են փոփոխություններ գործող ուսումնական աշխատանքի, որպես համակարգի կրթության հիմնարար փաթեթ՝ առանձին աշխարհային համարելով լսարանային աշխատանքի ազատականացման գործառնությունը:

Ուսումնական ծրագիրը կազմված է երեք բաժիններից՝ տնտեսության, գիտա-կրթական և գնահատման (կրեդիտային համակարգի հիման վրա), նախատեսում ու ստանձնում է աշխատանքային անհրաժեշտ ծավալներ, դրանց իրագործման հնարավոր ու հաշվեկատ ուղիներ և գնահատման իրատեսական չափորոշիչներ:

Բաժին առաջին

«Հին Արևելք» հասկացության իմաստավորումը և նրա ժամանակատարածքային ընդգրկումը: Պատմական ժամանակաշրջանին վերաբերող սկզբնաղբյուրների բնորոշումը: Պատմագիտության սկզբնավորումն ու նրա զարգացման ընդհանուր բնագծերը:

Հին Արևելյան հասարակությունների ներքին կապացման ընդհանրական երևույթները և առանձնահատկությունները: Հասարակական առաջադիմության շարժիչ ուժի գնահատման գործունեությունը Հին Արևելյան քաղաքակրթությունների ներսում:

1. Հին եգիպտական քաղաքակրթություն /մ.թ.ա. 4-1-ին հազարամյակներ/ /ա/հնական և մարդկային ընտրություն: Նրանց փոխհարաբերման հարցը հին եգիպտական քաղաքակրթության մեջ: Եգիպտոսի հին պատմություն սկզբնաղբյուրները և պատմագրության զարգացումը: Պատմության պարբերացումը և ժամանակագրությունը: Նրանց ընդհանրացված բնորոշումը:

2. Հին Միջագետքի քաղաքակրթություն /մ.թ.ա. 4-1-ին հազարամյակներ/ /ա/հնական և մարդկային ընտրություն: Նրանց փոխհարաբերման հարցը Հին Միջագետքի քաղաքակրթության մեջ: Հին Միջագետքի պատմության սկզբնաղբյուրները և պատմագրության զարգացումը: Նրա պատմության պարբերացումը և ժամանակագրությունը: Նրանց ընդհանրացված բնորոշումը:

3. Հին Միջագետքի քաղաքակրթություն /մ.թ.ա. 4-1-ին հազարամյակ/ /ա/հնական և մարդկային ընտրություն: Նրանց փոխհարաբերման հարցը Հին Միջագետքի քաղաքակրթության մեջ: Հին Միջագետքի պատմության սկզբնաղբյուրները և պատմագրության զարգացումը: Նրա պատմության պարբերացումը և ժամանակագրությունը: Նրանց ընդհանրացված բնորոշումը:

4. Հին Միջագետքի քաղաքակրթություն /մ.թ.ա. 4-1-ին հազարամյակ/ /ա/հնական և մարդկային ընտրություն: Նրանց փոխհարաբերման հարցը Հին Միջագետքի քաղաքակրթության մեջ: Հին Միջագետքի պատմության սկզբնաղբյուրները և պատմագրության զարգացումը: Նրա պատմության պարբերացումը և ժամանակագրությունը: Նրանց ընդհանրացված բնորոշումը:

5. Հին Միջագետքի քաղաքակրթություն /մ.թ.ա. 4-1-ին հազարամյակ/ /ա/հնական և մարդկային ընտրություն: Նրանց փոխհարաբերման հարցը Հին Միջագետքի քաղաքակրթության մեջ: Հին Միջագետքի պատմության սկզբնաղբյուրները և պատմագրության զարգացումը: Նրա պատմության պարբերացումը և ժամանակագրությունը: Նրանց ընդհանրացված բնորոշումը:

նրանց ընդհանրագլխած բնորոշումը: Հին խնթական արժեքի ձևավորման և անհետացման համամասնության բացահայտումը: Նրա ներքին կյանքի իմաստավորումը և նրան յուրահետևող թուլությունների բացահայտումը: Հայ-խնթական առնչություններ: Խնթական հասարակության բնորոշ ազդեցիկ պահվածքի հիմնավորումը:

4. Ասորեստանյան քաղաքակրթություն /մ.թ. ա. 2-րդ-1-ին հազարամյակներ/

-Բնական և մարդկային ռեսուրսներ: Նրանց փոխհարաբերման հարցը ասորեստանյան քաղաքակրթության մեջ: Ասորեստանի պատմության սկզբնաղբյուրները և պատմագրության զարգացումը: Պատմության պարբերացումը և ժամանակագրությունը: Նրանց ընդհանրացված բնորոշումը: Ասորեստանյան քաղաքակրթության ձևավորման և անհետացման համամասնության բացահայտումը: «Տարածքային շահ» հասկացությունը և նրա դերը ասորեստանյան քաղաքակրթության ներքին և արտաքին կողմնորոշումները: Խնթական հարաբերությունները նրա սոցիալ-տնտեսական, քաղաքական առաջադիմության պատմության մեջ: Ասորեստանյան «ժամաշխարհային» տերության ռազմա-քաղաքական բնագծին հատուկ պնդական համակարգի իմաստավորումը: Հայ-ասորական հարաբերությունների արդյունքները: Ասորեստանի հասարակությանը բնորոշ ազդեցիկ պահվածքի հիմնավորումը:

5. Արևելամիջերկրածովյան ավազանը հնադարում /մ.թ. ա. 2-1-ին հազարամյակներ/

-Բնական ռեսուրսի դերը Արևելամիջերկրածովյան ավազանի քաղաքակրթությունների ձևավորման գործում: Ժողովրդավազմավորման գործընթացն աշխարհատարածքում: Հնագույն պնդավորումների պատմության սկզբնաղբյուրները և պատմագրության զարգացումը: Աշխարհագրական միջավայրի ազդեցությունն ավազանում ձևավորված քաղաքակրթությունների ներքին և արտաքին զարգացման կողմնորոշումների հարցում: Փյունիկյան գաղութացման արժեքավորումը: Ժամանակի «մեծ խաղը» և աշխարհատարածքի վերածվելը հակասությունների հանգուցակետի: Երևույթի սոցիալ-տնտեսական հիմնավորումը: Իրատեսության /մասնավոր շահի ձևավորման նախաշրջան/ նկատմամբ անվստահությունից հոգու փրկության գաղափարի առաջադրմանն անցնելու անհրաժեշտության հիմնավորումը:

6. Հին իրանական քաղաքակրթություն /մ.թ. ա. 3-1-ին հազարամյակներ/

-Բնական և մարդկային ռեսուրսներ: Նրանց փոխհարաբերման հարցը հին իրանական քաղաքակրթությունը: Մեջ: Հին իրանի պատմության սկզբնաղբյուրները և պատմագրության զարգացումը: Նրա պատմության փուլավորումը և ժամանակագրությունը: Նրանց ընդհանրացված բնորոշումը: Տարածաշրջանային զարգացումները և հին իրանական քաղաքակրթության նախափուլի տեղն ու արժեքավորման գործակիցը:

Հնդիրանական ցեղերի մուտքը տարածաշրջան և համակցությունը նոր գաղափարի առաջադրումը: Պարսկական տերության կազմավորումը և նրա ներքին կյանքի առանձնահատկությունները: Հայ-պարսկական հարաբերությունների իմաստավորումը: «Համաշխարհային շահի» գաղափարի առաջադրումը և նրան հասնելու ուղիների որոնումը: Պարսկական բարեփոխումների ուղղվածությունը և «միասնություն աշխարհի» գաղափարի առաջադրումը: Հույն-պարսկական հակադրությունը որպես մասնավոր և համայնավոր ապրելակերպերի ընդհարում: Ռեժիմ մտավոր նախաձեռնության անցումը որպես հասարակական առաջադիմության նոր արժեքավոր: «Երկբևեռ աշխարհի» մոդելի առաջադրումը: Հին պարսկական միջավայրին բնորոշ ազդեցիկ պահվածքի հիմնավորումը:

7. Հին հնդկական քաղաքակրթություն /մ.թ. ա. 3-1-ին հազարամյակներ/

-Բնական և մարդկային ռեսուրսներ: Նրանց փոխհարաբերման հարցը հին հնդկական քաղաքակրթության մեջ: Հին հնդկաստանի պատմության սկզբնաղբյուրները և պատմագրության զարգացումը: Նրա պատմության պարբերացումը և ժամանակագրությունը: Նրանց ընդհանրացված բնորոշումը: Հնդկաստանի պատմության հնագույն շրջանի /Ինդուսյան/ ինքնատիպության հիմնավորումը: Մարդկային գործնիքի դերը նրա հետագա առաջադիմության մեջ: Հնդարիական ցեղերի՝ որպես նոր նախաձեռնող ուժի, թափանցումը Գանգեսի հովիտ և նրանց նորարարությունը քաղաքակրթության սոցիալ-տնտեսական և քաղաքական կյանքում: Հին հնդկական և մերձավոր արևելյան քաղաքակրթությունները: Նրանց նմանություններն ու տարբերիչ գծերը: Հասարակական միջավայր. պնդություն և պաշտամունք հարաբերակցությունը: Նրա առնչությունները ձևավորվող Արևմտյան քաղաքակրթության հետ: Հին հնդկական քաղաքակրթությունը որպես աշխարհատարածքային դրսևորում: Նրա ազդեցության ոլորտների բացահայտումը:

8. Հին չինական քաղաքակրթություն /մ.թ. ա. 2-1-ին հազարամյակներ/

-Հնաեկ և մարդկային շենությունը: Նրանց փոխհարաբերման հարցը եին չինական քաղաքակրթության մեջ: Հին Չինաստանի պատմության սկզբնաղբյուրները և պատմագրության զարգացումը: Նրա պատմության պարբերացումը և ժամանակագրությունը: Նրանց լուսիններացված բնութաւորը: Հին չինական քաղաքակրթությունը որպէս դասական հեռավոր-աղակաւոր դրսերում: Այն որպէս անընդհատ համայնքովոր արժեք: Հին չինական քաղաքակրթության դերը համամարդկային առաջադիմության մեջ: Նրանում էվոլյուցիայի և հեղափոխության ուղիների համադրման հարցի քաջահայտումը: Հինական կայսրերի շարունակական բարեփոխումների քաղաքականությունը և նրանց ներքին ուղղվածությունը: Գիտակցված անցումը համայնավարությունից մասնավորին: Այն որպէս փակ, սեփական շենությունների վրա հիմնված և, բնականաբար, դրանք հարգող հասարակական առաջադիմության տարրերով: Հին չինական հասարակությանը բնորոշ ագրեսիվ պահվածքի հիմնավորումը:

Բաժին երրորդ

Սոր ուսումնական պլանի համաձայն «Հին Արևելքի պատմություն» դասընթացին հետևացված ընդհանուր ժամաքանակը /84 ժամ/ բաշխվում է ներքոհիշյալ թեմատիկ հաշվարկի հիման վրա:

N	Թեմաների անվանումը	Լաւրանային ժամերը			Ստեղծագ. ժամեր 20 ժամ
		դաս.	գործ.	ընդ.	
1.	«Հին Արևելք» պատմական հասկացության իմաստավորումը	2ժ.	2ժ.	4ժ.	
2.	Հին Եգիպտոսական քաղաքակրթություն /մ.թ.ա. 4-1-ին հազ./	4ժ.	6ժ.	10ժ.	
3.	Հին Միջագետքի քաղաքակրթություն /մ.թ.ա. 4-1-ին հազ./	4ժ.	6ժ.	10ժ.	
4.	Հին խնայական քաղաքակրթություն /մ.թ.ա. 2-րդ հազ./	2ժ.	4ժ.	6ժ.	
5.	Ասորեստական քաղաքակրթություն /մ.թ.ա. 2-րդ հազ./	2ժ.	4ժ.	6ժ.	
6.	Արևելամիջերկրակածովյան ավազանը հնադարում /մ.թ.ա. 2-1-ին հազ./	2ժ.	4ժ.	6ժ.	
7.	Հին Իրանական քաղաքակրթություն /մ.թ.ա. 3-1-ին հազ./	2ժ.	4ժ.	6ժ.	
8.	Հին Հնդկական քաղաքակրթություն /մ.թ.ա. 3-1-ին հազ./	2ժ.	4ժ.	6ժ.	
9.	Հին Չինական քաղաքակրթություն /մ.թ.ա. 2-1-ին հազ./	4ժ.	6ժ.	10ժ.	
ԸՆդ.		24ժ.	40ժ.	64ժ.	20ժ.

-«Ստեղծագործական ժամեր» բաժնում նշված 20 ժամը նախատեսվում է դասընթացի շրջանակում ուսանողական գիտական գործունեության համար /տեքնիկական, թեգիկական/, որը բաշխվում է հետևյալ կերպ՝ 5օւս. x 4ժ=20 ժամ: Այդ ժամերի համար դուսախտար վարձատրվում է կիսամյակի վերջում՝ կատարված արդյունքը մասնագիտական ամբիոնի կողմից հաստատվելու դեպքում:

-Առաջադրվող «Ստեղծագործական ժամեր» բաժինը նախատեսում է լսարանային աշխատանքի ազատականացում, անհրաժեշտ փոփոխումն ենթարկելով գործող դասախոսություն-գործնական աշխատանք հարաբերակցությունը ու պայմանավորված է ուսանողների շրջանում ակտիվացող գիտական գործունեությամբ: Այն չի կարող գերազանցել գործող ժամաքանակի 1/3 մասը:

Կարևոր խնդիր է դասընթացի համար ըստ առաջադրված թեմաների սկզբնաղբյուրային, գիտա-տնտեսական, ուսումնա-մեթոդական նշանակության անհրաժեշտ հրատարակչական տեղեկատվության նախապատրաստումն ու առաջադրումը:

Բաժին երրորդ

2007-/08 ուսումնական տարում անցնել «Հին Արևելքի պատմություն» դասընթացից ուսանողների գիտելիքների գնահատման կրեդիտային համակարգին՝ հիմք ընդունելով հետևյալ չափորոշիչները.

Փուլ-1 /Սովորել աշխատել/

-հաղորդվող նյութի տեսական մշակում /աշխատանք դասադրի վրա/ - 7թալ.

-գործնական պարապմունքների ուսանողի մասնակցություն գործակիցը- 7 թալ.

- ուսանողի ներկայությունը խաբանային աշխատանքին -6 բալ.

- աշխատանք սկզբնաղբյուրների վրա⁺ - 10 բալ

- աշխատանք գիտա-տնտեսական գրականության վրա⁺⁺ - 10բալ

Փուլ - 2 /Մտափոր ապրանքի արտադրություն/

- գիտական ռեֆերատի (թեզի) պատրաստում և պաշտպանություն⁺⁺⁺ - 10 բալ

- դասընթացի շրջանակում ուսանողի գիտելիքները գնահատվում են ներկու փուլով, որոնց արդյունքով ամենաբարձր միավորը 50 բալն է, որից 40 բալը տրվում է առաջին փուլին, 10 բալը ներկորդ փուլին:

- 0-ից մինչև 20-ը - «անբավարար»

- 21-ից մինչև 30-ը - «բավարար»

- 31-ից մինչև 44-ը - «լավ»

- 45-ից մինչև 50-ը - «գերազանց»

- Գերազանց գնահատվել կարող է այն ուսանողը, որը, որպես պարտադիր նախապայման, առաջին փուլի արդյունքներով հավաքել է 40 բալ, իսկ գիտական նախաձեռնությունն արժանացել է մասնագիտական հանձնաժողովի /ամբիոնի/ հավանությանը՝ հավաքելով 5 և ավելի բալ.

- գիտությանը կարող են զբաղվել բոլոր ուսանողները, ըստ ցանկության, ովքեր կարող են «գերազանց» գնահատվել միայն այն դեպքում, եթե ներկու փուլերի արդյունքներով հավաքած միավորների գումարը հավասար /ավելին/ է 47 բալի(ց):

Գիտելիքների գնահատման առաջադրվող տարբերակի գլխավոր նպատակն ուսանողական միջավայրում մասնավոր նախաձեռնությունների ակտիվացումն է, որը նախատեսում է աշխատանքային սահմանված ծավալների իրականացում, որոնց համակարգումից ծնվում է գիտական որակը:

Резюме

Современный прогресс в научно-образовательной системе высшего образования дает повод для серьезных размышлений и действий. Поскольку основная ответственность за это лежит на выпускающих кафедрах, то предлагаемая инициатива - это попытка внедрить предложенные новшества. Они напрямую связаны с системой кредитования, которая постепенно внедряется в вузовское образование, предусматривая (в рамках других курсов действующих учебных программ, в том числе «Историю древнего Востока») ряд пропорциональных качественных изменений.

-прозрачность обязательств между студентом и преподавателем в учебном процессе с учетом приоритетности принципа научного сотрудничества.

-пересмотр целенаправленности лекций: переход от действующей сегодня научно-теоретической информации в научно- философское качество.

-совершенствование принципов системы оценки знаний, согласно которой первоочередным считать не ответ студента, а объем выполненных им научно-теоретических работ.

-исходя из логики формирования видоизменяющегося общественного прогресса, оценивать продукт производства умственного товара (в том числе в рамках курсов по специальностям) устанавливая конкретные критерии.

Все это нашло освещение в представляемой работе, которая, несомненно не претендует на полноту и нуждается в дополнениях и рекомендациях.

ԱրՊՀ, պատմության ամբիոն

* մասնագիտական ամբիոնը սահմանում է մշակվելիք սկզբնաղբյուրների քանակը

** մասնագիտական ամբիոնը սահմանում է մշակվելիք գիտա-տնտեսական ուսումնասիրությունների քանակը

+++ աշխատանքը հաշվեգրվում է 5-10 բալ հավաքելու դեպքում

ПРЕПОДАВАНИЕ ИСТОРИИ КАК ОСНОВНОЙ ИНСТРУМЕНТ ФОРМИРОВАНИЯ И РАЗВИТИЯ ИСТОРИЧЕСКОГО СОЗНАНИЯ ОБЩЕСТВА АРЦАХА

Л.Э.Варданян

“Человек будущего это тот, у кого окажется самая длинная память”.
Фридрих Ницше

История – прекрасное средство развития личности на основе знаний прошлого. Она позволяет развить способность критически анализировать прошлое, умение делать собственные выводы на основе самостоятельной работы с историческими источниками. Изучение истории дает возможность получить знания – сведения, помогающие ориентироваться в национальной и мировой культуре. Занятия историей способствуют формированию так называемого историзма, т. е. способности понимать и оценивать события прошлого в их взаимосвязи, процесс возникновения, развития и исчезновения общественных явлений.

Для чего необходимо преподавать историю в школе? Чтобы научить учащихся самостоятельно анализировать историческую информацию, ориентироваться в настоящем с опорой на опыт прошлого.

Հայ գրականության պատմության մեջ՝ այնպիսի ժամանակաշրջաններում, արժանագրվել են բանավիճային սուր բնույթ կրող գրական փաստեր, երևույթներ, որոնք զբաղեցրել են ժամանակաշրջանի գրական շրջանակների՝ գրողների, գրաքննադատների, հասկազուս՝ հայ պարբերական մամուլի ուշադրությունը, որոնք իրենց էջերում զետեղել են ներկուցման արժանանքներ, սակայն՝ երբեմնակի էլ, բանավիճող կողմերից մեկի ճնշող ազդեցությամբ լռեցրել են մյուս կողմը ներկայագիտող բոլոր ծայրերն արտահայտող աղբյուրները: Նման դեպքերում հարվածն ընդունող կողմերը հաճախ իրենք են հանդես եկել իրենց պաշտպանությամբ: Այս դեպքերում ևս ոչ միշտ է, որ նպատակը դրական արդյունք է ունեցել:

Մեր անդրադարձները մեկնողական և արժեքաբանական բնույթ ունեն XIX դ. երկրորդ կեսի հայ պարբերական մամուլի, գրական շրջանակների ու նրանց քննական միտումների, նախադրությունների, գրողական ուղղվածության ու, այսպես ասած, խմբակցությունների, արևմտիկական բանավիճումների, նպատակային ու միտումնավոր գրաքննադատության, ազնիվ ու, միտժամանակ, խարդախող բնույթի և նրա դրսևորումների վերաբերյալ, իսկ դրանք, առավելությամբ՝ դիտողական, ապա՝ կատարի հարձակվողական բնույթ էին կրում...

Նման դիտարկումներից մեկնության գնալով, փորձենք արժեքավորման դնել խնդրող առարկա բաղադրյալը՝ քննելով Ասորես Բեկնագարյանի հեղինակությամբ «Գաղտնիք Ղարաբաղի» պատմական ուսումնասիրությունը և նրա շուրջ ստեղծված անհանգիստ մթնոլորտը, գրական այսպես ասած՝ ահաբեկչությունը:

1886թ. Ս. Պետերբուրգում Առաքել աղա Մատուրյանի մեկնանաությամբ, Մակաչ փարդապետ Բարխուդարյանի թարգմանությամբ հրատարակվել է Ասորես Բեկնագարյանի «Գաղտնիք Ղարաբաղի» աշխատությունը:

Թարգմանիչը գրքին կգում է հակիրճ բացատրություն՝ «Յառաջաբանություն թարգմանիչ» վերնագրով, որում որոշակի տեղեկություններ է հատորում գրքի հեղինակի ինքնության, նրա նպատակի, ծրագրի ու համառոտ բովանդակության նւ այլ հարցերի շուրջ՝ ավելացնում հետևյալը։

Մ. Բարխուդարյանը Շաշիում էր ապրում, երբ 1881թ. մայիսի 5-ին յուր բնակարանն է մտնում մի ավելադր ծնունդի, որը, չնայած պատկանելի տարիքին՝ ձեռք էր և գեղեցիկ։

Վերջինս թևատակից հանում է փայտաթված մի ծրար ու մեկնելով վարդապետին՝ ասում. «Ես յսնցի որ դուր իմ համագիտացին էք և հետազոտում էք ծնունդներից քաղել Ղարաբաղը՝ անցնել պատմությունը, այս պատճառաւ ես եւրոպայից եմ անելով եկի ձեզ մօտ։ Համարեմ՝ թե մի դարին մօտենում է որ ես այս «Գաղտնիք Ղարաբաղի» ձեռագիրը մատուցի նման գգույթներով պահպանել իմ։ Սորա մէջ թե՛ շատ փտանգաւոր գաղտնիքներ կան և թե՛ Ղարաբաղի պատմութեան վերաբերեալ անգին գանձեր։ Բայց այսուհետև էլ կմանքիցս չեմ վախում, որովհետև մոտե մօտենում է և սորա վերջին գլուխը գրել, պրծել եմ։ Համագիտացիութեան սերն իմ թաշնով ձեզ մօտ բերաւ. քանզի քաղցր է հայրենիքն, քաղցրագո՛յն ծննդեան տունին և սիրելի համագիտակիցն»¹։

Այսուհետև ծնունդին մի վերջին խնդրանք է անում թարգմանչին. «Հիմի ձեզ եմ նուիրում «Գաղտնիք Ղարաբաղի»-ն փառահօրէն։ Դուք նախ դուրս լնգուն աշխարհաբար փոխնցեք և ապա հրատարակել տուէք, որպէս զի դիւրութեանի լինին դուրս իմաստներն հասարակութեան։ Հիմի գրականական լնգուն աշխարհաբարն է և ոչ թե գրութարն, որ շատերին անհասկանալի է»²։

«Նեւաբրքիր այս պատմությունը ունի մեկ այլ՝ հեղինակային միջամտություն»։ Արքան Բեկնազարյանի կտակը. «Երկու տարի էլ համբերեցեք և ապա հրատարակել տուէք, եթէ արժան կը համարէք հրատարակութեան և եթէ կը յարգէք իմ կտակը»³։

Ծնունդին չլսեց նույնիսկ Բարխուդարյանի թախանձանքները՝ որեւէ պատիվ ընդունելու մտայն. «Իմ վարձատրությունը այն է, որ տպագրել տար այդ ձեռագիրը. իմ յարգանքը և պատիվը այն է որ ճշտի կատարեք իմ կտակը և պատուէրը. իմ ամուսնը և ազգանունը կիմանաք ձեռագրից»⁴։

Առաջաբանում Մ. Բարխուդարյանը նշում է, թե գիրքը (ինչպես հատուկ է մեր որոշ պատմիչ-մատենագիրների ներկայություններին) չունի ոչ առաջաբան, ոչ գլուխները բացահայտող բովանդակային վերնագրեր։

«Գաղտնիք Ղարաբաղի»-ի նյութն ամփոփված է երկու հատորում։ Թարգմանիչը աղբյուրազիտական տեսակետից ավելի քարծր է գնահատում երկրորդ հատորը, որում «ժամանակագրական կտրույտ, գեղեցիկ դասադրուած են թե՛ պատմական անցքերն և թե՛ գանազան մտքդկներին գրուած բոլոր նամակներն։ Իսկ առաջին հատորում ընդհակառակն է տեսնում»⁵։

Գրքի ժամանակագրությունը փաստված է 1795 թվականից սկսած։ Մակայն հեղինակը հետադարձ հայացք է կատարել՝ պատմական փաստերի մեկնությունը հասցնելով մինչև Առանշահիկների առաջին թագավորական տունը։

Յով հայտնելով առաջին հատորում բացակայող ժամանակագրության ոչ պատշաճ ձևի առթիվ՝ Բարխուդարյանը հարկ է համարել յուր կողմից որևէ միջամտություն չանել այդ հարցում և պահպանել նյութը նույնությամբ, որն արժեքավոր դիւրեռոշում է։

Թարգմանիչ աված տեղեկության համաձայն՝ գրքի առաջին հատորի նյութը շարադրել է Ապրեմ Բեկնազարյանը հոր՝ Աբրահամ Բեկնազարյանի թելադրությամբ, իսկ երկրորդ հատորը կայացել է վերջինիս կարգադրությամբ ու հոր և որդու միասնական խորհրդակցական եղբայնագումներով։

Աբրահամ Բեկնազարյանին Մակար Բարխուդարյանը համարում է «երեւելի պատմագետ» (որը ավերից հանել է Րաֆիյուն), որի շնորհները նրանցել են թե՛ վարած խոսակցություններից և թե՛ արած խորհրդածություններից, հատկապես՝ նրա շարադրել է Աղվանից աշխարհի ինքնակալների, իշխողների դասավորությունը։ Բարխուդարյանը դրվատում է Աբրահամ Բեկնազարյանին, նրան անվանում է «հմուտ պատմաբան», որը վկայակոչելով Աղվանից պատմությունը և նրան վերաբերող այլ ձեռագիր աղբյուրներ, ցույց է տալիս նրա հետաքրքիր պատմությունը յուր կառավարող օղակներով, թագավորական, իշխանական-նախարարական և ապա՝ մեղիքական անցնելով. ըստ ծննդի կորից օրդի... որը նույնպես անարժեք է համարում Րաֆիկի՝ նկատի ունենալով Բեկնազարյանի նյութի ներկայացրած ձևը։

Թարգմանիչը գավալի է համարում այն փաստը, որ, գավթը, ոչ թուր իշխանական-միջրական տների մասին է տեղեկություններ ներկայացրել «Գաղտնիք Ղարաբաղի»-ի հեղինակը:

Միաժամանակ, թարգմանիչը գիրքը ներկայացնում է որպես ամենաջինջ հայելի, որը «պատկերացնում է ընթերցողաց աչաց առջև այն ամեն գաղտնի յարաբերությունները և թաղարքական ձգտումները, զորս ունեցած են Ղարաբաղի հայ հարազատ-մելիքներն միմեանց հետ, հայ հարազատ կաթողիկոսներն և մելիքներն Ռուսաց հետ, Ռուսներն Վսլոց հետ, ճրջ-խաներն ճրջ-մելիքների հետ և սորա նոցա հետ. պարսից շահերն և շահ-ժառանգն Անգրկովկասի թուրք խաների հետ և Հիսիսային Տաղատանի հոգևոր և մարմնատուր գլուխների հետ և վերջիններս առաջնոց հետ»⁶:

Նա անհերքելի է համարում «Գաղտնիք»-ում ներկայացրած պատմական փաստերը հայ-տուական, հայ-պարսկական, հայ-թուրքական առնչությունների շուրջ, այդ ամենից առաջացած ժողովրդի վերաբերմունքը առ Խուսական ինքնակալություն և Խուսական քաղաքակրթություն:

Դրվատում է գրքում ներկայացրած հայ մելիքների քաջագործությունները Ղարաբաղի խաների Փանահի, Իբրահիմի և Մեհտի Ղուլիի դեմ վարած կռիվներում՝ ընդգծելով նրանց դերը, ապա՝ 1826-28թթ. ռուս-պարսկական և Հյուսիսային Դաղստանում տեղի ունեցած արյունալի կռիվներում, բախումներում, պատերազմներում:

Նույնպիսի հեղինակի մասնագիտական հմտության շուրջ ասում է. «Հեղինակին մի ամենագովելի յատկության այն է՝ որ թուր նամակների և շահական երովաբառակների աստճեմները նյութաթեմա, ժամանակագրական կարգաւ, գետնողած է «Գաղտնիք Ղարաբաղի» մէջ իբրև անհերքելի և շուրջիկի փաստեր»:

Ա. Բեկնազարյանի ոճը թարգմանիչը համեմատում է Եղիշի ոճի հետ և վատ գրաբար լեզու չէր անվանում մելիքների նամակագրության լեզուն, իսկ սովորական անձանց և մնացած մելիքների նամակների լեզուն համեմատում է Ղարաբաղի գեղջկական բարբառի հետ, և որը հաճախ, ըստ թարգմանչի՝ բազմազ անհասկանալի են: Այդ է պատճառը, որ ուսումնասիրության յուրաքանչյուր հոդվածի վերաբերյալ յուր հայրենակցի հանդեպ աշխատության լեզուն աշխարհաբարի վսիսելու..., որպէսզի ընդհանրության կողմից հասկանալի լինի: Գրաբարը, հարկավ, թե միմիայն եկեղեցու մենաշնորհին էր փաստված և թե՛ իստուրկ մասնագետների քննության ավելի գերադասելի առանցք համարված՝ սկզբնաղբյուր կոչվելու իմաստով..., բայց որն այժմ էլ, անգամ ուսանողությունը, նաև գիտությանը զբաղվող մասնագետները դյուրությամբ չեն ընկալում, չեն հասկանում մարտի:

Այդպիսի, այդ ամենը տեսանելի է գրքում և ճիշտ է դիտված ու գնահատված թարգմանչի կողմից:

Մ. Բարխուդարյանը շնչգծում է. նաև յուր այն նպատակը, ըստ որի՝ ցանկանում էր գիրքն առանց թարգմանության տպել, բայց հարկադրված էր զուգել այն, քանզի գրքում անհասկանալի բառերի, դարձվածների ծանոթագրական ցանկը ավելին կլիներ, քան՝ թու՛ն նյութը, ուստի թողնում է յուր միտքը. «Ով կարդացած է «Արագը տարին կտարի» գիրքը՝ նա լիովին կը համոզուի որ Ղարաբաղի գեղջկական բարբառով և ոճով գրուածներն անմարսելի կերպովութն են ոչ միայն արտաքին Ղարաբաղի հայ Խաւարակութեան համար, այլ և նոյն իսկ գիտնոց»⁷:

Ուսումնասիրողը ուշադրություն է դարձնում նաև հետաքրքրության ներկայացնող պարսկերեն և թուրքերեն նամակներին ու նրանց ունեցած ոճին, որոնք ինքը՝ հեղինակն է փորձել թարգմանել և փորքիշատել հայախոս դարձնել, բայց որոնք, ըստ հեղինակի, դրսևորել են «թերաւան և պարսկական ոճի յատուկ ճապաղ և տաղտուկ ձևերն»⁸:

Բարձր գնահատելով պատմական նման ուսումնասիրության դերը՝ Մ. Բարխուդարյանը հակված է այն ճիշտ մտքին, որ նա «կարող է մեծ լույս սփռել ոչ միայն Ղարաբաղի պատմական միջոթեան վերայ, այլ և Ռուսաց Անդրկովկասի պատմական միջոթեանց, որը գաղտնի կատարուած լինելով՝ ցարդ մնացած են անյայտութեան մէջ»⁹:

Թարգմանիչը միաժամանակ քննության է դնում աշխատության ժանրային բնույթը՝ կասկածանք հայտնելով, թե՛ հմուտ պատմաբանները «Գաղտնիք» պատմությունն թե՛՞ զատմական վեպ, թե՛՞ պատմական վեպ կհամարեն, այն «լույս տնայնելու արժանի» էր թե՛՞ անպոծան. պատմութիւն է թե՛՞ պատմական վեպ, ընդհի՞ր գրքը է թե՛՞ հոռի.՝ այդ վճռները մենք թողնում ենք հմուտ պատմաբանների անաչառ քննադատութեան և որոշման»¹⁰:

Մ. Բարխուդարյանը խոսում է նաև մեկ այլ կարևոր, տեսական թարգմանական արվեստին՝ վերաբերող արժեքի շուրջ, այն է՝ «Մենք մեր կողմից Խաւարակ մի բառ՝ անգամ արեւացնելու և

պակասեցնելու և առանց նորա ոգին և իմաստները այլայլելու հաւատարմաբար թարգմանեցինք»¹¹:

Թարգմանությանը գուգահեմ՝ նա պատմությանը կցել է ծանոթագրություններ:

Յուր առաջաբանի մեջ, սակայն, թարգմանիչը նշում է, թե 1884թ. օգոստոսի 30-ին «Մահտեսի Բալա Զարարեանցի տանից Դալիթ բէկ Գրիգորեանցի տուն վախադրուելու ժամանակ՝ երեկոյան մութին, բնօնակիրների անզգուշութիւնից ծրարից ընկնում են ձեռագիրն և հինգ տալնալ գիրք, որք էին մի փոքր Սաղմոս, մի «Հացի խնդիր», մի «Կշուածաղիկ», Ա հատոր ընդհանուր պատմութեան և մի «Դիցազնական աշխարհ»»¹²:

Փնտրտութները արդյունք չեն տալիս:

Այս տխուր կորուստը թարգմանչին ստիպում է փոխել յուր գրած՝ ուսումնասիրությանը կցվելիք առաջաբանը:

Աշխատության մեջ բազմաբնույթ պատմական փաստաթղթեր, մեկնություններ կան, որոնք շրջանցել ու չգնահատել, մերժել՝ չի կարելի: Պատմական, գրական և այլ տիպի արժեքների վերհանումը և գնահատումը այժմ էլ գիտական և անհետաձգելի խնդիր է հայագիտության կողմից, որին նպաստակաուղղված է սույն աշխատանքը:

Резюме

История армянской литературы и периодической печати свидетельствует о явлениях, носящих спорный характер, привлечших внимание определенных литературных, критических и публицистических кругов.

В 1886г. в Санкт-Петербурге в переводе (с гравара на современный армянский язык) Бархударяна Макара при поддержке мецената Аракела –ага Цатуряна было издано историческое исследование Бекназаряна Аюреса “Тайна Карабаха”.

Вокруг этой книги в периодической печати вышли отрицательные и положительные отзывы, оценки, рецензии, а также были опубликованы исследования (Раффи “Тайна Карабаха”, Лео “Роман или история?”). В конечном итоге это исследование целиком было обесценено и отвергнуто.

В ходе подробного анализа мы пришли к выводу, что исследование “Тайна Карабаха” содержит разносторонние исторические документы, объяснения страниц борьбы армянского народа Арцаха - объяснения, связанные с русско-персидским нашествием в течение XVIIIв. и в начале IX в., с русско-армянскими-арцахскими интересными отношениями, а также с историческими повествовательными, фольклорными, языковыми, дипломатическими, политическими, художественно-литературными, этнографическими, управленческими, архивными и другими толкованиями, с раскрытием и выявлением истории научной мысли Арцаха.

С этой точки зрения исследуемый материал приобретает современное и научное звучание. Он выполнен в русле аналитического (герменевтического) и оценочного (аксиологического) подходов.

Ծանոթագրություններ

1. Բեկնազարյան Ա., Գաղտնիք Ղարաբաղի, Ս. Պետերբուրգ, 1886, էջ Ե-Զ:
2. Նույն տեղում, էջ Զ:
3. Նույն տեղում, էջ Զ:
4. Նույն տեղում, էջ Զ:
5. Նույն տեղում, էջ Է:
6. Նույն տեղում, էջ Ը:
7. Նույն տեղում, էջ Թ:
8. Նույն տեղում, էջ Թ:
9. Նույն տեղում, էջ Ժ:
10. Նույն տեղում, էջ Ժ:
11. Նույն տեղում, էջ Ժ:
12. Նույն տեղում, էջ Ժ:
13. Նույն տեղում, էջ Ժ:

ԱրՊՏ, գրականության և ժուռնալիստիկայի ամբիոն

ՇՐՋԱՂԱՐՁ ԴԵՊԻ ՀԱՎԱՍԱՐԱԿՇՈՒՅՈՒՆ

Հ. Գ. Մուսայելյան

Պատմական բոլոր ժամանակաշրջաններն իրենց հետքն են թողնում գեղարվեստական մտածողության վրա՝ վերջինիս տարբեր շերտերում հանդես գալով ինֆորմացիան այն ազդեցությունը, որոնք անհրաժեշտ են այս կամ այն ժամանակաշրջանի հոգևոր-պատկերային կառույցի արտաքին ճանաչողության համար: Հարմարվելով մեր ընկալման պահանջներին՝ պատմությունն անցնում է կերպարանավորման որոշակի փուլեր՝ յուրաքանչյուրում հետզհետե հեռանալով իր արարման միջուկից: Հետևաբար նրա մասին մեր տեղեկություններում առկա չեն այն սկզբնական հղումները, որոնք ժամանակին կաղմնորոշել ու ձևավորել են նրա այս կամ այն տեսքը: Պատմությանը կատարված մեր անդրադարձներում էապես բազակայում են այդ սկզբնական հղումները, նրան սնուցած այն նախնական տարրերը (հոգևոր-մշակութային, հասարակական-պատմական և այլն), որոնք մերօրյա իրականության իրենց նոր խնդիրներով ասիք են տալիս նման անդրադարձներին: Այստեղից էլ, քստ Ռ-ոյան Բարթի, պատմությունը շատ հստակ ներկա է այնտեղ, որտեղ խոսք անգամ չկա պատմության մասին:

Իրենց հերթին պատմագեղարվեստական արժեքները նույնօրինակ համակարգով ժամանակներին ներկայանում են վերամարմնավորված տեսքով՝ կառված նրանց ընկալման արդի նպատակներից, ինչի հետևանքով էլ իրենց կայացման հոգեբանական նստաբեմում մեզ համար նրանք մնում են անտեսանելի: Անտիկ շրջանի արեղիայում, օրինակ, արդեն իսկ նկատելի է դառնում անհատի օտարումը հասարակությունից, հանգամանք, որն իր տարիմաստային դրսևորումներով հասնում է մինչև 20-րդ դար: Այս տարբեր ժամանակաշրջանների ստեղծագործություններում մարդու ներքին դրաման երկուստեք սկիզբ է առնում հոգևոր նույն վիճակից, տարածվում բովանդակային նույն դաշտում, սակայն տարբեր են նրանց տեղեկատվական աղբյուրները, գեղարվեստական խոսքի պատմական ակտիվները, ինչով էլ պայմանավորվում են այդ ստեղծագործությունների նպատամար մեր հոգևոր սահմանները:

Հնդիդուսի ստեղծագործություններում (մ.թ.ա. 8-7-րդ դարեր) մարդն արդեն հեռանում է «փմբային» մտածողությունից, սկսում է խորհնալ նրա և շրջապատի հետաքրքրությունների անհամատեղելիությունը: «Աշխատանքներ և օրեր» պոեմի կենտրոնում հասարակական միջավայրից օտարացած անհատն է՝ իր դասն խոհերով ու կանխատեսումներով.

*Կօտարանան հայրը ոյրու, ու ոյրին՝ իր հոր նկատմամբ,
Հյորրեկալլը՝ հյորի հանդեպ. բարեկամը՝ բարեկամի,
Շղբայրները առաջվա պես նրեր էլ չեն սիրի իրալ:
Շուտով նայնիսկ ծնը ծնողը կզրկվի իր պատիվներից...
Բիլուտ, բռնակալ մարդիկ միմյանց քաղաքները կգործանեն,
Անկախտ նորումն, արդարությունն ու լավ արարքը չեն շահի,
Ավելի շատ չարագործը, լավիչ մարդիկ կմեծարվին,
Արդարն ուժով կըրորչվի և ամուլթ կվերանա:*

«Անտիկ, միջնադարյան և վերածննդի գրականություն», էջ 398-399

Այս տրամադրությունները կարելի է տեսնել համաշխարհային պոեզիայի զարգացման հետագա ողջ գործընթացում՝ ընդհուպ մինչև Ավ. Խաչատրյանի «Աթու-Լալա-Մահարի» պոեմը: Սակայն տարբեր են ինչպես Հնդիդուսի, այնպես էլ Խաչատրյանի պոեմների ստեղծման նախապատմություններն ու դրույապատճանները, ինֆորմացիոն ներքին հոսանքները, ինչի արդյունքում նրանց տեքստային վերլուծությունը պահանջում է ճանաչողական տարբեր մեթոդականություն՝ արտաեպարված բանաստեղծական խոսքի ֆունկցիոնալ նշանակության մի շարք խնդիրներով:

Գեղարվեստական խոսքը հայորդակցության ժամանակ կորցնում է իր նախնական իմաստը՝ լեզվական քնդիմանոր կառույցի մեջ ստանալով ինքնաբացահայտման նոր հնարավորություններ: Նրա առաջացրած տրամադրությունները, զգայական վախճաններն ու այլն, որոնք, թվում է, հարցադրում են այդ խոսքը, իրականում սահմանափակում են նրա տարածական նշանակությունը՝ թույլ չտալով, որ լեզվական համակարգում խոսքը հասնի նշանային մակարդակի: Բանաստեղծական տեքստում բառն իր համար նոր պատմություն է ապրում, և այդ

ջանքը ոչ այլ ինչ է, քան հարցադրում տվյալ պահի իր գործունեությանը: Բանաստեղծության և բյուրի պատմության պլոմետային գիծը համապատասխանաբար կրում են նպատակի և ընտրության հեռավարները, իսկ միասնական ճակատում՝ իմաստի ազատագրման: Պատմության ակունքը մշտապես դուրս է մղվում բանաստեղծության «գալտնիքից», և այդ «ճգնաժամն» էլ հենց վկայում է նրա գոյության մասին: Ըստ այդմ՝ բանաստեղծության նկատմամբ պատմությունը մշտապես գտնվում է կրավորական կորգավիճակում և, ի տարբերություն իր մետաֆորիզացված եզու, ինքը չի մտնում նրա ընդհանուր կոնցենացիայի մեջ:

Իստահականի վերոնշյալ պոնում, օրինակ, պատմությունը «բացակայում է», ինչը չի կարելի ասել Հնվադուսի ստեղծագործության պարագայում: Առաջինի դեպքում տրամադրությունները տարածվում են պատմության թիվունքից՝ անսովոր մոնելով բանաստեղծական կառույցի մեջ, որտեղ պատմության ղեկավարությունը հասցված է նվազագույնի: Իսկ երկրորդի դեպքում պատմությունը նախորդում է յուրաքանչյուր տողի ընկալման գործընթացին («Կոտարասան հայրը ծրար, ու որդին՝ իր հոր նկատմամբ»)՝ լեզվական կառույցի ներքին համակարգում ստեղծման փակվելով ենթատեքստի տարածման հնարավորությունները: Պատմության միջամտությամբ բանաստեղծական խոսքը գրկվում է ներքին լարումից, կորցնում ազդեցության դինամիկան, ինչի հետևանքով և՛ տեմոդության բազմաբևեռ համակարգը, որն էլ հենց նրա կառույցի կարևորագույն սկզբունքն է: Ուստի և՛ այս երկու ստեղծագործությունները նմանվում են սոսկ արտաքին պլանում, իսկ ներքուստ նրանք տարբեր են, որովհետև տարբեր են նրանցում պատմության միջամտության շափն ու նպատակը: Ելնելով վերոնշյալից «Աշխատանքներ և օրեր»-ի տրամադրությունները չեն փոխանցվում «Աբու-Լալա-Մահաբի» պոեմի վրա, *պատմական մղում չի կատարվում*, ինչն էլ բացատրում է գրական ազդեցության հանգամանքը:

Գնաբովնուական խոսքի արտաքին մակարդակներում ազդեցության գործոնը պատմական փորձի յուրացման հետևանք չէ, այլ պարզապես էպիգոնություն, որտեղ չի կարող ներկա գտնվել գրականության պատմության գարգացման ընդհանուր շղթայակարգը: Իսկ, ասելով, գրական գոյագիծների տեղական հիմնադրույթներում պատմության ընկալման կերպն է՝ դրանից բխող հանգամանքներով, ինչը միաշախմատորեն չի կարելի ասել գրական ազդեցությունների դեպքում: Թուսանյան-Պոլշկին, Դուստակի-Պրուտ, Չարնեց-Մայակովսկի և այլ գրողներիցում համանման ընկալումն է ինչպես ժամանակի ու տարածության, այնպես էլ դրանց համապատասխան վրա գնաբովնուսի դերի ու նշանակության: Այս «գույեկիք» յուրաքանչյուրի վեպափետական և փիլիսոփայական հայացքների ամբողջական համակարգը սկիզբ է ածում պատմության սիրին նույնսիրից գզգզողությունից՝ հասնելով մինչև ինքնաստեղծություն բարձրագույն փիճակ, որին հետևում է արդեն կրոնական մատնումը մարգկային կեցությանը: Ի տարբերություն գրական ազդեցությունների, գոյագիծների քննության առարկան շրջանցում է հոգևոր-մշակութային փոխազդեցության գործոնները՝ ստեղծագործության տիպաբանական հիմքում վկայապահելով *ձևակերպված* ժամանակաշրջոնը:

Գրապատմական շղթայակարգի պահանջը ժառանգորդի ինքնատեղափոխումն է, նախորդի գրական կամքին շնորհակալելու վճիռ իրագործումը: Հոգևոր հաղորդակցության հերմետիկ պայմաններում խաղի կանոնները թելադրում է նախադրող ազգայնությունը ժամանակակցի ձեռնարկումներն առ բարձրագույն գաղտնիք: «Իմ գրականությունը գարգացած է ինքը իրմով, - գրում է Լյուտան Ջադրանը, - առանց որևէ մեկին հետևելով, ավանդույթից դուրս» («Նավատորմար», Երևան, 1999թ. «Ս. Սաչենց», հրատ., էջ 567): Իհարկե, «փնդ իրմով» գարգացած գրականություն գոյություն ունենալ չի կարող: Խոսքն այստեղ գրողի ինքնատեղափոխման մասին է, ժառանգության չափաբաժնի յուրացման նրա անհատական կուլտուրայի, որոնց ավելայությամբ գրական կամքի թելադրումը դառնում է անհատականացում, ինչպես այն անհատականության դարձավ Տոլստոյի դեպքում՝ Դուստակուի հանդեպ և Գյոթեին դեպքում՝ Հյուդերինի հանդեպ:

Հայ բանաստեղծության զարգացման պատմության ընթացքում հոգևոր կապերն ու անդրությունները լրել են տարբեր չափ ու բնույթ՝ կապված պատմական-հասարակական, աշխարհայնացիական-քաղաքական իրավիճակների, նյութով պայմանավորված հոգևոր-մշակութային մթնոլորտի և մի շարք այլ հանգամանքների հետ: Գրական ուղղությունների ու հոսանքների հետ փոխվել են նաև պատմական փորձի յուրացման գաղտնիքները, մեթոդներն ու եղանակները, և յուրաքանչյուր ժամանակաշրջանի համար պատմագիտությունն արժեքները բացել են իրենց նոր շերտերը, ստացել իմաստաբանական նոր բացահայտումներ: Թե՛ արևելահայ, և թե՛ արևմտահայ պոեզիան տարբեր ժամանակներում փոխազդեցություններ է կրել համաշխարհային մշակույթի հարուստ ժառանգությունից՝ նպաստելով հայ բազմադարյա բանաստեղծության բազմափառակարգ զարգացմանը:


20-րդ դարի պատմա-քաղաքական կարևորագույն իրադարձությունները, պարզամտիկ մանկախառն ներթափանցումը կյանքի տարբեր ոլորտներ, և այս ամենից բխող մարգկային

գյուղատնտեսության, նոր արժեքավորություններ են թելադրում գեղարվեստական մտքի պատմական ընթացքին: Դարասկզբին արդեն արևմտյան մշակույթը հետևում է գաղափարական ներքին բարդություններից՝ ստեղծելով »սեմանալոյաթ«¹ ու »սեմադափար«² մաքրու խաղային մի կերպար: Փլվում է հոգևոր բուրգը, սկսվում է խոսքիոնալ գիտակցության տեմդագին մղումը դեպի գերագույն ամլություն (Կապիկա), հանգում պատուրդի ու անկման, ուսիլիտար բարոյականության հիմնավոր գեղագիտության (Քալյու): Հաղթահարելով իրականությունը՝ գեղարվեստը գնում է նրա դեմ, «ապաիրականացնում» այն՝ ըմբռնում վայելել իրականության կյանքից բոլորովին տարբեր իրերի հետ փոխադարձությունների այլ ձևեր, - գրում է Օրտեգա-ի-Գասնիթը: - Մենք պետք է գտնենք, ստեղծենք վարվելակերպի նոր, մինչ այս չկամ տեսնել, որը չհամապատասխաներ այսօրվա յուրօրինակ պատկերներին: Այդ նոր կյանքը, այդ յուրվիճակը կյանքը ենթադրում է վերացնել անսկիզկան կյանքը, և հենց դա էլ գեղարվեստական ըմբռնում է ու գեղարվեստական վայելքը» («Մշակույթի փիլիսոփայություն», 1999թ., Երևան, «Ապրիլ» հրատ., էջ 148): Հմբռնման իր այս կոչը իսկանցի փիլիսոփան հանգցնում է կյանքի «բրոսցման» խաղային բնույթին, (որ գալիս է դեռևս կանոնի էսթետիկական հայացքներից)՝ մարդկանց բաժանելով երկու կարգի՝ «ակաեամլորների միաբանության և շարքային մարդկանց միաբանության», այսինքն՝ նոր արվեստն ընկալող և ընդունակաբար: Մարդկանց «դասակարգման» գրիճե նույնօրինակ սկզբում է կիրառել նաև անգլիացի փիլիսոփա-ազգիտիկոս Ջոն Մոլոուարտ Միլը՝ 19-րդ դարակեսին՝ սահմանելով նյութականության ու ցուցակական հաճույքի ընկալման երկու մակարդակ՝ ստորին (զգայական) և բարձրագույն (մտավոր): Սակայն, ի տարբերություն Օրտեգա-ի-Գասնիթի, որն «օժտված փորձառնություն» սկզբումը հասցնում է իր տրամաբանական հիմնավորումներին, Միլն իր նկատած երկու հաճույքների՝ մեկը մյուսի նկատմամբ առավելությունը պայմանավորում է հասարակական կարծիքով, վիճելի դեպքերում՝ մեծամասնության: Հասարակության սույնելով իրենականացմամբ՝ անգլիացի տրամաբան, փաստորեն, իր ռոգամտիկ բարոյագիտությունը կատարում է երկու հակադրականություն՝ այն ուղղակիորեն հոսցնելով աբսուրդի. ստորինը (զգայական-հասարակական) բարձրագույնի (մտավոր-անհատական) նկատմամբ մշտապես ունի մեծամասնական առավելություն, ինչը ինքն ին կարող լինել գեղագիտության չափանիշ: Մարդկանց տեսակի յուրօրինակ բաժանում ենր տեսնում նաև Միգելի դատողություններում, որոնք այս համապատկերում հիմնավորելու են գալիս Օրտեգա-ի-Գասնիթի վերահիշյալ դասակարգումը. «Ինչ մարդկանց բարձրագույն տեսակին որպես կերակուր կամ բալխասն է ծառայում, չափազանց տարբեր է ցածր տեսակի համար՝ գրիճե թույն պետք է լինի» («Բարոց և չարից անդին», Երևան, «Ապրիլ» հրատ., 1992թ., էջ 32):

Այսպեսով՝ հանդերձ, գեղագիտության նոր մոդելի կառուցման հաշվարկները չեն կարող կատարվել պատմական ընթացքից դուրս, «մարդկային» տարրերի իրագույն բացակայությամբ, ինչպես էլ դիպուկ լինեն հանճարող իսպանացու կոստումները նոր արվեստի զարգացման վերաբերյալ: Ներկան անցյալի գաթուցրիվ հարցադրումների պատմականն է՝ տրված հոգևոր հավասարակշռության հանգամանքներում: Այն փորձում է կլանել պատմությունը, նրբ վերջինս ընթանման ժամում է և իր իմաստային ամբողջականության մեջ չի հասցնում խցանվ գործողությունների զարգացումը: Չկա մահացած պատմություն, կա նրա մահին մահացած ինքնորոշացիա: Հետևաբար՝ չկա նաև պատմության դերի անկում, այլ կա ներկայի մեջ այդ դերի նշանակիչ ծավալում, որը, ինչպես Բրեյտի թատրոնը, իմաստային ու գիտակցական է, բայց ոչ նրբի՝ պատմականորեն:

Մշակույթային արժեքավորությունների հիմքում կրոնն է, որի թույլատրած զրուսաշրջություններն ավարտվում են ազդեցությունների մակարդակում և չեն կարող լինել պատմական կողմնորոշում որևէ ժողովրդի գեղարվեստական մտքի զարգացման համար: Տարբեր ժողովուրդների գեղարվեստից կատարած մեր ներթափանցումներն, ի վերջո, հանգում են քրիստոնեական մշակույթի կենտրոնածից դառնալ: Թե՛ արևելյան, և թե՛ արևմտյան ազդեցություններն իրենց որակավորյալ տատանումներով տարբեր հետևանքներ են ունեցել հայ գեղարվեստական մտածողության զարգացման գործընթացում՝ կախված պատմական-բարոյական ռիթմիկ փոփոխությունների հետևանքով հասարակական ընդհանուր գիտակցությունից, ինչպես նաև այդ ազդեցությունների տրված մեր իրավունքներից: Արևելյան լիրիզմի և արևմտյան դրամատիզմի փոփոխությունները մեր ժամանակներից հայ թատերականության մեջ առավել տեսանելի են դառնում 19-րդ դարի վերջին՝ սինվոլիստների երկերում, ուր հետզհետե գերիշխող են դառնում ինչպես Միգելի ու Վալենտի, այնպես էլ՝ Իսկանի գյուղատնտեսական (օնտոլոգիական) հայացքները: Բանականության նրբացման լարումը իմացաբանական նոր շերտեր է ծավալում Թուսանյանի և Բախեակյանի առողջագործություններում: Հատկապես վերջինիս փիլիսոփայական հայացքներում լուրջ

հնդաշրջումներն են կատարում Շուպենհուտերը, Նիզեն, Վագենբեր, որոնք պարզապես ճակատագրական նշանակություն են ունենում բանաստեղծի կյանքում: Անցած դարավերջին համաշխարհային ստանդարտային մեջ էվոլյուցիոն նոր դարաշրջան է բացում Եվրոպայում ազնվալայն տարածում ստացած էկզոտենցիայիգմը: Դարի բազմաթիվ տեղերում միաժամանակ դրսևառաջ իրադարձությունները հիմնավոր տեղադրված են կատարում հայ հոգևոր կյանքում՝ յուրի նպատեղով գեղարվեստական մաքի արևմտյան կողմնորոշմանը: Այս ընդհանուր համապատասխան վրա ընդլայնվում են արդի հայ բանաստեղծության բազմաձևակարգ տիրույթները: համաշխարհային գեղարվեստից կատարած փոխներդաժանցումներն ու ընկալման տո սկզբունքները վերաժանատավորում են պոեզիայի պատմական նշանակությունը իմաստաշնորտեր հայտնաբերում նրա բովանդակային ու կառուցվածքաբանական համակարգերում: Նոր սերնդի պոեզիայի պատմական ակունքները տարատեսակ հղակերումներով Սևակից, Զարենգից ու Վարդանից հասնում են ընդհուպ մինչև Նարեկացի ու վաղ միջնադարյան մշակույթ: Ավանդականի ու նորարարականի փոխհամատեղման առաջին փորձերից մեկը հենասական շրջանում ձևակերպվում է Ռազմիկ Դավայանը, որից հետո 60-ականների վերջերին այդ նրկույթն ի հայտ է գալիս բանաստեղծական կատարից ներքին մակարդակում, լատիճանաբար հանգում նրա մետաֆիզիկական ընկալմանը և, արտաքին տղի համար դառնալով անտեսանելի, լուրջ մտահոգությունները ներկայացնում գրաբնագաղափարային կապված պոեզիայի ինքնատարման, իրականությունից կատարած նրա փափսոստի և նման աղ բաների հետ: Հատկապես Ռ. Դավայանի պոեզիայում փոխհամատեղումն իրագործվում է կատարվածքային նրկու մակարդակներում՝ հնչյունային-իմաստաբանական և պատմական-մետաֆորային: Այս հարաբերություններն առանձին-առանձին ունեն իմաստային ներքին հակառակություններ և չեն կարող հանդես գալ ինֆորմացիոն միևնույն դաշտում: Հնչյունային-իմաստաբանական հարաբերությունը համապատասխանաբար գուցահեղծվում է դասական և ժամանակակից ընկալումներին, ինչը կարելի է ասել մեծ պատմական-մետաֆորային կառուցվածքային: Տեղափոխվելով իմաստաբանական դաշտ՝ հնչյունայինը կոդնում է իր գլխավոր հատկանիշները (խոսքի տիպը, պիսամիական, բազմաձայնայնությունը)՝ ստեղծագործության ընդհանուր կատարյուն հանդես գալով նվազագույն նշանակությամբ: Իր հերթին հնչյունային դաշտ տեղափոխվելով՝ իմաստաբանականը հրաժարվում է իր իմպուլսի բաղադրատարրերը (խորհրդանշային, մետաֆիզիկական, հոգեբանական-պատմականային և այլն)՝ ինֆորմացիոն ընդհանուր ազդեցության պարս իջեցնելով ցածրագույն նիշին: Այս իրավիճակում փոխներդաժանցումը կատարվում է անհավասար գործակիցներով՝ ճնշատեղադրային հարաբերություններում բազանելով նրանցից յուրաքանչյուրի ինքնատրույնությունը: Վերջնալ մակարդակներում նույնօրինակ սկզբունքներով կարող են հանդես գալ հնչյունային-պատմական և իմաստաբանական-մետաֆորային հարաբերությունները, որտեղ, սակայն, խաչածնում չի կատարվում, չի իրագործվում ավանդյալ-նորարարություն անհրաժեշտ փոխհամատեղումը: Հնոտաբար՝ այս մակարդակներում ակնկալվող տեղադրվածի արդյունքում նրանք ձևեր են բերում նոր հարաբերություններ (հնչյունային-մետաֆորային, պատմական-իմաստաբանական), որոնք և ճնշադրում են հետևյալ գծապատկերը.



Մետաֆորիզացվելով՝ պատմությունն անցնում է լեզվական հաղորդակցության ներդրական համակարգ՝ ներկայի հետ մնալով ակտիվ կապի մեջ: Իր հերթին պատմությունը խորորդանշող մետաֆոր բանաստեղծական արտաքին կառույցի մեջ հանդես է գալիս ներկայականի հարաբերությամբ՝ կապված տեքստի մեջ հնդինականի միջամտության աստիճանից. 1. պատկերային-ափանդական, երբ մետաֆորիզացվում է ժամանակն ու տարածությունը (այս դեպքում մետաֆորը տարածվում է հնդինակի ենթագիտակցական աշխարհից և օրինաչափ է դասական մտածողությանը), 2. պատմական-անհատական, երբ մետաֆորի է վերածվում պատմության իմաստը: Առաջին դեպքում պատմությունը «խմաստգործված է», քանի որ ծավալվում է անհատի գիտակցությունից դուրս և չի ուղղորդում նրա ձեռնարկումները: Երկրորդ դեպքում այն իմաստավորված է, քանի որ նրանից կախում ունեն անհատի կողմնորոշումները: «Իմաստը անհատական է, - գրում է Մ. Բախտինը. - նրա մեջ միշտ կան հարցը, դիմումը և կանխագուշակումը, նրա մեջ միշտ ներկուսն են (իրքը ներկուսական միմիում): Ղա ոչ թե հոգևորական, այլ իմաստային պերսոնալիզմ է» (М. Бахтин, «Эстетика словесного творчества», М., 1979, с. 372-373):

Պատմականության զգացողությունը ներկայի հետ բանաստեղծի հարաբերության անխառնափեղի կանխապայմանն է՝ արտահայտված նրա ընկալունակության վերժամանակային ինտանկարում: Կյանքի դիալեկտիկական ըմբռնումը («Իմ սկզբի մեջ իմ վերջն է», Թ. Էլիոթ) ժամանակային մեկ կետի շուրջ համախմբում է տարժամանակյա այն ազդակները, որոնք կողավորում են բանաստեղծության լեզվափոխակալը՝ ընդլայնելով բառիմաստի տարածաժամանակային դաշտը: Անցյալի գիտակցությունը բանաստեղծի հալստարակշռված «նա-ն է, որի առկայությամբ բանաստեղծական կառույցից արտամղվում են բոլոր այն ներկորդական իմաստները, որոնք ուղեկցվում էին բառային փոխանցումների ճշգրիտ նշանակությամբ: Բանաստեղծության ինֆորմացիոն ամբողջական համակարգում անցյալի ներգրավումը կատարվում է ինքնաբերաբար, և նրա առանձին բաղադրատարրերի միասնական գործունեությունը պայմանավորված է բանաստեղծի ընդհանուր կրթական մակարդակով, հոգևոր զորքով և կենսագրական հանգամանքներով, որոնց պատշաճ առկայության դեպքում անցյալը ձևեր է քննում ենթատեքստային միջավայր՝ արտատեքստային մակարդակում նվազագույնի հասցնելով իր հաղորդակցական կապերը:

Резюме

В данной статье подвергаются анализу некоторые вопросы, касающиеся армянской поэзии и, в частности, исторического опыта художественного мышления.

В этом контексте особое внимание уделяется теоретическим основам художественного влияния, а также проблемам претворения традиций истории литературы. Одновременно была предпринята попытка рассмотрения традиции и новизны взаимовлияния, которые способствуют развитию тенденций современной художественной мысли.

Գրականություն

1. «Անտիկ, միջնադարյան և վերածննդի գրականություն», Երևան, 1990թ., «Արևիկ» հրատ.:
2. Կ. Ջաբրյան, «Նավատուներ», Երևան, 1999թ., «Ս. Խաչենց» հրատ.:
3. Խ. Օրտնգա, Ի - Գասնիջ, «Մշակույթի փիլաոփայություն», Երևան, 1999թ., «Ապոլոն» հրատ.:
4. Ֆ. Նիզեձե, «Ըարուց և չարից անդին», Երևան, 1992թ., «Ապոլոն» հրատ.:
5. М. Бахтин, Эстетика словесного творчества, М., 1979г. с. 372-373.

ԱրՊՉ, գրականության և ժուռնալիստիկայի ամբիոն

ՄԱՅՐԵՆԻ ԼԵՅՈՒՆ՝ ՀԱՅՐԵՆԻԷԻ ՀԻՄՆԱՍՅՈՒՆ

Է.Ա.Մովսիսյան

Ազգային դիմագիծը պահելու և իր գոյությունը հարատև դարձնելու ամենահուսալի գնորդ մայրենի լեզուն է - այս ճշմարտությունը քաջ գիտակցում էին հայոց երևելի թագավորները՝ սկսած վաղընջական ժամանակներից, ու ամեն կերպ ձգտում էին կյանքի կոչել այն: Այդ հայրենասիրական միտումը կարմիր թելի պես անցնում է Հայկ խաչատրյանի պատմավեպերի, մասնավորապես «Արտաշես», «Տիգրան Մեծ» և «Արտավազդ» նրկերում: (1-5)

Արտաշես թագավորն ասում էր՝ (1) «Հայրենիքի դավաճանությունը սկսվում է մայրենին ուրանալուց»: «Արտաշես» վեպում դառնապարտվում է Ատրպատականի իշխան Զարմանդուհը, որը պղծել էր շրթունքները՝ հայերենի փոխարեն խոսելով պարթևերեն: «Մայրենին ուրացողը սեղանանենգ է, ուտող ուրացող: Մայրենին ուրացողը նաև սերնակն է, իսկ առանց սերմի ոչ ցանքս կունենա», ոչ էլ՝ արտ: Պիտի հիմա ամեն բան անել մայրենին պահելու համար»: Ամբողջ կյանքում Արտաշեսը հետևում էր այս սկզբունքին: Նա հայտարարում է. «Մարդ միայն լեզվով է տարբերվում մյուս մարդկանցից: Հայրասեռում է նա, ով պահում է իր մայրենին: Լեզուն կորցնող և օտարախոս դարձած հայը հայկական հողը զիջում է օտարին»:

Մայրենի լեզուն բարձր ենչեցնելու և վեհ պահելու արտաշեսյան խորհուրդները առանձնահատուկ նշող են գրավում «Արտաշես» վեպում, որոնք վերաժվում են սուրբ պատգամի. «Եթե ընդ էլ չհաջողվի, ավանդիր քո որդյոց նույնը: Կկորչի աշխարհի վրա իայ ազգը, եթե ի մի չձուլվի, կկորչեն հայրենախոս մեր լեզուն ու նրզը, նթե հայերը շարունակեն անջատված մնալ իրարից»:

Խաչատրյանի պատմավեպերում շատ հաճախ են գուգորդվում միաբանության և լեզուն ամուր պահելու գաղափարները:

Արտաշես թագավորի նման արքայազն Տիգրանն էլ «Տիգրան Մեծ» վեպում մայրենի լեզվի ուրացությունը դիտում է իբրև դավաճանություն:(2) Տիգրան արքայի՝ հայ լեզվի վերաբերյալ խորհուրդը ընդգծվում է հեղինակային գաղափարական որոշակի հավատամքով: Տիգրան Մեծն ասում է. «Ի՞նչ կդաճեալ Հայքը, եթե այստեղ հայերեն չխոսեն: Նախ՝ նրկիր Հայք չի կոչվի, ասել է թե՛ աշխարհում մի աշխարհ կպակասի: Եվ Հայքը չի նմանվի Հայքին: Հայերենով ոչ միայն հայն է նմանվում հային, այլև Հայքը՝ Հայքին»:

«Տիգրան Մեծ» պատմավեպում, ինչպես մյուս նրկերում, հնչում է մայրենի լեզվի միջոցով ազգային ոգին իր բարձունքում պահելու սուրբ գաղափարը: Շատ դիպուկ է արտահայտվել ընթերցողներից մեկը՝ դիմելով Հայկ խաչատրյանին. «Ձեզ կարդալուց հետո հայը մի անգամ էլ է հայանում»:

Վիպասանի գերխնդիրն է՝ պատգամելով Մայրենի լեզուն ու ազգային ոգին, հասնել անկախության մարտումների, մեր պնտակնության հաստատման գաղափարին:

Մայրենի լեզվի հալիտենակնության գաղափարը Տիգրան Մեծը ենչեցնում է նույնպես իր կյանքի մայրամուտին. «Փոյթ չէ, թե մի: օր կմոռանան ինձ: Ես կցանկանայի, որ Տիգրանակերտում և համայն Հայքում «Առավոտ լուսն» հավիտյանս հավիտենից հնչեր հայերեն»:

Տիգրան Մեծը հայոց լեզուն սրբորեն պահելու պատգամը փխխնցում է թագաժառանգ Արտավազդին, ասելով. «Դու նրկու գնքով պիտի պահես Հայքը... Հայոց լեզուն և հայկական սուրբ: Հիշիր, տղաս, սուրբ դու կարող ես պառայանի մեջ դնել, քայց վերստին հանել, կտարվելու դնարում կռել նորը: Մակայն եթե սխալվես և հայոց լեզուն դնես պառայանի մեջ, այլևս չես

կարող հանել և ոչ էլ ստեղծել նորը: Ամեն ինչ կարելի է կառուցել, վերգտնել, բայց եթե կորցնես մայրենին՝ կկորցնես և՛ քնք, և՛ վարքը հայոց, և՛ «հայքը համայն»:

Մայրենի լեզուն սրբությամբ պահպանելու և բարձր հնչեցնելու գաղափարը գեղարվեստորեն արտացոլվում է նաև «Արտավազը» վեպում, առանձնապես Տիգրան Մեծի արհեստը-պատգամներում:(3)

Մեր ժողովրդի հավերժության ու հզորության նախապայմանը Հայկ Նաչատրյանի պատմավեպերում մայրենի լեզուն և ազգային ոգին են, որոնք էլ ապահովում են հայրենի հողի ամրությունն ու անառիկությունը: Ոչինչ չի կարող ազգը հայոց միավորել, ինչպես մայրենի լեզուն: Մայրենին միայն կարող է հնարավորություն տալ պատմության դաժան ճամփաներով անցնող հայ ժողովրդին իր հոգևոր գանձերը փոխանցել մի դարից մյուսը, անցյալը կապել ներկայի, ներկան՝ գալիքի հետ:

Լեռնդանի ու վառ գույներով արտացոլելով հայոց հեթանոսական շրջանը, Հայկ Նաչատրյանը ճշմարիտ է ընկալում մայրենի լեզվի դերն ու նշանակությունը նաև այսօրվա հայաստանի կյանքում և իր արժեքավոր ստեղծագործություններով հայրենասիրական, ազգասիրական դասեր է տալիս սերունդներին, որ հայոց պետականության ամրապնդման, ինքնության և անկախության հիմնաքարը մայրենի լեզուն է և մեր միասնությունը: Ասել է թե՛ մայրենի լեզուն է հայրենիքի հիմնասյունը:

Резюме

Для того, чтобы сохранить характерные черты нации и увековечить ее существование – есть одно надежное оружие – родной язык. Эту истину хорошо осознавали именитые цари Армении, начиная с древнейших времен, и любым способом пытались воплотить ее в жизнь.

Это патристическое стремление красной нитью проходит через исторические романы Айка Хачатуряна и, в частности, через произведения “Арташес”, “Тигран Великий” и “Артавазд”.

Գրականություն

1. Հայկ Նաչատրյան, «Արտաշես», Երևան, 1980թ.:
2. Հայկ Նաչատրյան, «Տիգրան Մեծ», Երևան, 1972թ.:
3. Հայկ Նաչատրյան, «Արտավազը», Երևան, 1975թ.:
4. Սևակ Արզումանյան, «Խորհրդափայ վեպը», (4-րդ հատոր), Երևան, 1990թ.:
5. Հայկ Նաչատրյան, «Գրական հիշատակարան», Երևան, 1996թ.:

ԼԵՌԵՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՐԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՌԱԴԻՈՆ
1960-1970-ԱՂԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Ա. Է. Օհանյան

Լեռնային Ղարաքարի մարզային թաղիայի վերաբերյալ ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ այն շարունակում էր գործել 1960-70-ական թվականներին:

Թեև մեր հանրապետական արխիվում այդ տարիներից մնացած թղթապահակներն ավելի շատ են, քան 1940-50-ական թվականներինը, նրանցում տեղ գտած նյութերը հիմնականում միատեսակ, նույնացած հաղորդումների տեքստեր են միայն, իսկ բազմաթիվ էջեր զբաղեցնում են աղբյուրազանցական հաղորդումների տեքստերը: Շատ կտրուկ են անցումները տարիների միջև: Ուստի, եղած տեղեկությունները լիարժեք չեն:

Այնուամենայնիվ, եղած նյութերի ուսումնասիրությունից կարելի է եզրակացնել, որ 1960-ականներին ժողովրդագրական թեմատիկան առավել բազմազան էր նախորդ տարիների համեմատ:

1960-ականների սկզբին ժողովրդի անվանվում էր ԼՂԻՄ աշխատավորական դեպուտատները գործկոմի սովետին կից թաղիա-հաղորդումների խմբագրություն: Այս ժամանակաշրջանում թաղիայի ներքում գրույցներից, նյութներից, դասախոսություններից բացի սկսում են հնչել հաշվետվություններ, թղթեկիթներ, թերթերի, ամսագրերի ու գրքերի տեսություններ: Հարողովում էին նաև արտաստուղիական նյութեր. ռեպրտաժներ իրադարձության վայրից, ֆուտբոլային և այլ սպորտային մրցությունների մասին պատմող ռեպրտաժներ:

Ռադիոյում սկսել են կազմակերպվել հարցազրույցներ, կյոթ սեղաններ: Ակնհայտ էր նոր ժողովրդագրական ստեղծումը. ակնարկներ, ժողովուրդագիտական: Որպես զվարճալի: նյութեր հաղորդվում էին հանելուկներ, կատակներ:

Դժվար է, սակայն, պատկերացում կազմել նշված ժանրերով հաղորդումների բովանդակության մասին, քանզի արխիվային նյութերն ընդգրկում են միայն հասարակական-քաղաքական թեմատիկայով գրույցները և մի քանի ակնարկներ: Իսկ մնացած նյութերի մասին հիշատակվում է միայն խմբագրության՝ պարբերաբար ներկայացվող հաշվետվությունների մեջ: Այդ նույն հաշվետվությունները վկայում են, որ ինչպես նախորդ տարիներին, 60-ականներին նա մարզային թաղիայի աշխատանքը շարունակում էր չգոհացնել նրա ղեկավարներին: Ռադիոյի այդ տարիների խմբագիր Ջավեն Դավթյանը պարբերաբար թողոք-դիմումներ էր հասցնագրում բարձրադիր ղեկավարությանը: Արխիվում գտնված հեղափառական դիմումը հասցնագրվել էր Աղդեջանական ՍՍՀ մինիստրների սովետի թաղիայի և հեռուստատեսության պետական կոմիտեի նախագահ Է. Ա. Ալիբեյլիին, որում նշվում է. «Աղդեջի տարիների փորձը ցույց է տալիս, որ ներկայումս ԼՂԻՄ-ում գործող թաղիա-հաղորդումների ստրուկտուրան գործնականում չի արդարացրել իրեն: Մասնավոր ջանքերի ներդրմամբ մենք չենք կարողանում միշտ նպատակային օգտագործել մեզ տրամադրված հեռարձակման ժամանակը և ոչ հազվադեպ ենք նթր հեռարձակում ցածր որակի հաղորդումներ, ինչը, նախ և առաջ, արդյունք է խմբագրության արտադրական կազմի անհավասարաչափ ծանրաբեռնվածության»:

Ռադիոյի խմբագիրը տեղեկական խնդրներից բացի մատնացույց անելով նաև անհրաժեշտ կադրերի պակասը, խնդրում է ավելացնել աշխատողների թիվը: Եվ արդեն մի քանի տարի անց՝ 1966-ին, թաղիան ունենում է հետևյալ խմբագրությունները.

1. Հասարակական-քաղաքական հաղորդումների խմբագրություն, որն ուներ ավագ խմբագիր և որի մեջ մտնում էին մի քանի նկայախմբեր.

ա) տնտեսական հաղորդումների խմբագրություն, որում աշխատում էր 1 խմբագիր, 1 թղթակից.

բ) «Աղդեջի լուրեր»-ի բաժին (1 խմբագիր, 1 թղթակից):

2. Գնդարվման ստանդարտները և խաղարկման խմբագրությունը, որն ուներ ավագ խմբագիր և որի մեջ էր մտնում երեխաների ու նրի տասարդների համար հեռադժակվող հաղորդումների խմբագրությունը:

3. Նամակների խմբագրություն (1 խմբագիր):

4. Այդբեջանական հաղորդումների խմբագրություն (1 խմբագիր և 1 թղթակից):

5. Արտադրական կազմ, որի մեջ մտնում էին մի քանի 2-րդ կատեգորիայի հաղորդավարներ, միջոցառման նյութերի ավագ մեքենագրուհի, մեքենագրուհի, 1-ին կարգի հնչյունային օպերատոր, տեխնիկ, հատուկ մեքենաների 2-րդ դասի վարորդ, հավաքարարուհի: Ընդամենը՝ 21 մարդ:

1970-ականների մարզային ռադիոյում աշխատել են մեր ժամանակակից լրագրողներ Մարտիկ Պետրոսյանը, Կոմիտաս Դանիելյանը, Վարդգես Բաղդասարը, Նվարդ Ավագյանը, մի շարք գրողներ:

Այդ տարիներին մարզային ռադիոն կարծես թե սկսում է «վերակառուցվել»։ Նկատվում է հաղորդումների բազմազանություն, հեղինակների ակտիվություն, նոր հաղորդաշարերի, ծրագրերի ստեղծում: Նոր ստեղծված հաղորդումներից էին «Առողջություն» ռադիոհանդեսը, «Նետաքրքիր է խմանալ» ծրագիրը, մանկական «Արտուսիկ» հաղորդաշարը, «Հնգամյակը և մարդիկ», «Կյուրական ժամ» շաբաթը և այլն: Հաղորդացանկում մեծ տեղ էին գտել ռադիոամսագրերն ու ռադիոթերթերը: Պաշտպանվել են հատկապես առողջապահական թեմայով նյութերը: Այսպես, «Առաջություն» ռադիոհանդեսը պատմում էր տարբեր տիպի մանկական հիվանդությունների, սրտային, վարակիչ հիվանդությունների, նրանց կանխարգելման և բուժման մասին: Այդ առթիվ եթերում հանդես էին գալիս բժիշկները, տվել բնագավառի մասնագետները: Հաղորդվում էին նաև խորհուրդներ, օրինակ, այն մասին, թե ինչպես աշտի «առաջի իրեն հիվանդը արտամականի ինքնաբերական հետաք», թե ինչպես «կարելի է օգտագործել բույսերը» որպես գեղեցկացնող միջոցներ: Շատ հաճախ նման հանրամատչելի նյութերը քաղվում էին ամսագրերից ու թերթերից: Նման «առաջիկաներ» նյութերից բացի, հաղորդվում էին նաև աղիքակներ բժշկների մասին: Մեկ օրվա ռադիոթերթը կարող էր կազմված լինել հենց նշված հաղորդումներից:

Առանձին շաբաթ կար հատուկ տնային տնտեսուհիների համար, որը բաղկացած էր խորհուրդներից, ներկայացվում էին բաղադրատոմսեր և այլն: «Արտուսիկ» մանկական ծրագիրը եթեր էր արժակում անվանի մանկագիրների ստեղծագործությունները, բանաստեղծություններ, հեքիաթներ: Պիոներներն ու դպրոցականները նույնպես ունեին իրենց ծրագիրը:

1974-ին ռադիոն ուներ հաղորդումներ գյուղի աշխատավորների համար: Գյուղատնտեսական կյանքից հաղորդումներ էին կազմակերպում թղթակից Սերգեյ Վարսուցը, գյուղատնտեսության մարզային վարչության պետի տեղակալ Թարխան Մարտիրոսյանը:²

1970-ական թվականներին մարզային ռադիոյում հասարակական-քաղաքական թեմաներով հաղորդումները կոչվում էին գրույցներ: Դրանք, որպես կանոն, կարևորում էին «սովետների» մշտական հանձնաժողովի կազմակերպչական դերը»³, խոսում քաղաքացիական պաշտոնի չարաչափման մասին և թմբկահարում կոմունիստների 25-րդ համագումարը դիմավորել արժանավոր նվաճումներով»:

1974թ. ռադիոթերթում հայտնվում է գովազդը: «Այժմ լսեցե՛ք ռեկլամ-հայտարարություն», - նշվում է հաղորդապարի խոսքում⁴: Բայց թե ինչ ռեկլամ էր դա, պարզ չէ, քանի որ տմբստը արևիկային նյութերում չի գտնվել:

1976թ. նյութերում հիմնականում ներկայացվում են արտադրության, արդյունաբերության և գյուղատնտեսության բնագավառների աշխատողների կատարած աշխատանքները:

Կազմակերպվում էին հարցազրույցներ կոլտնտեսականների, կոմունիստների, Ադր. Գնդազյան խորհրդի ղեկավարների, ինչպես նաև գյուղացիների, ֆերմաների աշխատողների հետ: Համարյա բոլոր նյութերի վերջում շեշտվում էր մի նպատակ. «Մեր խնդիրն է աշխատել կրկնապատիկ նուազող և կոմունիստների 25-րդ համագումարը դիմավորել արժանավոր նվաճումներով»:

Ռադիոհաղորդումների խմբագրությունում մեծ տեղ էր հատկացվում արտահատիքային թղթակիցների նյութերին: Դրանց հեղինակներն անպայման կոորդինորի նշում էին հայերի, ռուսների և ադրբեջանցիների անունները՝ դրանով իսկ ձգտելով «ազգերի լինիչյան բարեկամությունն ու հավասարությունը»: Կարծես թե կարգավորվում էր պրոպագանդայի, քաղաքացիական, ազխտացիայի դերը: Նմանատիպ, բավականին ծավալուն նյութեր էին «Հնգամյակը և մարդիկ», «Ժամանակ չունի մտածելու», «Տասներորդի հարվածային հերթափոխում» շաբաթը:

Շատ տարածված էին նաև պաշտոնական ուղերձներն ու կոչերը:

Պետք է նշել նաև, որ թաղիտն իր արտահայտչամիջոցներից լայնորեն կիրառում էր նաև նրաժշտությունը: 1974-75թթ. թաղիտհաղորդումներում կար հայ, ռուս, ադրբեջանցի ներգինյոր կատարումներով 20-25 ձայնաժապավեն: Օրվա ընթացքում 3 անգամ հաղորդվում էր նրաժշտություն. ցերեկային ժամերին՝ հայկական, ներկողյան՝ դասական, էստրադային, ինչպես նաև ազգային հայրենասիրական կատարումներ: Ընդ որում, թաղիտողներն իրենք կարող էին հաղորդման ընթացքում պատվիրել որևէ նրաժշտություն, տարբեր ներգինյորի կատարումներ: Սակայն ձայնադարանն էլ առաջնորդվում էր սովետական ժողովուրդների «քարեկամություն» քաղաքականությամբ: Եթե ներքոմ հնչում էր հայկական նվագ, նրաժշտություն (օր.՝ Ա. Հեքիմյանի «Երգիր ինձ համար» երգը), ապա անապյաման միևնույն թողարկման մեջ պիտի հնչեր ադրբեջանական նրաժշտություն (Ջենաբ Խաչկարովայի «Արի ինձ հետ» երգը): Կար նաև այսպիսի երևույթ. այն ներգինյոր, ով այս կամ այն պատճառով լքում էր հայրենիքը և մեկնում արտասահման, նրա ձայնագրությունները հանվում էին թաղիտի ձայնադարանից: Նման սկզբունքով ֆոնդից հանվել են Պասկելիչյանի ձայնագրությունները: Մարգային թաղիտում ավանդական էին դարձել «քարեկամության համերգները» (Հարո-Երևան-Թիֆլիս):

1975 թվին թաղիտն եթեր էր դուրս գալիս 2,5 ժամ. 1 ժամ (14.00-15.00-ը) հաղորդվում էր արտասահմանյան տեղեկատվություն, իսկ ներկողյան (17.00-18.30-ը) հաղորդվում էին մարգային լուրեր: Կիրակի օրը եթերի համար տրամադրվում էր 2 ժամ, որի ընթացքում հաղորդվում էին գրական, ֆոնդային ձայնագրություններ: Գոյություն ունեցող համագործակցության պայմանավորվածություն տեղական թատրոնի և թաղիտի միջև: Ձայնագրվում էին հետաքրքիր ներկայացումներ՝ թաղիտներում հնչեցնելու համար:

Նշված տարիներին մարգային թաղիտի գլխավոր խմբագիրն էր Մարսիմ Հովհաննիսյանը: Հասարակական-քաղաքական հաղորդումները խմբագրում էր գրող Արմո Ուլուբաբյանը: Իսկ գրական բաժինը տնօրինում էր հայտնի արձակագիր Վազեն Օխանը, որի ներգինյորն «Մախաթ» թաղիտհեռուհեռու, ժամանակակիցների վկայությամբ, մեծ լսարան ուներ:

Այս ծրագրերից բացի, մարզի բնակչությունը ամեն օր անհամբերությամբ սպասում էր տեղական լրատվությանը: Տեղական նորությունները հիմնականում ստացվում էին մարզի շրջաններից, իսկ արտաքին կյանքին վերաբերող լուրերը վերցված էին հեռատիպից: Ռուսներն լեզվով լուրերն այդ տարիներին բացակայում էին հաղորդացանկից: Կազմակերպվում էին նաև բաժնականի հետաքրքիր ուղիղ եթերներ, որոնց ժամանակ ստուդիա էին հրավիրվում գրողներ, գրականագետներ, արվեստի բնագավառի ներկայացուցիչներ, ինչպես նաև հասարակ քաղաքացիներ: Սակայն ինչպես սովետական թուր տարածքներում, Լեռնային Ղարաբաղում նաև մամուլը գործում էր գրաքննության պայմաններում: Մարգային թաղիտն նույնպես եթեր էր դուրս գալիս բազմաթիվ «խմբագրումներով», կրճատումներով, ինչն ակնառու է արխիվային ֆոնդի նյութերում: 1970-ականներին մարզի թաղիտի գրաքննիչն էր Հայկ Գասպարյանը:

Լեռնային Ղարաբաղի մարգային թաղիտի վերաբերյալ ուսումնասիրությունները ղեկավարում էին: Արդեն հեռուստատեսային դարաշրջան մտած թաղիտն 80-ականներին, բնականաբար, այլ ընթացք պիտի ստանար: Թեև, նույն կոմունիստական ոգին ղեկավարված էր: Բայց մյուս կողմից էլ, 1980-ականների վերջի Ղարաբաղյան շարժումը մարգային թաղիտի ընթացքը պիտի կտրուկ փոխեր:

Резюме

Нагорно-карабахское радио продолжает действовать в 1960-1970 гг. Увеличиваются передачи, появляются новые редакции. В отличие от 1960 года радио 70-ых более разнообразно. На радио работают известные писатели, журналисты. Появились новые рубрики. В эфире звучала реклама.

Но местное радио продолжало работать в условиях цензуры.

Գրականություն

1. ԼՂՀ պետ. արխիվ, Фонд N115, 1-й кат., 10, с. 28.
2. ԼՂՀ պետ. արխիվ, фонд, N 115, опись 1, кат., 38, с. 70.
3. ԼՂՀ պետ. արխիվ, фонд, N 115, опись 1, кат., 38, с. 76.
4. Նույն տեղում, фонд, N 115, опись 1, кат., 38, с. 101.

Արմ. Հ. Գրականության և ժուռնալիստիկայի ամբիոն

ԽՈՒՄԱԿ ԳՅՈՒՆԼՆԱԶԱՐՈՒՄԻՆ՝ ԿՐՏՄԵՐ ԴՈՐՈՑԱՀԱՄԱԿ ԵՐԵՒԱՆԵՐԻՆ
ՀԱՍՏՅՆԳՐՎԱԾ ԵՐԿԵՐԸ

Ա. Ա. Մելքումյան

Սույն հոդվածում ներկայացված են նույնանունով շրջանի մանկական արձակի պոետիկո ղեմընթից մեկի՝ Խ. Գյուլնազարյանի կրտսեր դարձուցանասակ երեխաներին նույնանունով երկերը, որոնք նրանց սովորեցնում են ազնվություն, հոգեկան կատարելություն, լավ վարք, դրական բացասականից գաղտնի ունակություններ, նաև լուծում մանկավարժական կարևոր խնդիրներ:

Նրա «Լավ ճանապարհորդները», «Պատմվածքներ Արտուսիկի մասին», «Դեռ դպրոց չենք գնում», «Զարմանալի հեքիաթներ» երկերը համապատասխանում են մանկական գրականությանը ներկայացվող պահանջներին, ունեն ուսուցողական և դաստիարակչական մեծ նշանակություն, որոնք բխում են մեր դասական մանկագրությունից և ունեն նաև արդիական հնչողություն:

Խաժակ Գյուլնազարյանը նույնանունով շրջանի մանկական արձակի նշանակալից ղեմընթից է: Նրա գրական ուղին սկսվում է նախքան Հայրենական պատերազմը: Գյուլնազարյանի առաջին գրքայինները ամենակրտսերներին ուղղված «Զար թագի մահը» և «Մուլի վերջը» չափածո գործերն էին, որոնք հրատարակվեցին 1938 և 1940 թվականներին: Դրանք պատմություններ էին կենդանիների մասին, որոնք դատապարտում էին ծալությունը և չարիքը: Չնայած այն հանգամանքին, որ վերոհիշյալ երկու գործերը անթիվ չէին, բայց փոքրիկների վրա թողնում էին զանկալի ազդեցություն:

Պատերազմից հետո երիտասարդ ստեղծագործողի հետաքրքրությունների աշխարհում և թմամբերի ոլորտում փոփոխություններ են կատարվում: Թողնվել չափածոն՝ նա անցնում է պատմողական ժանրին: 1951 թվականին լույս է տեսնում պատմվածքների առաջին ժողովածուն՝ «Դաշտի տները և հյուրերը» խորագրով, որտեղ ակնհայտորեն երևում էին ձեռնարկի ստեղծագործական բնորոշ գծերից մի բանիսը՝ առանձնապես մարդկային հոգու գաղտնաբանները թափանցելու հմտությունը և հակիրճ գրելու ձիրքը: Հենց այս ժողովածուից էլ սկսվում է գրողի և մանուկների ստեղծությունը, և նրա հաջորդ քայլերն առավել ևս հանգեցնում են դրան: Իրար են հաջորդում նախադրուցական կամ կրտսեր դարձուցականին ուղղված գրքայինների շարքերը՝ «Ով ինչ գիտե» (1952), «Լավ ճանապարհորդներ» (1953), «Բոլորին է» (1954), «Նազիկի սիրելիները» (1958), «Բարի լույս, մայրիկ» (1964), «Պատմվածքներ Արտուսիկի մասին» (1970), «Զարմանալի հեքիաթներ» (1974), «Դեռ դպրոց չենք գնում» (1978), որոնցում հեղինակը կարողանում է թափանցել փոքրիկների հոգու գաղտնաբանները և վարպետորեն ներկայացնել նրանց հետաքրքրությունները, ներաշխարհը և հոգեբանությունը: Խաժակ Գյուլնազարյանի երկերը լուծում են մանկավարժական շատ կարևոր խնդիրներ: Դրանք զարգացնում են երեխայի խոսքը, գեղարվեստական ճաշակը, ծանոթացնում են ժողովրդական կյանքին, բնությանը, օգնում են բարոյական դաստիարակությանը: Յուրաքանչյուր ստեղծագործություն բխում է մանկական կյանքից, հետաքրքրությունների աշխարհից, նրա հոգու գաղտնաբաններից և պատասխանում է երեխային հուզող հարցերին: Գյուլնազարյանի մանկական երկերը ներխային սովորեցնում են ազնվություն, հոգեկան կատարելություն, լավ վարք, դրական բացասականից գաղտնի, ունակություն:

«Մանկական գրքերը ստեղծվում են դաստիարակության նպատակով, իսկ դաստիարակությունը մեծ գործ է՝ այն որոշում է մարդու ճակատագիրը»¹, - Բեկինսկու հայտնի ասույթը դառնում է ուղենիշ Գյուլնազարյանի կյանքում և ուղեկցում մինչև կյանքի վերջը:

1940-70թթ. ժամանակահատվածի վերաբերյալ ավելի հանգամանորեն տեղեկություններ ունենալու համար մեզ օգնության է գալիս նույնանունով շրջանի

նշանակալից դեմքերից մեկի՝ խաժակ Գյուլնագարյանի վաստակը մանկական գրականության մեջ: Նա այն եզակի դեմքերից է, որ ստեղծագործել է բոլոր տարիքի երեխաների համար, նրանց ուղեկցել կյանքի բոլոր շրջաններում: Երբեք չդավաճանելով իր սիրելի մանուկներին՝ Գյուլնագարյան-մանկագիրը միշտ նորովի ներկայացավ բոլորքնով ներխանների նրկայությունը և զարգացնելով նրանց միտքը:

Ն. Գյուլնագարյանի բնդուն ու բազմաբնույթ վաստակի զգալի մասը հասցնեցրված է նախադարձական տարիքի երեխաներին: Նման երկերում հեղինակը, ելնելով նշված տարիքի առանձնահատկություններից, ներկայացրել է մեծերին ընդօրինակելու, կենդանական աշխարհը ճանաչելու, հանրօգուտ աշխատանքով տարվելու, լավն ու վատը իրարից զանազանելու և այլ գծեր: Նա իր մանկական երկերում փոքրիկներին առաջնորդում է դեպի մեծ աշխարհ, նրա առջև բացում կյանքի դռները, նպաստում փոքրիկ աշխարհաճանաչմանը և միևնույն ժամանակ դաստիարակում ազնիվ զգացմունքներ: Այս ամենը դրված է նրա երկերից յուրաքանչյուրի հիմքում, ինչն էլ ապահովում է դրանց հաջողությունը: Մանկագրի հաջողության գրավականը կարելի է համարել «Լավ ճանապարհորդներ» գրքույկը, որն իր արժանիքների համար գնահատվել է և թարգմանվել մի շարք լեզուներով:

Գրքույկի պատմվածքաշարի իրար կապող օղակներ և գլխավոր հերոսները փոքրիկ Արան և նրա թավամազ Քոթոթն են: Այս երկու ինքնատիպ հերոսների միջոցով հեղինակն իր ընթերցողներին ծանոթեցնում է շրջակա միջավայրին, ամենատարբեր առարկաների ու նրկայների հետ: «Լավ ճանապարհորդներ» գրքի փոքրիկ հերոսի՝ Արայի միջոցով հեղինակը քարտզում է աշխատասիրություն, սեր ու հարգանք մեծերի հանդեպ: Այս ժողովածուում հեղինակն օգտվել է մտերմորեն ու գրավիչ գրուցելու, կյանքը մանկական տեսանկյունից ներկայացնելու, առաջին դեմքով պատմելու հնարներին, որոնք իրական են դարձնում պատումը, օգնում են մուտք գործել փոքրիկների ինքնատիպ ու կախաբաղական աշխարհը:

Գրողի «մանկանալու» անուրանալի հատկանիշն է կազմում նրա «Պատմվածքներ Արտաշիլի մասին» շարքը, որտեղ հեղինակը փորձել է կյանքը պատկերել չորս տարեկան երեխայի ընկալմամբ և ընդգծել կյանքի, շրջակայի նկատմամբ նրա այն դրական վերաբերմունքը, որը պետք է բազալներվի: Հերոսի ընկալման լույսի տակ էլ բացվում է նրա կյանքի պատկերը, որի փոխանցողն այս անգամ դառնում է ինքը՝ երեխան:

Գրքում իրականն ու նրկայականը այնպես վարպետորեն են միահյուսվում, որ դժվար է սահմանագատել միմյանցից: Այսպես, սաքսաֆոնիստ արքայադը «Այլանդակի մասին հեքիաթում» ընկնում է մի գվարճալի անտառ, որտեղ ամեն ինչ կարմիր գույն ունի: Պարզվում է, որ այդ անտառը ներկել էր գրողի թոռ Շուշանիկը, որը գծել էր նաև մի այլանդակ կենդանի իրար կցելով նապաստակի ականջներն ու փղի կնճիթը, ուղտի սապատն ու մկան պոչը և այլն: Պատմվածքը հուշում է ճիշտ նկարելու խորհուրդ: Կամ էլ՝ շատակներ կարավի փորը ցավում է («Չալտիկ-կարավի մասին») և նա գնում է պոլիկլինիկա, ուր ասում են, որ նա տառապում է թկատիցուտ, շատակներիցուտ հիվանդությամբ: Իրեն դեղ նշանակում են կովմիրն, կաթիրին: Եվ ահա աճող կրկնությամբ շարունակվող հեքիաթի հերոսը գարու համար գալիս է Շուշանիկի մոտ, նա էլ՝ պապի, պապն էլ՝ պահանջում է պաչիկ:

Հեքիաթներում կենդանու անձնավորմանը, խաղ հիշեցնող աճող կրկնության հնարանքին, տեղին օգտագործվող ծայրանմանությանը ավելանում է կենդանիներին կրկնակի անունով բնութագրելը (Արջուկ-փրշուկ, Չալտիկ- կարավիկ, Փիսիկ-բամբասիկ և այլն): Այս ամենից բացի հեքիաթներում առկա է անկաշկանդ գվարթություն, որն իր խորքում թարգնում է իսկական մարդկային գծերն արժեվորելու և բացասականը մերժելու գաղափարը:

Նախադարձականին հասցնագրված ստեղծագործություններին բնորոշ է հաճախակի հանդես եկող մեծերի ու փոքրերի փոխհարաբերության հարցը, որը միշտ ներկայացվում է մանկական ընկալմամբ և պահանջում ուշադրություն:

Մանուկների համար գրված գործերից է նաև «Դեռ դարձ ցենք գնում» ժողովածուն, որը բաղկացած է 16 գլուխներից: Վնգուկեն տարեկան Շուշանիկն ու չորս տարեկան

Ապերիկը, որի իսկական անունը Գոռ է, այս շարքի ենթոսներն են, որոնք, չնայած դեմ փորը են, բայց շատ բան գիտեն: Ինչպես նախորդ ժողովածուներում, այնպես էլ այստեղ, մեր փորքիկներին կյանքի ճիշտ ուղի են ցույց տալիս մեծերը՝ մայրիկները, հայրիկները, տատիկներն ու պապիկները, ավագ բույրերն ու նոբայրները: Հսելով մեծերին՝ նրանք ցանկանում են միշտ բարի գործեր անել, ինչ-որ բանով պիտանի լինել: Շուշանիկն ու Ապերիկը միշտ հիշում են պապի խոսքերը «Ամեն մարդ իր կյանքում գոնե մի ծառ պիտի տնկի, թե՛ էլ ինչ մարդ, որ ոչ մի ծառ չի տնկել: Այսպիսի մարդ բանի պետք չէ»²:

Հենց այս խոսքերն էլ պատճառ են դառնում, որ մեր փորքիկ ենթոսները, թույլտվություն խնդրելով մայրիկից, միանան դպրոցականներին և նրանց հետ ծառեր տնկեն: Նախորդ ժողովածուներում արծարծած աշխատասիրության գաղափարը շարունակվում և նոր երանգ է ստանում:

Հեղինակը յուրաքանչյուր տողի մեջ դաստիարակչական իմաստ է ներարկում, որն իր ցանկալի ազդեցությունն է թողնում ընթերցողների վրա: Իրոք, շատ կարևոր դեր է ստանձնում Գյուլնազարյան մանկագիրը, որովհետև յուրաքանչյուր բառ պետք է տեղին օգտագործվի մանկական երկերում, հետաքրքիր ու ուսանելի լինի այն դեռևս նոր կյանք մտնող մտքով և հոգով մարդու մանուկների իսմար:

Շուշանիկն և Ապերիկի միջոցով հեղինակը շատ պատմություններ է պատմում՝ մեկը մյուսից զարմանահրաշ, կախարդական, հուզիչ ու գայթակղիչ: Նա սովորեցնում է երեխաներին սիրել ու խնամել կենդանիներին, որոնք անպաշտպան են, հոգատարության կարիք ունեն, միշտ լսել մեծերի խորհուրդները: Ընթերցելով այս գիրքը՝ փորքիկները շատ բան կարող են սովորել, ինչի մասին դեռևս գաղափար չունեն: Օրինակ, ծանոթանալով այն գլխին, որտեղ հեղինակը պատմում է Շուշանիկի, Ապերիկի, քաղաքի տատիկի ու պապիկի պատմությունը, ընթերցողը կհասկանա, թե այդ ինչ «լացկան բան» էր սեղմում փորքիկների կոտորոցը, երբ հիշում էին գյուղը, տունը, տատիկին ու պապիկին:

Մտքաց չէին հասկանում, թե ինչու քաղաքի տատիկի ու պապիկի հետ ամառանոցում գտնվելու քնկրքանքը հաճախ ուղեկցվում էր «թարթիչներին հասնող արցունքներով», երբ հիշում էին գյուղի տունը, բանջարանոցը, տատիկին ու պապիկին, հորեղբայր Հարություն ու նրա նրկնագույն «ծիգուլին»:

Շուշանիկն ու Ապերիկն էլ բոլոր նրձխանների նման չգիտին, որ իրենց ապրած զգացմունքները (սեր, ուրախություն, խիստություն) անուններ ունեն և որ այդ «լացկան բան» էլ կարգու է կոչվում: Հոգեբանական այս յուրահատուկ պահերն անգամ իս. Գյուլնազարյանի մոտ հետաքրքիր մեկնաբանություններ են ստանում: Ընթերցողի աչքի առաջ կարծես հաստնանում է փորքիկը, սովորում հուզվել, տխրել, հասկանալ մարդկային շատ զգացմունքի իմաստը:

Այստեղ մանկագիրը և՛ հոգեբան է, և՛ մանկավարժ: Նա կարողանում է մեծերի զգացմունքի աշխարհին հաղորդակից դարձնել նաև փորքիկին, որոնց համար աշխարհը միայն գունավոր ու պայծառ երազ է: Լավն այն է, որ մանկագիրն այնքան նրբորեն է բացում երեխայի հոգու աչքերը, որ երբեք չեն փշրվում նրա գունավոր երազները: Գյուլնազարյանը նուրբ, զգուշավոր մանկագիր է, գիտի աղելու ձևը, չափը, ժամանակը...

Ելանքին նախադրոցականի վճիռ ու պարզ աչքերով նայելու հատկություն ունի իս. Գյուլնազարյանը, ունի ուսուցողա-դաստիարակչական մեկնակետ, իսկ փորքին առանց իրատի ակտիվացնելու նրա գրելաձևը շարունակվում է նաև հետագա տարիներին գրած գրքուկներում, որտեղ հեղինակին հաջողվել է բոլոր իրավիճակներում գծել հետաքրքիր կերպարներ ու քաջատնայություն բացել հերոսների հոգեկան աշխարհի նրբին նկերները, տրամադրել նրանց դեպի ազնիվ ու գեղեցիկ: Միմյան ստեղծագործություն է «Մոռացված ծերունու հեքիաթը», որն իր բնույթով տարբերվում է շատ մանկական երկերից: Այս հեքիաթի հերոսը մի զարմանալի ծերունի է, որ դուրս է եկել խաղաթղթերի միջից «Նա ոչ թագավոր էր, ոչ էլ զինվոր: Խաղաթղթերի մեջ չորս թագավոր կա, չորս զինվոր, չորս աղջիկ, դրանք երբեմն՝ երբեմն՝ իրար հետ գրոյց են անում, դրա համար էլ երբեք չեն ձանձրանում, իսկ այդ ծերունին ընկեր չունի»³:

Հեղինակի վարպետ Գրիշը կարողանում է կնրտել նոր ու հետաքրքիր կերպարներ, ինչպիսիք են Կծած խնձորը, Դեղին տերևը, Տոկոս ծիլը, Լուրջ օդաքիչը, Ռետինն ունին,

վաղագույն տիկնիկը, Մրաքիթ աղվեսը, Անխելը բռնաբռնիկը, Ջմեռ պապն ու Չար դատավորը, Մամա ջանը, Գորշ մկնիկը և ուրիշներ, ինչը վկայում է Գյուլնազարյանի նախադպրոցական հասակի ներխաճների համար գրած գրքերի արժեքը, նրանց մանկավարժական ու հոգեբանական, գեղարվեստական հմայիչ հենակետերը, որոնք և նրանցից շատերին օժտում են մնայուն արժեքներով:

Ծանոթանալով խաժակ Գյուլնազարյանի նախադպրոցական տարիքի ներխաճների համար գրված նրկներին, պարզ է դառնում, որ, հեղինակը, հաշվի առնելով ներխաճների տարիքային առանձնահատկությունները, կարողանում է պատասխանել նրանց հուզող

Մանկական գրականության համար կարևոր է կենսախնդությունը, նաև տվյալները, թախիծը: Սրանք երեխան պետք է ընկալի գուգահեռաբար: «Խ. Գյուլնազարյանի գրվածքները մի մեծ արժեք ունեն. դա կենսական հավաստիությունն է: Գյուլնազարյանն ունի հուսմունքով պատմելու թանկ շնորհը»⁴:

Ինչպես մեծն Լոռեցին է ասում. «Մանկությունը մարդու էն ամենաընդունակ շրջանն է, երբ նա չորս կողմից ընդունում է, սնունդ առնում ու զարգանում շարունակ: Հետևաբար, շարունակ պետք է սնունդ տալ նրան, որ միշտ աճի ու զարգանա» 11:

Մանկական գրականությանը ներկայացվող այս պահանջները մենք նկատում ենք Գյուլնազարյան-մանկագրի մոտ, որը քաջ գիտի նաև մանկական գրականության տնտեսությունը, պահանջներ, որոնք գալիս են մեր դասական մանկագրությունից բխող ժամանակներում էլ կոչված են իրագործելու մանկական երկի ուսուցողական և դաստիարակչական, ճանաչողական և արդիական էությունը:

Խաժակ Գյուլնազարյանի ոճի քնարականությունն ուրախ է, կյանքոտ... Նրան անընդմեջ օգնության են գալիս սրամտությունը, ժողովրդական բանահյուսության մասունքները, ոճի անկաշկանդ տեղանցումները...: Գեղարվեստական այս տարրերով նա բազմախաղով է մանկական նրագների աշխարհը, որը լի է հեքիաթներով՝ դեռ չստանալով, չգրված:

Резюме

В данной статье представлены произведения одного из знаменитых представителей детской прозы послевоенного периода, Хажака Гюлназаряна. Эти произведения адресованы детям младшего школьного возраста и прививают им честность, умение отличать хорошее от плохого, положительное от отрицательного, решают очень важные педагогические вопросы, тем самым достигая идеального душевного состояния детей.

Его произведения “Хорошие путешественники”, “Рассказы об Артутике”, “Еще не ходим в школу”, “Удивительные сказки”, соответствуют требованиям детской литературы, имеют поучительную и воспитательную отправную точку, которые исходят от нашей классической детской литературы. Так же они приобретают современное звучание.

Ծանոթագրություններ

1. В.Г. Белинский, Н.Г.Чернишевский, Н.А. Добролюбов, о детской литературе, М., Детгиз, 1954, стр. 42.
2. Գյուլնազարյան իւ. Մ., Ակնարկներ հայ մանկական գրականության պատմության, ԳԱ, 1961, էջ 15:
3. Գյուլնազարյան իւ.Մ., Դեռ դպրոց չենք գնում, Երևան, Լույս, 1987, էջ 32:
4. Հայ մանկական գրականության պատմության ուղիագծեր, Երևան, Լույս, էջ 124:

ՀՐԱՋԱ ԱՃԱՌՅԱՆԻ «ՀԱՅՐ ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ»
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ

Օ.Ն.Բաբայան

Հր.Աճառյանը, որ սկզբնավորել է լեզվաբանական մի շարք գիտաճյուղեր, նաև հայ ժողովրդի ու նրա գաղթականության պատմության խոշորագույն ուսումնասիրողներից է: Հոգվածում ներկայացվում է «Հայ գաղթականության պատմություն» գիրքը (768 էջ), որը բնութագրում է աշխարհի չորս ծագելուով կազմավորված հիսուսութ հայկական գաղթօջախները, ինչպես նաև հայերի ներգրումները տարբեր երկրներում:

2006-ին լրացավ հայ ականավոր հայագետ-լեզվաբան, ակադեմիկոս Հրաչյա Հակոբի Աճառյանի ծննդյան 130-ամյակը: Ինչպես Մանուկ Աբեղյանն է ասում, «Նման լեզվաբան հայրուր տարին մեկ կարող է հայտնվել հայոց աշխարհում»: Նրա կյանքն, իրոք, աստվածային հրաշք է: Հայտնի է, որ ակադեմիկոս Աճառյանը գրել է 250 մեծ ու փոքր գիտական աշխատություններ, սկզբնավորել լեզվաբանական մի շարք գիտաճյուղեր: Սակայն ըջերին է հայտնի, որ Աճառյանը նաև հայ ժողովրդի ու նրա գաղթականության պատմության խոշորագույն ուսումնասիրողներից է:

Աճառյանի մայրը՝ Ընծան, իր ազգական քահանայից ժառանգություն էր ստացել «Հայ ժողովրդի պատմության» միատորայակը, որը տպագրվել էր Վենետիկում և որպես դասագիրք էր ծառայում: Հայրը՝ Հակոբը, Սամաթիայի տարրական դպրոցում հայերենը սովորել էր Մ.Չամչյանի Բերականությունով («Բերականություն Հայկազեան լեզուի», Վենետիկ, 1779): Այդ երկու գրքերն էլ Աճառյանի կյանքի ուղեկիցներն են եղել և մեծ սեր են առաջացրել նրա մեջ պատմության և լեզուների նկատմամբ:

Դեռ 1904 թ. Թավրիզի դպրոցում աշխատելիս (դասավանդում էր նաև հայ ժողովրդի պատմություն), Աճառյանը գրել է Գևորգ Չիլինկերյանի «Ընդհանուր պատմություն» դասագրքի երկու գլուխները՝ Հնդկաստանի և Չինաստանի մասին: Այստեղ է նա գրել նաև իր «Հայոց պատմություն» հյուսված ընդհանուր պատմության հիմա» արժեքավոր աշխատությունը, որը լույս է ընծայել Երևանի պետական տարաբնույթ (2004, 484 էջ):

Հր.Աճառյանն անդրադարձել է նաև հայկական հարցին: 1906-1918 թվականներին նա աշխատում էր Նոր Նախիջևանի թեմական դպրոցում, լեզուներին գուգահեռ դասավանդում նաև հայ ժողովրդի պատմություն, հայոց աշխարհագրություն և հայ գրականություն: 1915 թ. Նոր Նախիջևանում տպագրվում է «Տաճկահայոց հարցի պատմություն» գիրքը (79 էջ), որտեղ Աճառյանը ներկայացնում է սկզբից մինչև 1915 թ. Արևմտյան Հայաստանում և նրանից դուրս՝ Օսմանյան կայսրության ողջ տարածքում, ապրող հայերի սոցիալ-քաղաքական վիճակը, հայկական հարցի առաջացման նախադրյալները, ընթացքը և հայերի համար ոչ բարենպաստ ավարտը:

Դեռ 1901 թ. Թավրիզում աշխատելու տարիներին, Լազարյան ճեմարանը մրցանակ էր հայտարարել «Հայ գաղութների պատմություն» աշխատության վերաբերյալ: Երկու տարի ժամկետ էր տրված: Աճառյանը համարում է 20-րդ դարի սկզբներին հայ գաղութների վերաբերյալ նդած բոլոր աղբյուրները, նորից կարդում հայ հին մատենագրությունը, հին ժեսագիրները, հիշատակարանները, զանազան արժանագրություններ, տապանաքարեր, հին և միջնադարյան հեղինակների տաղերը, ինչպես նաև իր ժամանակի լրագրությունը, ճամփորդությունների ժամանակ լսում է տեղական ավանդությունները, պատմական դեպքերը և 1904-1906 թ.թ. Թավրիզում գրում պատմական և ազգային կարևոր նշանակություն ունեցող «Հայ գաղթականության պատմություն» աշխատությունը: Տեսագայում այն համարում է նոր տեղեկություններով, ներկայացնում Լազարյան ճեմարանի հայտարարած մրցանակաբաշխությանը և 1908-ին շահում մրցանակը՝ 2000 ռուբլի:

Աշխատանքը հրատարակվում է 2002 թ.՝ Երևանի Հրապա Աճառյանի անվան համալսարանի հովանավորությամբ (խմբագիրներ՝ ակադ. Հրանտ Ավետիսյան, բան.գիտ.դոկտոր, պրոֆեսոր Հովհաննես Բարսեղյան)։ Տնօրէն տպագրության է պատրաստվում մեծ հայագետի դուստրը՝ Զնարիկ Աճառյանը։ Այն (768 էջ) ներկայացնում է 58 ներկնմում ասորոյ հայերի արտագաղթի պատմությունը, հայերի դերը տվալ ներկնմրի հասարակական-քաղաքական, ռազմական, տնտեսական, առևտրական, մշակութային կյանքում։

Ինչպէս «Երկու խոսքում» նշում է պրոֆ. Հ. Բարսեղյանը, «Հրապա Աճառյանը այդ թեմայի առաջին ամբողջական ուսումնասիրողն է, որի քննությունը ինչպէս լեզվաբանության ասպարեզում, այստեղ էլ հետո է ազգայնական, կրօնական, կուսակցական, հարեանահովանավորչական կողմնակալ կաշկանդումներէից։ Հնդիմակի՝ յուրայինների և այլոց գործի գնահատման չափանիշները, ազգային, իրավական ու քաղաքական լինելուց բացի, նաև համամարդկային են»[1], էջ 6։

Ըստ Հր.Աճառյանի՝ «Գաղթականություն կը կոչուի ազգի մը ամբողջական կամ մասնական հաստատածներուն տեղափոխութիւնը մշտական բնակութիւն հաստատելու նպատակով» [1], էջ 10։ Հր.Աճառյանը տարբերակում է գաղթականության տնտեսներն ըստ տեղի, եղանակի, պատճառի, ձևի և քանակի։ Ըստ տեղի՝ գաղթականությունը լինում է ներսից դուրս, երբ մարդիկ, իրենց երկիրը թողնելով, հաստատվում են ուրիշ երկրում, դրսից դուրս, երբ արտաքին գաղթականություն է, ներսից ներս, երբ նույն երկրում տեղափոխություն է կատարվում, դրսից ներս, երբ հանգամանքների բերումով վարդ իր երկիրն է վերադառնում։ Աճառյանը ցավով է նշում, որ շատ է ներսից դուրս գաղթականությունը, որից անբաժան է դրսից դուրս շարժումը։ Հայերիս համար, դժբախտաբար, հազվադեպ է դրսից ներս գաղթը։

Ըստ եղանակի՝ Հր.Աճառյանը տարբերակում է թոնի կամ կամավոր գաղթ։ Երկուսն էլ շատ սովորական են հայերի համար։ Եթե գաղթօգնականը հայրենիքի հետ մշտական կապի մեջ են, «հաստատուն տեղականությունն գրաւական ունին», հայրենիքից կտրված լինելու դեպքում կորչելու վտանգի մեջ են։

Ըստ քանակի՝ գաղթականությունը լինում է անհատական կամ խմբական։ Ըստ Աճառյանի՝ գաղթականության տեղականության միակ գլխավոր պայմանը խմբականությունն է։ Այս տեսակետից տարբերություն է տեսնում Սեբաստիայի, Կիլիկիայի, Անիի, Մալաթիայի, Պոյսի և Լեհաստանի, Ռումինիայի, Ամերիկայի գաղթականությունների միջև։

Հր.Աճառյանը հայ գաղթականությունները բաժանում է չորս գծի՝ նյութիսային (տասը գաղթօջախ), հարավային-արևելյան (տասը գաղթօջախ), հարավային-արևմտյան (ինը գաղթօջախ) և արևմտյան (տասները գաղթօջախ)։ Ըստ այդմ էլ աշխատությունը բաժանվում է չորս մասի։ «Հյուսիսային գիծ» մասում Հր.Աճառյանը ներկայացնում է հետևյալ երկրները (անվանումները՝ ըստ Աճառյանի)՝ վրաստան, Ադուանք, Հիսիսային Աֆրիկէ, Եթովպիա, Տրանսվալ, արևմտյան գիծ՝ Փոքր Ասիա, Մալաթիոյ շրջան, Տրապիզոնի շրջան, Սեբաստիոյ շրջան, Կեսարիոյ շրջան, Էնկիւրի-Գոնիոյ (Անկարա-Իկոնիայի) շրջան, Ջմիւռնիոյ շրջան, Բոտսիոյ շրջան, Նիկոմիդիոյ շրջան, Պոյիս, Յունաստան, Կրետէ, Մակեդոնիա, Պոլկարիա, Սմբիա, Իտալիա, Մալանիա, Ֆրանսա, Ջուիցմբիա, Պելճիկա, Գաղղիա, Հոլանդիա, Շուտլանդիա, Անգլիա, Իռլանդիա, Հիսիսային Ամերիկայի Միացեալ Նահանգներ, Հարավային Ամերիկա։ Յուրաքանչյուր գաղթօջախի մասին խոսելիս Աճառյանը ներկայացնում է տվալ երկրի պատմությունը, թե ինչ պատճառով են հայերը եկել այդ երկիրը, ինչ դեր են խաղացել նրա քաղաքական, տնտեսական, մշակութային կյանքում։ Աշխատությունը քարձր է գնահատում խմբագիր պրոֆ. Հ.Բարսեղյանը. «Հր.Աճառյանի հայագիտական բոլոր բազմազնյուր գործերին առանձնահատուկ է նյութի ընդգրկման պատմական թե արդիական լիակատարությունը։ Հայոց գաղթականության պատմության շարադրանքում հեղինակը եթե պատմական առումով գրեթե հասել է թեմատիկ ընդգրկման լիակատարության (գրեթե ենթադրում, որովհետև բացարձակ լիակատարություն չի լինում),

ապա համաժամանակյա կամ արդիական կտրվածքով, գաղթօջախների անընդհատ ուժացման և նորերի գաղացման պայմաններում, նա մշտապես գտնվել է պատմական իրադարձությունների հետևից գնացողի, իր գրատվածները անընդհատ լրացնողի ու թարմացնողի դերում: Այս էլ այն դեպքում, երբ հայերի գաղթականության գործընթացը ժամանակային առումով ընդգրկում է հազարամյակներ, իսկ տարածական առումով Արևելյան կիսագունդը՝ հյուսիսից հարավ, խաղաղ օվկիանոսից Ատլանտյան օվկիանոս և արևմտյան կիսագունդը՝ Հյուսիսային Ամերիկայից Հարավային Ամերիկա ներառյալ» [1], էջ 5:

Աճառյանի նկարագրմամբ՝ դարեր շարունակ հայ գաղթականության կամ նրա գործի մեջ են Հայոց մեծագործ արքաներն ու հայրենի հող ու երկիր պաշտպանող զորավարները, երկիր շինացնող ու մշակող, վանքեր ու տաճարներ կառուցող, կամուրջներ ու ապարանքներ կանգնեցնող ճարտարապետները, շինականներն ու արհեստավորները, ազգ պահող և կերակրող, աշխարհի հարստացնող վաճառականները, հային հավատացյալ պահող, անհավատին հավատի բերող, աշխարհավրու ճկունքին անձնվիրաբար սպասավորող, ըստ անհրաժեշտության նաև պատերազմում հերոսացող հոգևորականները, գիր ու գրականություն, տպարան ու հրատարակություն, գիտություն ու մշակույթ ստեղծող մտավորականությունը: Եվ այս ամենը հայրենիքից դուրս, օտար տերության և իշխանության տակ [1], էջ 6:

Հր.Աճառյանը նշում է, որ «հայաշատության կողմեն Պօլսեն և Թիֆլիսեն յնտոյ աշխարհի երրորդ քաղաքը» Բաքուն էր [1], էջ 54: Այն մի աննշան տեղ էր, շամախցիների արքայազնը, որը քաղաղի անապատ հանքի շնորհիվ համաշխարհային քաղաք է դարձել: Առաջին անգամ 1874 թ. Միրզոյանցի է նավթաեռոցում առաջին շատրվանը խփել, որը Բաքվի համար մեծ առաջաց է կանխանշել:

Արքիմի և Նոր Մասիսեանի մասին խոսելիս՝ Հր.Աճառյանը հատկապես նշում է աշխարհահռչակ ծովանկարիչ Հովհաննես Այվազովսկուն, հայտնի երաժշտագետ Բրիտատաիոր կարա-Մուրզային, Ալ.Սպենդիարյանին, գրողներ Ռ.Պատկանյանին և Մ.Նալբանդյանին:

Աճառյանը հպարտությամբ է խոսում Նոր Զուղայի ազնվական տոհմից սերված Լազարյանների մասին: Ղազար Ղազարյանը իր չորս որդիներով և մեծ եարաստությամբ Մոսկվա էր եկել և այն փողոցը, որտեղ գտնվում էր Լազարյանների տունը, որտեղ և հետո կառուցվել են Հայոց Մ.խաչ եկեղեցին ու Լազարյան ճեմարանը, կոչվել է Հայոց նրբանցք (Армянский переулок): Ղազարը 1753 թ. կառուցել է նաև կերպասի ու կտավեղենի գործարան, որտեղ արտադրում էր սկիեթի դիպակ, մետաքսեղեն, կերպաս, թավիշ, որոնք չէին տարբերվում ֆրանսիական ու անգլիական ապրանքներից: Կայսերական պալատը նրա հաճախորդն էր: Ղազար Լազարյանի մեծ որդին՝ Հովհաննեսը, տեղափոխվել է Պետերբուրգ: Կայսրուհու հրամանով Հովհաննես Լազարյանը նշանակվել է արքունի դրամանոցի խորհրդական, ստանձել Միքիլից և Պերմից պոնձադարանները մայրաքաղաք փոխադրելու գործը, հետզհետե դարձել ատենական խորհրդական, ներքին գործերի պետական խորհրդական, իսկ Ավստրիայի կայսրը նրան կոմսության և պարոնության տիտղոս է շնորհել: 1815-ին Հովհաննես Լազարյանի կտակով է Մոսկվայում հիմնվել Լազարյան ճեմարանը: Կարևոր է նաև Գաղաթայան Անկյանցոցի կառուցումը: 1718-ին իզմիրցի հայերը Ասարախանում հիմնել են մետաքսի գործարան և ռուսների սովորեցրել կերպասի ջուլիսեղությունը: 1810-ին Ասարախանում բացվել է Աղաթայանի վործարանը:

«Եթե չհաշուենք Պոլսը, Լեհաստանը եվրոպական հայ գաղթականության մեջ ամենէն մեծը և ամենէն բազմահայն եղած է: այնքան ազդեցիկ եղան հոն հայերը, որ լեհերը Տերութեան մէջ տէրութիւն մը կը կարծէին մեզ և անոր առջէն առնել կը մտածէին», - գրում է Հր.Աճառյանը [1], էջ 115:

Լեհաստանի թագավորները հայերին իրենց երկրին կապելու, նրանց միջոցով վաճառականությունն ու արհեստները ծաղկեցնելու նպատակով հայերին տվել են կրոնական ազատություն, քաղաքական արտոնություններ: 1344 թ. Գազիմիր Գ թագավորը հայերին ինքնավարություն է տվել: Հայերը կազմել են առանձին վարչություն, օւնեցել են հատուկ հայ քաղաքագլուխ, որն էլ իրեն աջակից է ունեցել 12 հայ դատավորներ: Հայերը միայն վաճառականությամբ չեն զբաղվել, գինվորական, տերունական պաշտոններ էլ են զբաղեցրել,

շատ ընտանիքներ ազնվականության պատիվ են ստացել, ոմանք էլ թագավորի նրկորոշը լինելու արժանացել, դարձել թագավորական թիկնապահներ: Հայերի մասնագիտությունը են դարձել թարգմանչությունը, արհեստների մեջ՝ հատկապես ասնդնագործությունը, ոսկերչությունը:

Հունգարիայում հայերը առաջին տեղն էին գրավում եզների վաճառականությամբ, հայտնի են դարձել նաև ձիաբուծության և կաշեգործության մեջ:

80-ական թվականներին Աստրաքանի վաճառականությունը միայն հայերի ձեռքում էր. նրանք զբաղվում էին չամիչի, ծիրանի, նուշի, չոր մրգերի և բամբակի արտահանությամբ:

Հնդկահայ գաղութի մասին խոսելիս ոգևորությամբ է խոսում Իսրայել Օրու, ինչպես նաև հնդկահայ վաճառական Էմին Հովսեփյանի մասին, որը Լոնդոնից Պետրբուրգ է գնացել, իր միլիոնները կայսրուհուն տրամադրել և առաջարկել Ղարաբաղի հայության ազատությունը 1771-ին Գրիգոր աղա Չաքիկյանը Էջմիածնում բացել է Էջմիածնի առաջին տպարանը, շուտով նաև թղթի գործարան: Ազգային ազատության տենչով վառված ջուղայեցի միլիոնատեր հնդկահայ Աղա Շամիր Սուլթանում Շահամիրյանը Մարդաստան բացել է հայկական դպրատուն, հրատարակել նվիրական ոգով մի այբբենարան, որից հետո «Նոր տետրակ» աշխատությունը, 1773-ին՝ «Որոգայթ» փառաց՝ գիրքը, որը ապագա Հայաստանի օրինագիրքն էր:

Հայերը կառավարական բարձրագույն պաշտոնների են հասել Բիրմայում: Հատկապես նշանավոր էր Մանուկյան գնդապետանը, որի «նահապետը Բիրմանիայի Արտաքին գործերի պաշտոնէությունը վարելով, մեծ ծառայություններ է մատուցել Բիրմանիայի կայսրության»[1], էջ 319: Նրա անդրանիկ որդին տակառապետի, իսկ կրտսեր որդին ծովապետի պաշտոն են վարել: Կայսերական պալատում պաշտոնյաներ էին նաև Մինաս Գրիգորը, Տեր Նաչատուրյանը, Ավդալ Ավդալյանը:

Հրաչյա Աճառյանը հնդկահայ գաղթականության վերջին ճյուղն է համարում Ավստրալիան: «Առաջին անգը, որ գաղթել է Աւստրալիա, Մելբուրն Մանուկյանց անուն Նոր Ջուղայեցին է, որ նրկու ընկերներով գնաց Մելբուրն» [1], էջ 335: Տեղացիները ատելությամբ էին լցված օտարների հանդեպ, և գաղթականները հաջողություն չէին ունենում: Հրաչյա Աճառյանը 1905-06 թ.թ. տեղի ունեցած հետաքրքիր մի դատ է ներկայացնում, որից հետո հայերին Ավստրալիայում բնակվելու արտոնություն է տրվում՝ ի տարբերություն ասիացիների: Հին նախնիների Մարտիրոսը (Մարթին) Մելբուրնում մի անգլիացի ընկերոջ հետ տասնյակ տարիներ ոսկեհանությամբ էր զբաղվում, մեծ քանակությամբ ոսկի է գտարան տանում, հանձնում գործարանատիրոջը: Որոշված օրը անգլիացի ընկերը գնում է՝ մաքուր ոսկին ստանալու: Հրձա գործարանատիրը մեծում է տալ՝ փորձելով անգլիացուն համոզել, որ դավաճան հայ ընկեր է ունեցել: Դիմում են դատարան: Զանի որ Ասիայի գնդերը իրավունք չունենին Ավստրալիայում ապրելու, երեսն մեջտեղ է բերում Մարթինի հայ լինելու հանգամանքը: Դատարանը վճռում է, որ հայը 24 ժամվա մեջ հեռանա Ավստրալիայից: Սակայն մի անգլիացի փաստաբան կամովին բողոք է ներկայացնում, վերաբնություն պահանջում, բազմաթիվ նվիրապետան հնդկականների աշխատությունների վրա հիմնված պնդախոս ճառով ապացուցում, որ հայերը հնդկավրդական ցեղին են պատկանում, եվրոպացի են և իրավունք ունեն Ավստրալիայում ապրելու:

Եգիպտոսը նշանավոր կրթական կենտրոն էր: Ըստ խորհնացու՝ V դարում հայ թարգմանիչները նաև նրա մայրաքաղաք Ալեքսանդրիայի դպրոցներն են հաճախել: 640-ին արաբները տիրում են Եգիպտոսին: Արաբ բանակի հրամանատար Ամր-իպ-ալ-Ասին իր բարեկամ հայազգի ուրաջյալ զորավար Վարդանին նշանակում է Եգիպտոսի հարկապետ: Սա կահիրեի մեջ մի վաճառափողոց է շինում, որն իր անունով կոչվում է Սուրի Վարդան (Վարդանի շուկա): Հայերը Եգիպտոսում մեծ պաշտոններ են ստանում, նրանց մի մասը ուրանում է հավատը: XI դարում Եգիպտոսի մեծ վեզիրն էր Պատրը, որը նաև բանակների հրամանատարն էր, քաջ սպարապետ, փառավոր իշխան և պետության նեցուկը: Նա նորոգում է Լահիիրն մայրաքաղաքը, որտեղ նաև հայկական բանակ է նստում, որը նրբման պաշտպանում է հայությանը: Պատրը Եգիպտոսում կառավարում է 20 տարի և մահանում 1094 թ.: Նրան փոխարինում է որդին: 1135-37 թ.թ. Եգիպտոսի վեզիրն էր Վահրամ Պախլավունին: Մինչև 1167-ը Եգիպտոսի վեզիրները հայ էին: Այնուհետև՝ հատկապես մամլուքների շրջանում,

նգիպտահայ գաղութը «խնդհանում» է: XIX դարի սկզբներին նշանավոր էին հայ դերձակներն ու արծաթագործները: 1832 թ. Մեխմետ-Ալի փաշան օսմանցիների դեմ ապստամբում է և եգիպտոսը անկախ հայտարարում: Բանակցությունների մեջ մեծ դեր է խաղում Պողոս Բնյը, որի մասին «Երոտական լրագրերը վկայում են, թե ոչ մի երոտական խորհրդական կրնար այդպիսի կարևոր խնդիր մը այնչափ կարճ ժամանակէն լմցնել, ինչպէս այս խորագիտ և մեծահանճար հայը» [1], էջ 455: Այդ շրջանում նորից Եգիպտոսում ծնավորվում է ազնվական ու հարուստ հայ սերունդ, որոնց ղեկավարն էր Պողոս բնյը: Նա «արտաքին գործոց, վաճառականության գլխավոր և պաշտոնատարի, և՛ խորհրդականի անունով երկար ժամանակ կառավարել է երկրին արտաքին քաղաքականությունը» [1], էջ 455: Եգիպտահայերի մեջ «տիեզերական» հռչակ են ունեցել Արթին փաշան և Նուպար փաշա Նուպարյանը: Արթին փաշան 1834 թ. Եգիպտոսի գորապետի օգնականն էր, 1835-ին՝ տնտեսագիտության և թաղամանչության վարժարանի տնօնչ, բացել է Բազմարվեստից վարժարանը, հետո հազարավանդի աստիճան աստացի է և Պետական ժողովի անդամ նշանակվել, ինքը անձամբ թաղամանել է եվրոպական օրենսդրական գրքերը և սովորեցրել Մեխմետ Ալի փաշային: 1839-ին փաշայի առաջին թարգմանն ու քարտուղարն է դարձել, 1841-ին իբրև պատգամավոր Փարիզ և Լոնդոն զնացել, 1844-ին Արտաքին գործոց և վաճառականության նախարար նշանակվել: Ստացել է նաև փաշայի տիտղոս, որը քրիստոնյաներին տրվող բարձրագույն աստիճանն էր:

Նուպար փաշա Նուպարյանը հայերենից բացի գիտեր թուրքերեն, ֆրանսերեն, անգլերեն, իտալերեն, հունարեն և արաբերեն: Սկզբում արտաքին գործերի նախարարությունում էր, հետո դարձել է փաշաների անձնական քարտուղար, երկաթուղայինների ընդհանուր տնօրեն, հանրօգուտ շինությանց և արտաքին գործոց նախարար և, վերջապես, Եգիպտոսի նախարարապետ (վարչապետ): Նրան էր պատկանում Ալեքսանդրիայից մեկ ժամվա տարածությամբ հեռու գտնվող Ապուհումուս գյուղը, որտեղ մի քանի հազար օրավար հողի վրա բրինձ էր մշակում: Մեծ դիվանագետ ու քաղաքագետ էր, ունի նվիրդական հռչակ, կառուցել է տվել Կահիրե-Սուեզ երկաթուղին: Նրա փառքի պատկան են համարում Եգիպտոսի դատական վերակազմության գործը, քնիկ դատարանների բարձնորոգումը: Ինքը հատուկ օրենսգիրք է կազմել, որով էլ առաջնորդվում էին: Եգիպտական ժողովրդի ամենամեծ պաշտպանն էր և վայելում էր մեծ ժողովրդականություն: Նուպար փաշան մահացել է Փարիզում 1899 թ: 1904 թ. Ալեքսանդրիայում կանգնեցրել են նրա արձանը:

Եգիպտահայերի առաջին կանոնավոր դպրոցը՝ Կահիրեի «խորենյան ազգային վարժարանը», հիմնել է վանեցի վաճառական Կարապետ Գալստյանը և ապահովել նրան՝ կտակելով 50 հազար ոսկու կալվածներ: Մատթեոս Նախկնդոս Իգմիրլյանը Եգիպտոսում Մահմանադրություն է հաստատել և օրենքը ամեն ինչից բարձր սահմանել: Եգիպտահայ գաղութում աշխույժ էր նաև ազգային կյանքը: Տպագրվում էին մի շարք թերթեր, նաև «Արտեմիս» ամսաթերթը, որ կանանց հարցին նվիրված առաջին հայ թերթն էր՝ օրիորդ Մարի Պնյլնյանի խմբագրությամբ: 1905-ին Պողոս Նուպար փաշան, որը հնարել էր էլեկտրական գութան և ճանապարհների հաղորդակցության և երկրագործության նախարարն էր, Կահիրեում բացել է երկրագործական առևտրական դպրոց: Նրա նախագահությամբ 1906-ին Կահիրեում կազմվել է «Հայկական բարձրորձական ընդհանուր միությունը»: Հիմնվել են նաև «Մանրագյան ուսումնասիրաց ընկերությունը», «Հասպուրական դպրոցասիրաց ընկերությունը», որոնք 1907-ին միացել և կազմել են «Միացյալ ուսումնասիրաց ընկերություն»:

XX դարի սկզբին եգիպտահայերի մեջ հայտնի էին Ալեքսանդրիայի բարձրագույն դատարանի նախագահ Կարապետ Կնյիսյանը, կառավարության գլխավոր երկրաչափ Միքայել Կնյիսյանը, Ալեքսանդրիայի խառն դատարանի անդամ Արթին Կնյիսյանը: Եգիպտոսի առաջին փաստաբանը թիֆլիսեցի տիկին Նաթալիա Միշնին էր, որը 1908-ին փաստաբանների կաճառ է ստեղծել [1], էջ 460-461:

Հայ գաղթականության պատմության մեջ քիչ գաղութներ են տևական կյանք ունեցել: Հրաշյա Աճառլյանը այդ տնտեսկետից առաջինն է համարում Սեբաստիայի գաղութը, իսկ նրա ժողովրդին բնութագրում է որպես հայության ամենամաքուր ներկայացուցիչներ՝ խաղաղ ու

պարկեշտ բնավորությամբ, մարդասիրությամբ, ազգասիրությամբ, ջերմեռակ բարեպաշտությամբ: Սեբաստիայի շրջանից են բժիշկներ Բունիաթ Սեբաստացին, Ամիրդովլաթ Ամասիացին, որը գրել է «Անգիտաց Անպետ» բժշկական գիրքը (1496), Մխիթար Աբբա Սեբաստացին՝ Վենետիկի Մխիթարյան Միաբանության հիմնադիրը, Սամվել Մուրատը՝ Հնդկաստանի նշանավոր բարեգործը և Վենետիկի Մուրադյան վարժարանի հիմնադիրը, և այլք:

«Հայ գաղթականությանը մեջ մեծագույնը և աշխարհի ամենէն հայաշատ քաղաքը Պոլիսն է, որ նախ Բիզանդիոն անունը կը կրէր» - գրում է Հր.Աճառյանը [1], էջ 585: Նա նշում է, որ հայերը հույների հետ բարեկամ ու դաշնակից են եղել վաղուց, իսկ սկսած IV դարից հայերից շատերը ուսանելու նպատակով էին գնում Աթենք ու Պոլիս, իսկ «Ե դարուն յարաբերությունները ավելի կընդարձակուին, և Պոլիսը հայ թարգմանիչներու ուսումնավայրը կը դառնայ» [1], էջ 586: Աճառյանը գրում է, որ 990 թվի մեծ երկրաշարժից փլվել էր նաև Սուրբ Սոֆիայի գմբեթը: Հույն ճարտարապետները չեն կարողացել այն վերակառնել: Տաճարի գմբեթը նախագծել ու առաջինից էլ ավելի կայուն ու գեղեցիկ (31 մետր տրամագծով) կառուցել է հայ անկանի ճարտարապետ Տրդատը:

Աճառյանը Պոլիս հայ գաղթականության հունական շրջանը հասցնում է մինչև 1452 թիվը. «Հոս կը վերջանայ Պոլսոյ հայ գաղթականության պատմության առաջին շրջանը և կկսի երկրորդը՝ Օսմանեան շրջանը» [1], էջ 598: Դրա սկիզբը դրվում է 1453 թ., երբ Սուլթան Մուհամմետ Բ-ն գրավում է Պոլիսը: Ղալաթիան, որ առաճիկն եվրոպական բերդաքաղաք էր, կամոլիս անձնատուր է լինում: Սուլթանը այդ երկու մեծ քաղաքների պարիսպները քանդել է տալիս և Փոքր Ասիայում եղած օսմանցիներին հավաքում Պոլսում: Քաղաքի անունն էլ փոխում, դնում է Իսլամպոլ (այսինքն՝ տաճիկը շատ): Սուլթանը Փոքր Ասիայից Պոլիս գաղթած հայերին ևս պատվով է ընդունում, արտոնություններ տալիս, առանձին թաղամասեր հատկացնում, արտոնում ազգային եկեղեցիներ ու դպրոցներ կառուցել և հորդորում նպաստել Օսմանյան կայսրության կառուցմանն ու ամրապնդմանը: «Հայասեր Սուլթանը քանի մը տարիէն Պրուսա գնաց. հոն գտնելով հին բարեկամ Յովակիմ եպիսկոպոսը՝ վեց տուն ազնուական հայոց հետ Պոլիս տարաւ և շնորհեց իրեն պատրիարքական Փաթրիկ տիտղոսը (1461 թ.): Այսպէս սկսաւ Պոլսոյ պատրիարքութիւնը, որուն իշխանութիւնը կը տարածուէր այն ժամանակ այնչափ տնդ միայն, որչափ կը տիրէր Ֆաթիհ»: «Յովակիմ Ա Պրուսացի (1461-1478) կազմակերպեց Պոլսահայոց առաջին համայնքը, որ պաշտօնապես կոչուեցաւ Այլը Ճէմաթը (վեց հասարակություն)» [1], էջ 600:

XVIII դարում Պոլսի հայկական թաղերի թիվը հասնում էր 20-ի, այդքան էլ եկեղեցիներ, դպրոցներ և այլն: Իրար նն հաջորդում հարյուրավոր պատրիարքներ, որոնցից ամենաառաջադիմականն ու ազգամկերը Մկրտիչ Նրիմյանն էր, որի անվան հետ է կապված «թղթն շերմի» պատկերավոր արտահայտությունը: Գովեստով է խոսում պատրիարք Մատթեոս Իգմիրլյանի (պոլսեցի) մասին, որը «երկաթն պատրիարք» տիտղոսին էր արժանացել:

1860-1880 թ.թ. Հր.Աճառյանը Պոլսի մտավոր ու հասարակական կյանքի դարազրկումն է համարում: Իրենց գործունեությունն են ծավալում բազմաթիվ գործիչներ, գրողներ, թերթեր, թատրոններ, դպրոցներ, տպարաններ, ընկերություններ: Պոլսի հայերը մեծ դեր են խաղացել օսմանյան տնրության մեջ: Թուրքիան չորս հիմնական հպատակ ազգ է ունեցել: Քրդերը՝ իբրև բարբարոս, բուլղարները՝ իբրև խղճով պարտիզան, հույները՝ իբրև պետական լեզուն սովորելու մեջ անընդունակ, չեն մասնակցել պետական գործերին: Ասպարնդը մնացել էր հայերին: XIX դարում Օսմանյան պետության ելմանական մասը հայերն էին ղեկավարում: Ընդհանուր մարալին հասույթը հանձնված էր Տյուզյան Հովհաննես Չելեպիին, վառողպետությունը ժառանգաբար Տադյանց ձեռքում էր: Արքունի պալատի և պետական պաշտոնյաների տների հացի մատակարարողները XVII դարից նույնպես հայերն էին, իսկ քանակի հացի մատակարարողները՝ Նորատուկյանները: Պետության գանձարանի տնօրենությունը հանձնված էր Տյուզյանց, որոնք առաջ արքունի ոսկերչապետ էին, հետո էլ՝ Պեղզյան Հարություն ամիրային: Սուլթան Մահմուտը նույնիսկ իր պատկերը, որ բարձրագույն նշանն էր, նվիրել էր նրան, տնտեսության էր գնացել հիվանդ ժամանակ, ծալյալ մասնակցել նրա հուղարկավորությանը: Հովհաննես Պեյ Տադյանը Պեյգուլի թղթի գործարանի վերատեսուչ է

աշխատել, Էյուպի մանածի գործարանի տնտւոյ, այնուհետև Ագետլըի վառողապետ: Նա հնարել է հրացանի երկաթները ծակելու մեքենա: Նրա ղեկավարությամբ են շինվել Պեյգեզի կաշվի, Նիկովմեդիայի չուխայի, Հնրեքնի մետաքսեղենի, Ջնթիսի Պուրնուի երկաթ ձուլելու և տպանդի գործարանները: Արքունի ճարտարապետությունը հանձնված էր Մերվեյան ճանիկ ամիրային, հետո՝ ժառանգաբար Պալյանների նշանավոր գեղին: Փաստորեն հայերը կամ նախարար էին, կամ էլ օգնական, խորհրդական: Երկրի հարկահավաքը հայ էր: Արքունի ղեկավարն համալսարանի ղեկավարը և գլխավոր դասախոսները հայ էին: Հարություն փաշա Տառյանը արտաքին գործերի նախարարության խորհրդական անունով վարչին էր, Պետրոս Գոյումճյանը՝ հանքերի և անտառների վերատնտիւր: Արհեստի, երկրագործության, վաճառականության և արվեստի մեջ ևս հայերը մեծ դեր ունեին: Արքունի հրդեհաշէջ խմբի ջրհանները պատրաստում էր Նիկողոս աղան, Գավաֆյանը հնարել էր ծովը վառելու նոր հունական հուր, տպարանապետ Պաղտատյանը՝ բազմագույն տպագրությունը, Թազվոր Մելլոյանը՝ խոտոր ծայնացույցը: Ընդամաքումը գրեթե հայկական արվեստ էր, Պուլի նշանավոր բժիշկները հայեր էին, ծաղկի պատվաստն էլ հայերի գյուտն էր: Պոլսում գործում էր մի հիվանդանոց՝ «արժանի ամեն ազգի նախանձը շարժելու. ունի 5257 քառակուսի մէթր տարածություն (յետոյ բարձրացաւ 35000 քառ. արշին) բազմաթիւ բաժանմունքներով ինչպէս՝ եիւրանոց, յիմարանոց, անկելանոց, ծերանոց, արհեստանոց, դեղարան, մոսարան ևն. կը խնամէ 1100-է ամէկ թշուառներ» [1], էջ 635: Հայերը գերազանցում էին նաև փաստաբանության և դժգոհողության մեջ: «1860-ին ֆուտա և Ալի փաշաները մտածած էին տաճկական հանելուկային գրերը թողուլ և պաշտօնական գիր ընդունիլ հայերէնը: Մեծ եպարքոս Բնէիտ փաշան սորվեցաւ հայ գիր, որպէսզի տարածէր թրքոց մէջ: Կ'ըսուի, թէ օսմանեան երեսփոխանական ժողովին ալ նույնը ընդունուած էր, բայց ազգային փառասիրութիւնը կամ ժողովին շուտ փակումը յետոյոց զայն» [1], էջ 643: Ժողովրդական բանաստեղծության՝ աշուղության, և մանկավարժության մեջ ևս հայերը մեծ դեր ունեցան, նույնիսկ տաճկերեն առաջին եվրոպական ոճով դասագրքերը հայերն են կազմել:

Վենետիկի գաղութական հայերի մեջ Հր.Աճառյանը առանձնացնում է Անտոն Սուրյանին, որը 1559-ին հնարել էր ծովի հատակը բերելու և մարքելու մի մեծ գործը: Նա կարողացել էր ծովը ընկղմված մեծ գիմպորական նավը հանել, մարքել Վենետիկի նավահանգիստը, իսկ 1570-ին հնարել էր նոր տնակ թնդանոց: 1575-77 թվերին Իտալիայի խոլերայի համաճարակի շրջանում Սուրյանը մի ղեղ էր հնարել ու նրանով փրկել շատերի կյանքը:

Փարիզի սրճարանային կյանքի հիմնադիրը հայազգի Հարությունն էր, որը 1671 թ. Սեն Ժերմեն տոնավաճառում բացել էր առաջին սրճարանը: 1798 թ. Փարիզում Արևելյան լեզվաց վարժարանում, Նապոլեոնի կարգադրությամբ բացվել էր հայերեն լեզվի դասընթաց, որի պատասխանատուն էր նշանակվել Շահան Զրպետը: Նապոլեոն Ա-ն շատ հայ թիկնապահներ և օգնականներ է ունեցել, որոնց մեջ նշանավոր են եղել Ռուստամը (կամ Ռուբան), Միր Դավթը և Մուրատը: Փարիզում հայ ուսանողների սիրած մասնագիտությունը բժշկությունն էր: Վասկապեն նշանավոր էր Հովսեփ Մելլոյան Պեյրանը: Նա միակ հայն էր, որ ընտրվել էր Փարիզի բժշկական ակադեմիայի անդամ, դարձել Պատվո լեզնոնի ապետ, հնարել նոր վիրաբուժական գործիք ու ղեղ, որն էլ կոչվե են նրա անունով, ընտրվել բժշկական համալսարանի դասախոս: Հր.Աճառյանը հիշատակում է նաև Երվանդ Մանվելյանին, որը գտել էր կատաղության միկրոբը, Դր.Հազարապետյանին՝ կուրյ բժշկին, որը սրտի հիվանդությունների հայտնի մասնագետ էր և, հակառակ իր կուրությանը, ճիշտ որոշում էր հիվանդությունը և դեղատոմս գրում: Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին մեծ հռչակ էր հանել Ֆրանսիայի հայ կամավորների բանակը, որ «Հայկական լեզնոն» անունն էր ստացել: Ֆրանսիայում հայերը մտցրել և զարգացրել են հատկապես գորգագործությունը և մետաքսն հյուսվածքների արտադրությունը: Պոլսեցի Միհրան Գավափաճյանը Մարսելում հայկական ջանասիրությամբ ոչնչից ստեղծել էր սնվական դեղատոմս, թղթի գործարան, միաժամանակ Փարիզի Արևելյան լեզուների վարժարանում դասավանդել տաճկերեն:

«Մինչդեռ Գերմանիան եղել է շուսահայ ուսանողների լեկտորնավայրը, իսկ Ֆրանսիան՝ տաճկահայ ուսանողների, ընդհակառակը, Շվեյցարիան երկու կողմի ուսանողութեան էլ ասպնջական է եղել միշտ, որովհետև Շվեյցարիայում թե՛ Ֆրանսերենը և թե՛ գերմաներենը զուգընթաց են» [1], էջ 728: Հայ ուսանողներից նշում է Հարություն Արևելյանին, որը կարողացել

է դառնալ քիմիայի պրոֆեսոր Յյուրիլիսի համալսարանում, վարել զանազան պետական պաշտոններ, իսկ 1883-ին նոյն է Յյուրիլիսի ցուցահանդեսի վարիչը, 1896-ին քարձրացել է Մասիսի գազաթը: 1887-ին Ժնևում հիմնադրել է Հնչակյան հեղափոխական կուսակցությունը, որը հետո փոխադրվել է Լոնդոն:

Բնիկայում Տիրան Սեֆերյանը հնարել է մի տմնակ դիտակ, որով կարելի է մինչև 20 մմ հաստությամբ մետաղե մամենների ներսը դիտել: Թագավորական հրամանագրով պարտադր էր նրա գործածությունը խտացած գազի հետ գործ ունեցող բոլոր հաստատությունների համար:

Ամերիկայում ևս գաղթական հայերը որոշակի ներդրումներ ունենին: Բժիշկ Տառայանը հայկական մածուներ ներդրել է բժշկության մեջ. կառավարության կողմից ստացել մածուների վաճառման մենաշնորհ: Նրան հետևել է բժիշկ Յադուպյանը: 1902-ին Ֆրեզնոյում Սեդրակ Մարալյանը հնարել է նրկու մեքենա՝ մեկը չամիչ չորացնելու, նրկրոդը՝ ծառից պտուղ հավաքելու: Ամերիկյան թոթադրամի հնարողը նոյն է Թովմաս անունով մի հայ, որն էլ նոյն է Օհայոյի կառավարիչն ու ֆինանսների նախարարը: Բյուզանդ Նշկյանը անասունների սնուցանելու նոր մեթոդ է մշակել, իսկ մշեցի Մելթոն Մարգարյանը երեք գյուտ է արել, որոնք «յեղաշրջին նրկաթուղաց վագոնի անիւներու շինութեան գործը» [1], էջ 760: Հարավային Ամերիկայում խաբերդոցի բժիշկ Վ.Օսկյանը հնարել է շերամի գունավոր մետաքսը՝ տասնութ զանազան գույներով: Բժիշկ Լևոն Գասպարյանը մեռած մարմինը քարացնելու գյուտն է արել, իսկ բժիշկ Միհրան Գասպարյանը ճառագայթներով բուժման ամենամեծ մասնագետն էր:

Հր.Աճառյան «Հայ գաղթականության պատմությունը» պատմական դասեր է տալիս մեզ, հիշեցնում, որ նույնիսկ նրբեմնի բարգավաճ ու ծաղկուն գաղթավայրերը տեղական չեն եղել, և հայերն այլ երկրներում լավագույն դնաքերում օտար լեզվով խոսող, տվյալ երկրի առաջնությանը խթանող մարդիկ են: Կարևոր է դա հասկանալ հատկապես մեր պատմության արդի փուլում: Ինչպես նշում է պրոֆ. Հովհ. Բարսեղյանը, «այս գիրքն ընթերցողը պակաս չի գգա նաև գաղթների պատճառ դարձող նրկապատկությունների, թշնամանքի ու դավաճանության, օտարապաշտ ու ազգութագրության, եկեղեցական աթոռակալի, կուսակցական պաշտոնավորության, նրբեմնի նույնիսկ մատնիչության՝ անվանապես բերվող բազմաթիվ օրինակների» [1], էջ 6:

Այսպիսով՝ Հր.Աճառյանը՝ լեզվաբանական մի շարք գիտաճյուղերի սկզբնավորողը, խորահնուտ ու բարեխիղճորեն ուսումնասիրել է նաև հայոց պատմությունը, հայկական գաղթօջախները, առաջիններից մեկը ներկայացրել հայերի ներդրումներն այդ երկրներում:

Резюме

Гр.Ачарян, который является основателем некоторых лингвистических учений, один из видных исследователей истории армянского народа и его миграции (переселения). В статье представляется книга “История армянской миграции” (768 с.), которая характеризует пятьдесят восемь армянских колоний, сформированных на разных континентах мира, а также заслуги армян в разных странах.

Գրականություն

1. Հր.Աճառյան, Հայ գաղթականության պատմություն, Ե., 2002:
2. Հր.Աճառյան, Հայոց պատմություն՝ հյուսված ընդհանուր պատմության հետ, Ե., 2004:
3. Հր.Աճառյան, Այսպիսի հուշերից, Ե., 1967:
4. Խ.Բաղդիկյան, Հրապա Աճառյան մարդը և գիտնականը, Ե., 2005:

ԱրՊՀ, հայոց լեզվի և նրա դասականության մեթոդիկայի ամբիոն

ԲԱՐԲԱՌԱՅԻՆ ԲԱՌԵՐԸ ԵՎ ԲԱՌԱՋԵԼԵՐԸ
ՂԱՅԱՐՈՍ ԱՂԱՅԱՆԻ ՀՔԵՒԱԹՆԵՐՈՒՄ

Ա.Յու. Սարգսյան

Գնդարվեստական գրականության մեջ բարբառային և ժողովրդաստեղծական բառերի ու բառածանրի գործածության մասին քննադատական գրականության մեջ արտահայտվել են իրարանցիկ կարծիքներ: Այժմյանգաղեն անթույլատրելի է համարում նման ձևերի գործածությունը՝ գտնելով, որ «ժողովրդական բարբառները գրողի համար պետք է լինեն լոկ հում նյութ և ուրիշ ոչինչ, իսկ գեղեցիկ գրականությանը ծառայող հեղինակը պետք է գրի միայն գրականական բարբառով (լեզվով)»: Դրան հակառակ՝ դասական շատ գրողներ, կարևորելով խնդրո առարկա բառերի և բառածանրի անհրաժեշտությունը, մեծապես օգտվել են մայրենի բարբառների ու խոսվածքների հարստությունից, ինչպես Արսլանը՝ Արարատյան, Թումանյանը՝ Լուսու, Իսահակյանը՝ Կարեն, Բակունցը՝ Գորիսի, իսկ Սայաթ-Նովան ու Մուրադկյանը հիմնականում առեղծագործել են Թիֆլիսի բարբառով:

Ղազարոս Աղայանի հեքիաթներում հաճախ են հանդիպում բարբառային բառեր և բառածանր, որոնց աղբյուրը մեծ գրողի մայրենի՝ Բոլնիս-Լաչանի խոսվածքն է, որը հանդիսանում է Ղազարաղի բարբառի խոսվածքներից մեկը:

Հեղինակի գործածած բարբառային բառերը պայմանավորված են կարելի է բաժանել երկու խմբի.

ա/ գրական հայերենում համարձեցներ ունեցող բառեր

բ/ բառեր, որոնց համարձեցները չկան գրական հայերենում

Առաջին խմբի բառերից են՝ *բաժինը* (օժիտ), *գինահարվել* (սարսալ), *գոլ* (շերտ), *ժնգնել* (ծանածել), *կակուղ* (փախուկ), *կոտիպուզ* (գլուխկոծի), *կոնյան* (կարթածոտ), *մարմնար* (մարամուտ), *մրճոճվել* (խճճվել), *շառանդաղ* (մշուշ), *շիկնը* (վիզ), *չառգոն* (ճանկեղ), *ջգրացնել* (զայրացնել), *տատմար* (մանկաբարձուհի), *տափ* (ցնտին, դաշտ), *տրխատան* (տրվիսաթել), *օշաղի* (վիշապ): Նման բառերի տեղին գործածությունը ավելի ակնառու երևում է խոսքի մեջ, ինչպես. *Երեք օրից հետո ճամփա դրին մեծ բաժնի ու բաժինքով* (էջ 73): *Յոթը լուսն քառակնի, Սև բերդումը Անտես-Աննիանի հսկա նորայրները մեծ տոն էին կատարում իրենց արած հաղթությունների համար* (էջ 68): *Քաղաքների տերն ընտրեց ընտիր ճոթեղենն և, ինչ գաղղ ու զարդարանք, որ պետք էր հարս ու փնայի համար...* (էջ 29): *Նրանք էլ այնպես հախտեցին աղջկանը և այնպես կոլ տվին, որ միայն մի պուտ արյուն կաթեց տերևի վրա* (էջ 28): *Աչքերը գտա, բայց ինչպե՞ս ստղացնեմ* (էջ 23): ... *Իրանց ուտելու բաժինը վերցրին մի ջոկ անասուն, տարան հազ բորեցին մեջը և սկսեցին ուտել* (էջ 21): ... *Աղապհին իսկույն մի կարմիր խնձոր դառավ ու վաղ ընկավ մի տան հերթից* (էջ 82): ... *Պետք է իմանային լավ ձի հեծնել, լավ վազել, լավ լողալ, ծառերի վրա մագլցել, պատակների ու ժայռերի վրա բարձրանալ* (էջ 20):

Բավական է ընդգծված *բաժինը*, *քառակն*, *ճոթեղեն*, *հախել*, *պուտ*, *սաղացնել*, *ջոկ*, *հերթ*, *պատակ* բարբառային բառերը փոխարինել գրական համարձեցներով՝ *օժիտ*, *հնտ*, *կտորեղեն*, *խլել*, *կաթել*, *առողջացնել*, *առնոճին*, *նրդիկ*, *սպառաժ*, հեղինակի և նրա հերոսների խոսքի նրանցը կիտվելի՝ խոսքը դարձնելով ոչ հյույժեղ ու արհեստական:

Առավել տեղին են գործածված գրական հայերենում համարձեցներ չունեցող բառերը՝ որոնք բարբառներում ստեղծված կամ նրանց ինչուսական հիմքին համապատասխան փոխված ու իմաստավորված միավորներ են՝ *ակաճջաթնուկ* (ուրախ լուրի ավետում), *արխաջոր* (առվի ջուր), *գաթաթի* (զայաթ թուղ), *թաթաշոր* (մանկան ձեռքեր բարտրվելու շոր), *թանթուլ* (կենդանիների աջակ ոտքերի թաթը), *խաշու* (լոբալ, մսով և այլն ջրալի կերակուր), *ծննդկան* (նորածին երեխայի մայր), *կռատուն* (հեթանոսական տաճար), *հետկանին* (նրկուրդ կինը), *մադի* (էգ թռչուն), *պոխորակով* (էգ պախար) և այլն:

Դժվար թե հնարավոր լինի դրանց փոխարեն օգտագործել իմաստով շատ թե քիչ մոտ որևէ բաժ առանց աղավաղելու գրողի խոսքի գեղարվեստական հատկանիշները, ինչպես նաև իմաստը: Բերենք օրինակներ.

Գլուխն աղ տաթի թռններն էլ, թուրաւ չորս կողմով բոլորված, իրանց տատին էին հնիհաջ ասել տալիս՝ ականջ դնում (էջ 5): *Գլուղի աղջկերը նկն էին աղբյուրից ջուր տանելու և հերթով*

լցնում էին կրծքներն ու փառքները (էջ 91): Այ մարդ, նա կարծում էի, թե դու սովորականից շատ նա ուտում, էնքան որ նա քաղցած մնում (էջ 21): Կույրները չխնայեցան, որ մի նոր հացընկեր ունին, և թեև չկշտացան այս անգամ, բայց ծայր չխանցին (էջ 21):

Թերևս այս խմբի մեջ պետք է ներառել նաև բարբառային այն հարապատկությունները, որոնց համարվածները գրական հայերենում առանձին բառեր են, ինչպես՝ *թափազա ամեն* (մատուցել, հրավերել), *լոր-լոր անել* (ցատկել, թռչկոտել), *կանաչ-կարմիր* (ծիածան), *հաբու տալ* (պղծախարել), *չափ ընկնել* (արշավել, ստրալ), *կախ անել* (կախել), *բոլորա տալ* (հուսադրել), *լախառնաչի տալ* (շատախոսել), *այնուր չգցել* (անտեսել), *քացի-քացի անել* (քաղաքախել), *հույս տալ* (սնդակել), *դառա անել* (տրտմել):

Բարբառային բառերի շարքին կարելի է դասել մի շարք անծանոթներն ու մականուններն՝ *Օձամանուկ*, *Ջանգի-Ջուճգի*, *Այծատուր*, *Մանուկ-խան*, *Ասլան-Բալա*, *Գյուլնազ տատ*, *Ուլալ*, *Արևամանուկ*, *Պախլատուր*, որոնք հեղինակի կողմից գործածվել են այնպես, ինչպես ընդունված է նեղ ժողովրդի մեջ, կամ է ներթափվել են մշակման՝ համապատասխանեցնելով նկարագրվող դեմքերին և հերոսների խոսելակերպին:

Աղայանի հեքիաթներում ստվար թիվ են կազմում նաև արևելյան լեզուների բառերը.

*Մոր քույրն իր բուրբան ստացել է... (էջ 68): Այսպիսի մի փախժան է ունեցել և Լոխման հերթին (էջ 87): Բազմ դասած Ուխայր... աշղը դառավ և սազը ծնորթի մտավ հարսանքատուն (էջ 83): Դերվիշ էր դառնում և չանազը ծնորթ առած նրդում, փայ ուզում... (էջ 78): Նորափնասն յուր մակարներով սննդան էին նստած և ուրախություն էին անում (էջ 82): Նորափնիս առաջին, ինչպես սովորություն է, շատ սրգնելու կար, որ բերել էին բարեկամները իջրև թազավորի մազա (էջ 82): Այս որ լսեց բժիշկը ունեյին (մաշան) դեմ գցեց և դուրս եկավ (էջ 85): Այդպիսի բառեր են նաև՝ *փալի* (բախտագուշակ), *շայիր* (բանաստեղծ), *չառնար* (արքայած), *հավուզ* (ջրավազան), *հարթոնի* (ավազակ), *դոյ* (խոյ), *դումաշ* (մետաքս) և այլն:*

Նատկանշական է, որ հեքիաթներում ռուսներնից և վերջինիս միջոցով նվորդական լեզուներից փոխառված բառեր գրեթե չկան, ինչպես.

Ուխայր մի ճարպիկ ծնունտով էր, այսինքն՝ աչքակալ, ֆոկուսնիկ... (էջ 75):

Սակայն որևէ գրողի գործածած փոխառյալ բառերի մասին խոսելիս «պետք է խստորեն տարբերել նախ իր՝ գրողի կատարած փոխառությունը օտար լեզվից և այն փոխառությունը, որ ոչ թե գրողը, այլ բարբառն է կատարել»²: Վերը բերված օրինակները հիմք են տալիս ասելու, որ փոխառյալ այդ բառերը Աղայանը վերցրել է ոչ թե փոխառու լեզուներից, այլ մայրենի բարբառից, հետևաբար դրանք կարելի է համարել բարբառային-փոխառյալ բառեր:

Աղայանը մեծ տեղ է տվել նաև բարբառային բառաձևերին և քերականական ձևերին, ինչպես՝ *բալանի* (բանալիներ), *սուկի* (սովինկո), *ժխեր* (ձիեր), *աղջկեր* (աղջիկներ), *աշունքի* (աշան), *կոխրուր* (կողրուր), *առաջն* (առջևը), պատասխանել օր այժի հետ գնաց *ոչխարը* (ոչխարները արածվու տներ): ինձ ուղարկեցեք *տավար* (տավար արածեցնելու):

Ներիաթներին առանձին փայլ են տալիս բարբառային ու ժողովրդական բազմաթիվ դարձվածքներ, ինչպես՝ *փուտ անուն* (մականուն), *մարդու գնալ* (ամուսնանալ), *մինչև նրկինք բարձրացնել* (փառաբանել), *հացը կտրել* (ապրուստից զրկել):

Ամփոփելով վերը շարադրվածը, կարելի է ասել, որ Աղայանի հեքիաթներում բարբառային բառերի, բառաձևերի, քերականական ձևերի, դարձվածքների առատությունը նրան մի կողմից պայմանավորված է հեքիաթների ժանրային բնույթով, մյուս կողմից արդյունք է հեղինակի միտումնավորության՝ նոր գրական լեզուն հարստացնելու, ինչպես նաև իր խոսքը ավելի ժողովրդական դարձնելու համար:

Резюме

В работе представлены диалектические слова и формы слов, использованные в сказках одного из выдающихся представителей армянской литературы - Газароса Агаяна.

Отдельными группами представлены те диалектические слова, которые имеют и не имеют аналогов в литературном армянском языке. А также фразеологизмы, заимствованные из восточных языков слова.

Գրականություն

1. Այդ և մյուս օրինակների համար տե՛ս Ղ.Աղայան, Ներիաթներ, Ե., 2004:
2. Տե՛ս Դ.Իշխանյան, Բակուրցի լեզվական արվեստը, Ե., 1965, էջ 91:

ԱրԴՏ, հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոն

**ԺԱՄԱՆԱԿԱԿԵՑ ԱՅԵՐԵՆԻ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ԱԾԱՆՑՄԱՆ ՉԵՆԹԱԿՎՐՈՂ
ՆԵՐԿՈՐԾԱԿԱՆ ՍԵՌԻ ԲԱՅԵՐԸ**

Շ.Մ.Մինասյան

Բառերի քերականական այն կարգերը, որոնք անմիջականորեն առնչվում են նրանց բառմաստին, առավել հսկված են փոփոխությունների, որոնք էլ հանգեցնում են ընդհանուր օրինաչափություններից շնչումների: Քերականական այդպիսի կարգերից է բայասմբը: Մեծ բայի ամենաբնորոշ քերականական կարգերից է, որի վերաբերյալ առայսօր էլ տարակարծությունները շատ են: Մեր խնդիրը չհամարելով այդ տնտանիքների քննությունը՝ կխոսենք ներգործական սեռի բայերի մի կարևոր առանձնահատկության մասին:

Մեծի քերականական կարգը քննելիս բոլոր լեզվաբանները անգրադառնում են նախևառաջ անցողականության և անանցողականության հասկացություններին, ընդ որում անցողականությունը բնորոշում են ուղղական (հայցական) հոլովով արտահայտվող ուղիղ խնդիր պահանջելու և ընդունելու հատկությամբ, իսկ անանցողականությունը՝ նշված հատկության բացակայությամբ:

Որպես անցողական գործողություն ցույց տվող բայեր՝ ներգործական սեռի բայերը բնորոշվում են երկու սեռատարբերակիչ առանձնահատկությամբ.

1) նրանք արտահայտում են այնպիսի գործողություն, որի կատարման համար պահանջվում է մեկ այլ առարկա, որն էլ քերականորեն ներկայանում է որպես ուղիղ խնդիր,

2) որոշ բացառությամբ ստանում են *-վ* ածանց և փոխում իրենց սեռային նշանակությունը:

Նշված երկու հատկությամբ բնորոշվում են ներգործական սեռի բայերի մեծագույն մասը, սակայն մի շարք բայեր շեղվում են ընդհանուր օրինաչափությունից. նրանք կրավորական ածանց չեն ստանում կամ նրանց կրավորականը գործածական չէ:

Նշված առանձնահատկությունը հանդես են բերում կազմությամբ թե՛ համադրական, թե՛ հարադրական բայեր:

Համադրական մի շարք բայերի կրավորական ածանցման չնթարկվելու հանգամանքը չի փրկել բայի սեռը ուսումնասիրող լեզվաբանների կողմից:

Ա. Մուրվալյանը, խոսելով ներգործական սեռի բայերի մասին, գրում է. «...կան որոշ անցողական բայեր, որոնք չունեն իրենց հակադիր՝ կրավորական ձևերը (կամ դրանք սովորական, գործածական չեն): Դրանցից են, օրինակ *գիտենալ, ուզենալ*՝ կամ *ուզել, կամենալ, ցանկանալ, հուսալ* և այլն»¹: Ա. Աթրահամյանը նշում է, որ ներգործական սեռի բայերը, չնչին բացառությամբ, ի վիճակի են կրավորական ածանցման ընթարկվելու և իրենց սեռային նշանակությունը փոխելու²: Մ. Ասատրյանը ևս մեկ նախադասությամբ նշում է, որ սակավ բացառություններով յուրաքանչյուր ներգործական բայ ունի իր համապատասխան *-վ* ածանցով կրավորականը³: Ն. Պառնասյանը հարցին անդրադառնում է անուղղակիորեն.

«Ժամանակակից հայերենում ներգործական սեռի բայերի ճնշող մեծամասնությունը ունի *-վ* սեռաձանց ընդունելու հատկություն»⁴: Վերջերս լույս տեսած Յու. Ավետիսյանի, Հ. Զարարյանի «*Հայոց լեզու. Ձևաբանություն*»⁵ գրքում հեղինակները որպես բացառություն ներկայացնում են ներգործական սեռի մի շարք բայեր՝ *ունեն, ունենալ, ուզել, ուզենալ, գիտեն, գիտենալ, սովորել*, որոնք *-վ* ածանց չեն ստանում և կրավորական չեն դառնում:

Բառարանային և տեքստային ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ այդպիսի բայերի քանակը զգալի է, երևույթի պատճառները տարբեր:

Կրավորական ածանցման չնթարկվող համադրական բայերը մենք բաժանել ենք երեք խմբի:

Առաջին խմբի մեջ մտնում են մի քանի պակասավոր բայեր, որոնք առիաստակ կրավորական դասնալ չեն կարող: Այդ բայերն են *գիտնմ, ուննմ, լվալ, ցանկալ, հուսալ, Գիտնմ և ուննմ* բայերը պատկանում են ակտիվ գործածություն ունեցող ներգործական սեռի բայերի շարքին և կարող են ընդունել իմաստային լայն ծավալ ընդգրկող ուղիղ խնդիր լրացում, մինչդեռ վերջին երեք բայերը քիչ գործածական են:

Երկրորդ խումբը կազմում են այն բայերը, որոնք իրենց հիմնական իմաստներով չեզոք սեռի են, բայց իմաստափոխությամբ կամ խնդրառական փոփոխություններով տեղաշարժի են ենթարկվել դեպի ներգործականը:

Հասկանալի է, որ գրաբարում միայն չեզոք, ժամանակակից հայերենում նախատաց չեզոք, ապա միայն ներգործական սեռի իմաստով հանդես եկող բայերը առավել ևս կրավորական ածանցման ենթարկվելու հատկություն հանդես չեն բերի: Այդ բայերից են *անցնել, բխել, խնջել, տննչալ, ունկնդրել* և այլն: Կրավորական ածանցման չենթարկվող մի քանի բայեր էլ թե՛ գրաբարում, թե՛ ժամանակակից հայերենում կրկնասեռ են՝ չեզոք և ներգործական սեռերի համատեղումով: Սրանց գրաբարյան սեռային և իմաստային հարաբերությունները հիմնականում պահպանվել են նաև ժամանակակից հայերենում: Այդ բայերից են՝ *աշխատել, ծաղկել, հոգալ, նրկարել, նրկնել, ցնկնել, շողնել, ողբալ, սովորել, սգալ, ստնլ* և այլն: Այս բայերը թե՛ գրաբարում, թե՛ ժամանակակից հայերենում իրենց առաջնային և իշխող իմաստներով չեզոք սեռի են, բացի *սովորել* և *ողբալ* բայերի, որոնցում այժմ իշխում է ներգործական սեռի իմաստը: Այս հանգամանքն էլ խոչընդոտում է նշված բայերի՝ կրավորական ածանց ստանալուն: Այս կապակցությամբ Ա. Աբրահամյանը գրում է, «... որոշ բայերի (չեզոք սեռի – Շ.Մ) մեջ էլ առաջացած ներգործական նշանակությունը անխորի հնարավորություն չի տալիս բայը գործածել կրավորական սեռով: Դրանց մեջ սկզբնական չեզոք նշանակությունն այնքան ուժեղ է լինում, որ արգելք է առաջացնում բայի կրավորական սեռի արտահայտմանը»⁶:

Հիմնական չեզոք սեռի իմաստից իմաստափոխությամբ ու խնդրառական փոփոխություններով ներգործական սեռի իմաստ ստացած բայեր էլ կան, որոնք կրավորական ածանց են ստանում, ինչպես՝ *ապրել-ապրվել, նայել-նայվել, շնչել-շնչվել, սպասել-սպասվել, հնչել-հնչվել* և այլն:

Գրոհել և դիմավորել բայերը ուղիղ խնդիր են առել և ներգործական սեռի դարձել ռուսերենի ազդեցությամբ, ընդ որում նրկորդը ստանում է *-վ-* ածանց, առաջինը՝ ոչ:

Ավելորդ չենք համարում նշել, որ այս բայերը կրավորական ածանց կարող են ստանալ միայն այն դեպքում, երբ հանդես են գալիս ներգործական սեռի իմաստով:

Ընդ որում այս բայերի՝ ներգործական սեռի իմաստով գործածությունը բավական ակտիվ է, որով էլ պայմանավորվում է նրանց կրավորական ածանցումը:

Որոշ կիրառություններում, սակայն, կրավորական ածանց ստացած չեզոք սեռի բայերը արտահայտում են ոչ թե իրենց ունեցած ածանցյալ իմաստով ներգործականի կրավորականը, այլ մի տեսակ գործողության հնարավորություն կամ լինելիություն⁷, ինչպես նրանում է հետևյալ օրինակներում. «Այստեղ չի ապրվում», «Կինոնկարը չի նայվում», «Շղանակի պատճառով չի խաղաղվում» և այլն:

Երրորդ խումբը կազմում են այն բայերը, որոնք բացառապես կամ իշխող իմաստով ներգործական սեռի են, բայց կրավորական չեն դառնում: Այս բայերը տեսականորեն հնարավորություն ունեն ստանալու *-վ-* ածանց և դառնալու կրավորական, սակայն խոշոր մասն կիրառությամբ հանդես չեն գալիս: Պատճառը ներգործական և կրավորական սեռերի ոչ հավասարաչափ կիրառությունն է: Սրանով պայմանավորված՝ կրավորական ածանց չեն ստանում ինչպես քիչ գործածական՝ *այապանել, ազապարել, ավելել, ողորել, պատրվակել, տնկորել, մատովակել, մեղապատել, բոթել, մուծել, թելել* և այլն, այնպես էլ գործածական մի շարք բայեր՝ *աղաչել, շնորհավորել, շոյել, վարել, ուզենալ, ուզել, վայելել, գիտնալ*:

պատասխան: Այդ է պատճառը, որ համագործակցային ուսուցման նպատակների համար հատկապես նպատակահարմար են քաջ հարց: Ինտնրակտիվ խոսակցությանը նպաստող առաջադրանքը այն է, որ ներգրավում է աշակերտներին՝ իրենց գաղափարները կիսելու, տեղեկություն փոխանակելու, ընտրություն կատարելու և որոշում կայացնելու համար:

Ընտրություն կատարելու և որոշում ընդունելու հենց, որ աշակերտները բախվում են այնպիսի իրավիճակի, մեր չկա առաջ տանող ճանապարհի, նրանք պետք է պլանավորեն և որոշեն, թե որն է ամենալավ քայլը, որ իրենց կարող են կատարել: Ընտրություն կատարելը և որոշում ընդունելը օգնում է աշակերտներին փոխկապել ինչ են իրենք սովորել և ինչպես է հնարավոր կատարել առաջադրանքի մեկ կամ մի քանի ասպեկտները: Եթե ուսուցիչը խելամոռն է մշակում համագործակցային առաջադրանքը, ապա աշակերտներին հուշում է, թե որ գրքերից են նրանք օգտվելու, ինչպես են բաժանելու աշխատանքը, ինչպես են ամփոփելու և ներկայացնելու իրենց արդյունքները, ինչպես են գնահատելու իրենց անփական աշխատանքի որակը:

Ընտրություն կատարելը և որոշում ընդունելը պահանջում են հմտություններ, որոնք պետք է շարունակաբար ուսուցանվեն: Եթե աշակերտները համագործակցային ուսուցման քիչ փորձ ունեն, ուսուցիչը կարող է սահմանափակել խմբի համար հնարավոր ընտրությունները:

Վկա որևէ կանոն, որտեղ նշված լինեն համագործակցային ուսուցմանը համապատասխանող թեմաների: Ուսուցիչը, մի փոքր փոփոխելով, գրեթե բոլոր թեմաները կարող է դարձնել կիրառելի փոքր խմբային աշխատանքի համար:

Այնուամենայնիվ կան որոշ առարկաներ և թեմաներ, որոնք ավելի դյուրինությամբ են համապատասխանում խմբային աշխատանքի համար: Պատմությունը, հասարակագիտությունը, ճշգրիտ գիտությունը և գրականությունը այն դպրոցական առարկաների թվում են, որոնցում ուսուցիչները կարող են առանց դժվարության գտնել արդյունավետ հարցեր՝ համագործակցային ուսուցման համար:

Դպրոցի բարելավման ծրագրերում պետք է հատկացնել բավականաչափ ժամանակ, որպեսզի աշակերտները և ուսուցիչները պլանավորեն և գործնականում իրականացնեն ինտերակտիվ առաջադրանքները: Գոյություն ունեցող ուսումնական նյութերի առաջադրանքներից շատերը նույնպես նախատեսված են անհատական աշխատանքի համար: Հետևաբար, անհրաժեշտ է, որ ուսուցիչները անցնեն համապատասխան վերապատրաստում՝ պլանավորել ուսուցողական նոր տեսակի առաջադրանքներ, որոնք նպաստում են փոխնորոգողությանը, հաղորդակցությանը և համագործակցությանը և որոնք պահանջում են ավելին, քան կարող է կատարել մեկ անձը [4]:

Դասապլանը կազմելու ժամանակ ուսուցիչը պետք է հաշվի առնի ժամանակակից մեթոդներն ու դասապլանի կառուցվածքը.

- ներածական մաս (խթանում),
- հիմնական մաս (իմաստի ընկալում),
- ամփոփում (կշռադատում),
- անհրաժեշտ նյութեր,
- կապակցում:

Ներածական մաս.

- աշակերտների ուղադրության գրավում,
- հետաքրքրության ստեղծում, ներգրավում, կապակցում ունեցած գիտելիքների հետ,
- դասի հետագա ընթացքի, նպատակների և ակնկալվող արդյունքների ներկայացում,
- սովորողների ակտիվացում, խթանում:

Հիմնական մաս.

- ռեսուրսավոր նյութի բովանդակության ուսումնասիրում և հետազոտում,
- նյութերի ներկայացում:

Ամփոփում.

- արդյունքների վերլուծություն,
- հետադարձ կապի ապահովում,
- հետագա անելիքների հստակեցում [5]:

Ստորև ներկայացնում են հայոց պատմությունից դասապլան, որտեղ ներկայացված է համագործակցային ռազմավարություններ:

Առարկա՝ Հայոց պատմություն

Դասարան՝

8-րդ

Թեմա՝

Ազատագրական պայքարը Արցախում (18-րդ դար)

Նախատակը և խնդիրները

- Արցախում ծավալված ազատագրական պայքարի և դրա արդյունքների համակողմանի պատկերացումների ձևավորում:
- Ազատագրական շարժման պատճառների պարզաբանում:
- Պատճառ, առիթ, հետևանք կապի հստակեցում:
- Անհատական և խմբային աշխատանքների կատարման հմտությունների ձևավորում և զարգացում:

Անհրաժեշտ նյութեր


Քարտեզ, դատագիրք, տետր, նկարներ, գրատախտակ, իլյուստրացիաներ

Դասի ընթացքը

Ներածական մաս 5-7 րոպե

Գրատախտակին գրել և աշակերտների միջոցով լրացնել

«Իրադարձության վերլուծության գծապատկերը»:



Հիմնական մաս - 20-25 րոպե

- Համառոտ ներկայացնել այն հարցերը, որոնց պետք է անդրադառնալ դասի ընթացքում:
- Հարցնել, թե աշակերտների կարծիքով, ինչու՞ սկսվեց ազատագրական պայքարն Արցախում: Ելնելով աշակերտների պատասխաններից՝ բացատրել սպառնալուծական շարժման պատճառները, ընթացքը և արդյունքը:
- Գրել, ինչպիսի՞ն էր Եսայի Հասան-Ջալալյանը ձեր պատկերացմամբ (ներք ընթացքում չարադրանք, անհատական աշխատանք): Այնուհետև աշակերտը կարդում է իր կողքի, կամ դիմացի նստած դասընկերոջ կարծիքը:

Յուրաքանչյուր աշակերտի տնականից մեկ բառ, որը վերաբերվում է Եսայի Հասան-Ջալալյանին «միտագործ»-ի միջոցով գրել գրատախտակին:

«Ձնագնդի» միջոցը կիրառելով (անհատական, այնուհետև գույգով վերջում՝ քաղցրակով) ներկայացնել ինտելյալ հարցերի պատասխանները:


ա) Ի՞նչ նշանակություն ունեցավ Արցախի ազատագրական պայքարը:

բ) Կապը մեր օրերի հետ:

- Լրացնել գրատախտակին գրված «ո» - ձև աղյուսակը:

ժամանակագրություն	ազատագրական պայքարի վայրերը	նշանավոր դեմքեր

Ամփոփում- 5-7 րոպե



Տնային առաջադրանք -2-3 թույլ

- Կիրառվող մեթոդներ, մեթոդական հնարներ.
Զրույցներ «Իրադարձության վերլուծության գծապատկեր», «Ձնագնդի», «Թ-ձև աղյուսակ», «Ապագայի անիվ»:
- Դասի տիպը՝ յսառը կամ համակցված:
- Միջառարկային, ներառարկայական կապեր՝
նոր դարեր, աշխարհագրություն, գրականություն:

Резюме

В работе рассматриваются вспомогательные методы преподавания предмета «История армянского народа» в общеобразовательной школе в свете нововведений, имеющих место в образовательной системе, требующих внедрения новых методов и подходов.

Գրականություն

1. Ա.Գյուլբուդաղյան, Ա.Ասրգալյան, Դ.Դրիգոդյան, Շ.Գասպարյան, Պատմություն, հասարակագիտություն (ուսուցիչների 5-օրյա վերապատրաստումների պլան և նյութեր), Երևան 2007, 155 էջ:
2. Գ.Հովհաննիսյան, Ա.Զոհրաբյան, Ա.Արնաուդյան, Զ.Գրիգորյան, Մ.Դավթյան, Ի.Օնանովա, Կառուցողական հիմունքները և մեթոդները, Տիգրան Մեծ 2004, 336 էջ:
3. Ա.Գյուլբուդաղյան, Ս.Խաչատրյան, Ս.Խրիմյան, Մ.Պետրոսյան, Մասնագիտական զարգացման ձեռնարկ (Ուսուցիչների համար), Կրթության ազգային ինստիտուտի հրատ., Երևան 2004, 180 էջ:
4. Վնաա Պուրոկուրու, Համագործակցային ուսուցում վերապատրաստողի ուղեցույց-ձեռնարկ, Երևան, «Անտարես», 2006, 96 էջ:
5. Զինի Թիլ, Բուրթիս Ս. Մերեդիթ և Չարլզ Թեմփլ, Զննադատական մտածողության համակարգը ուսումնական ծրագրի ողջ համատեքստում (Ուղեցույց I), (Պատրաստված «Զննադատական մտածողության զարգացումը կարդալու և գրելու միջոցով»), 1999, 42 էջ:

և.Արսլանի անվան ԵՊՄՀ

ԴԱՍԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՅՈՒՄԸ ՈՐՈՇՄ
ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿԶԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԻ
ԼԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՁԵՎ

Մ. Վ. Բաղդասարյան

Ամեն անգամ, երբ սկսվում է ուսումնական տարին, մենք նորից ու նորից վերադառնում ենք ֆիզկուլտուրայի դասերի արդյունավետության բարձրագույն խնդրին: Եվ դա պատահական չէ: Ժամանակակից կյանքը, ընդամենը գնալով գիտատեխնիկական հեղափոխությանը, առանձնահատուկ է արագ, հաճախ նաեւ՝ աշխատանքի ու առօրյայի սրընթաց փոփոխություններով: Դրանք էլ, իրենց հերթին, իրենց անմիջական հետքն են թողնում ֆիզիկական կուլտուրա առարկայի վրա, փոփոխություններ առաջ բերելով դարձյալ անհամար փոփոխությունների ուսումնական գործընթացում՝ հանրակրթական բոլոր առարկաներին, այդ թվում նաեւ ֆիզկուլտուրային նրանց պատրաստականության պահանջների տեսակետից: Սա հույժ կարեւոր, ուշադրության արժանի խնդիր է:

Ուշագրավ է, որ ժամանակակից պահանջները փոխում են մեր հասկացողությունը իրենց իսկ՝ ուսումնական գործընթացի արդյունավետության չափանիշների վերաբերյալ: Եթե մինչև բոլորովին վերջերս հիմնական շարժումների, շարժողական գործողությունների կայուն, հիմնավոր յուրացումը այս կամ այն դպրոցում դասի արդյունավետության վերաբերյալ քննարկումներում համարվում էր բավարար, այժմ արդեն այդ չափանիշների շրջանակները նկատելիորեն ընդլայնվել են: Ներկայումս բավական չէ սիրապետել ծրագրավորված շարժումներին, պետք է նաեւ ձեռավորել տեսական տվյալների պատկերացում իմացություն ու պաշար, կարողանալ յուրացրած գործողությունները կիրառել, գործադրել կյանքի դժվարին պայմաններում, ի վիճակի լինել ինքնուրույն եւ այն էլ՝ համակարգված ձևով, սխառմատիկորեն կատարել ֆիզիկական վարժությունները եւ, հարկ եղած դեպքում, պարապմունքներ կազմակերպել ընկերների հետ: Մրանից բացի, ուսուցիչը չպետք է շրջանցի ներդաշնակ գաղափարն խնդիրը, ասել է թե՛ չպետք է մոռանալ, որ հարկ է, ֆիզիկական դաստիարակությանը գուցաեւ, դասերին ներկաաների մեջ զարգացնել բարոյական, կամային, գեղագիտական ու մտավոր որակներ:

Ցավոք, շատ դպրոցներ դեռ հենու են այդ հիմնական խնդիրները, որպես կարեւոր ներույթ, լուծելու: Ուստիեւ, ուսումնական տարվա հենց սկզբից հարկավոր է եւս մեկ անգամ վերանայել նդած թերությունները, ի գույց հանել ուսումնական գործընթացի արդյունավետության բարձրագույն նդած պահուստային պաշարները:

Այսպես, բարձր արդյունքները հնարավոր են միւսն այն դեպքում, երբ խնամքով ու տնտեսվար ձևով է բաշխվում դասերին հատկացված ժամանակը: Այս տարրական ճշմարտությունը մեր շատ դպրոցների համար դեռ օրինավոր տեսք չի ստացել: Դիտարկումների փաստերն ու ստուգումների տվյալները ցույց են տվել, որ որոշ ուսուցիչներ ֆիզկուլտուրայից իրենց անցկացրած ուսումնական ժամանակի 20, երբեմն անգամ 50 տոկոսը հատկացնում են մրցումներին: Դարձյալ անհամար փոփոխությունների շարժողական գործողությունների եւ ֆիզիկական որակների զարգացման ուսուցման համար պահանջվող տքնաջան աշխատանքի փոխարեն նման մանկավարժները սահմանափակվում ու բավարարվում են միայն վարժությունների կատարման արդյունքները չափերիգով (եռլմտկա) եւ վայրկենաչափով գրանցող հրահանգչի ոչ բարդ՝ պարզագույն դերով: Եվ ահա արդյունքը՝ ուսումնական գործընթացը փոխակերպվում է աշակերտների՝ սոսկ փոքր չափի նորմատիվների նդջ շրջան ներքաշման: Գոյություն ունեն այդ թերությունից խուսափելու եւ թոթափվելու բազմաթիվ ուղիներ: Նրանցից մեկը, գուցե եւ գլխավորը, ֆիզիկական կուլտուրայի դասերի նկատմամբ սահմանված բարձր

վերահսկողությունն է: Դպրոցների տնօրինությունը, ԼԳ նախարարության մասնագետները, կրթության բաժինների հրահանգիչները և մեթոդիստները պետք է հաճախակի այցելեն մարմնամարզության դասիկներն ու դպրոցական սպորտային հրապարակներ: Ոչ թե հենց այնպես նմրկա լինելու համար, այլ՝ ուսումնական գործընթացն ուսումնասիրելու և վերլուծելու, ուսուցչի պլաններն ուղղելու և գործունեությունը ընթացքավորելու նպատակով:

Դասի արդյունավետությունն առաջին հերթին կախված է այն բանից, թե ուսուցիչների կողմից որքանով է իրականացվում նախատեսված պլանը, ուսումնական գործընթացը կազմակերպելու համար ինչպիսի քիչ թե շատ ռազիոնալ ձևեր ու մանկավարժական հնարքներ են կիրառվում, ինչպես պետք է օգտագործվեն եղած մարզասարքերը, գույքը, ուսուցման տեխնիկական միջոցները, ինչպես են հաշվի առնվում պարապմունքների անցկացման վայրի, մարմնամարզության դասի լիճի և դպրոցամերձ մարզահրապարակի, մարզադաշտի կամ պարկի, հարթ կամ կտրտված տեղանքի առանձնահատկությունները:

Պակաս կարևոր չէ և՛ այն, որ ցանկացած պայմաններում պարապմունքների ժամանակ դպրոցականներին սովորեցնելով ու դաստիարակելով, մանկավարժը կարողանա ապահովել նրանց մշտական զբաղվածությունն ու ակտիվությունը՝ դրանով իսկ հասնելով դասերի բարձր արդյունավետության: Սրանից հետևում է, որ, ելնելով դասի խնդիրներից, ամենից առաջ հարկավոր է ընտրել աշակերտների ուսումնական աշխատանքի կազմակերպման այնպիսի ձև, ինչը թույլ տար լավագույնս իրականացնել վերոնշյալ պահանջները: Այսպես, նոր նյութի ծանոթացման ժամանակ, հարաբերականորեն քիչ թե շատ հեշտ, հատուկ ապահովում ու օգնություն չպահանջող վարժությունների ուսումնասիրումը, ինչպես նաև հնչողությամբ յուրաքանչեք վարժությունները կատարելիս կիրառվում է դպրոցականների ուսումնական աշխատանքի կազմակերպման ֆրոնտալ մեթոդը: Դրա առավելություններն են՝ աշակերտների առավելագույն ընդգրկումը շարժողական գործողությունների մեջ, հետևաբար և՛, դասի շարժողական մեծ հազցվածությունը:

Բավական արդյունավետ է համարվում դպրոցականների ուսումնական աշխատանքի կազմակերպման հոսքային մեթոդը (հարընթացը), երբ սովորողները մեկը մյուսի հետևից շարժվելով, ամբողջ դասարանի կամ խմբի համար կատարում են միասնական վարժություններ: Պետք է հիշել, որ այդ մեթոդն ընդունվում-կիրառվում է միայն այն դեպքում, երբ աշակերտները լավ են յուրաքանչեք վարժությունները, և՛ առկա է հուսալի ապահովումը:

Ինչպիսին էլ որ լինի պարապմունքների ժամանակ սովորողների ուսումնական աշխատանքի կազմակերպման մեթոդը, բոլոր դեպքերում այն ուսուցչին նույն պահանջներն է ներկայացնում: Վերջինս պետք է ապահովի սովորողների առավելագույն ներգրավվածություն վարժությունների կատարմանը, ֆիզիկական անհրաժեշտ ծանրաբեռնվածություն՝ նրանց պարտասովածության հաշվառումով՝ հարկ եղած չափով օգտագործելով մարզումների մեթոդները և՛ պահպանելով անվտանգության տեխնիկայի կանոնները:

Պարապմունքների արդյունավետությունը կախված է նաև դպրոցականների ակտիվ (կազմակերպության առանցքային մասի) վրա հենվելու՝ ուսուցչի հնարավորություններից (բաժանմունքի հրամանատար, խմբի կապիտան, ֆիզղեկ)՝ նրանց առավելագույնս հրապրելով ուժերի ներածին չափ օգնությամբ:

Վերջին տարիներս ֆիզկուլտուրայի բազմաթիվ ուսուցիչների նախաձեռնությամբ դպրոցական մարզադասիկները և՛ մարզահրապարակներն սկսեցին համալրվել, հանդերձավորվել ոչ ստանդարտ սարքավորումներով, մարզասարքերով (տրենաժոր), բազմանցումային հանդերձանքով ու գույքով: Նման սարքավորման օգտագործումը զգալիորեն բարձրացնում է պարապմունքների ուսումնական կոմպակտ, սերտ ամբողջականությունը, առաջ է բերում սովորողների բարձր հետաքրքրություն, ստեղծում դասի առավել արդյունավետ մեթոդականակերպչական ձևերի կիրառման լայն հնարավորություններ: Ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչները, որ առարկայի բարձր մակարդակով մատուցման նախաձեռնողի ու շահագրգիռ են, ասեն կերպ պետք է պարապմունքների վայրը հարստացնեն նման՝ նշված մարզասարքերով ու գույքով:

Կարևոր է նաև այն, որ բարենպաստ եղանակին ֆիզիկական կուլտուրայի դասերն անցկացվեն բաց երկնքի տակ՝ մաքուր օդում: Մանկավարժը պիտի իմանա, որ ցուրտ եղանակին

հարկ է խոստացել թեմայի մանրամասն բացատրությունից, պետք է սահմանափակվել հակիրճ ցուցումներով ու հրահանգներով, դասը հազցնի առավել արդյունավետ վարժություններով՝ ապահովելով ամբողջ դասարանի շարժողական ակտիվությունը։ Եվ ընդհանրապես՝ տաք եղանակին հարկ է զգուշանալ սովորողներին չափից դուրս արեին տակ պահելուց։ Նման դեպքերում պարապմունքները պետք է անցկացնել հնարավորինս զով, սովորատի վայրում, ուշադիր հետևելով աշակերտների ինքնագացողությանը, վարժությունները հերթափոխել առավել արդյունավետ շարժունակությամբ՝ առանց հատուկ լարվածության, ճիզ ու ջանքի։

Դասի բարձր արդյունավետությունը պայմանավորված է մեթոդական ձևերի ճիշտ ընտրությամբ։ Դրանք պետք է խթանեն սովորողների հետաքրքրությունը ուսումնասիրվող շարժողական գործողությունների հանդեպ, բարձրացնեն յուրացման ժամանակ նրանց ակտիվությունը, ինչպես նաև՝ լավագույն արդյունքի հասնելու ձգտումը։ Իսկ այդ բանում հաջողության հասնելու համար դպրոցականների ուսումնական գործունեության կազմակերպումը դասին պետք է սկսել հատուկ նպատակայնությամբ, որն անչափ պարզ, մատչելի, գրավիչ ու հստակ պետք է լինի։

Դասի դաստիարակչից դերն ու ազդեցությունը իր բարձրակետին է հասնում միայն մեկ պարտադիր պայմանով. ուսուցիչն իր աշակերտներին համար օրինակ է հանդիսանում բոլոր կարգի հարաբերություններում՝ արժանի ընդօրինակման։ Ուստի, կարևոր է, որ օրինակելի լինեն նաև նրա գաղափարաքաղաքական, գիտակցական մակարդակը, նաև քաղաքական կերպարը, նաև կոլեկտիվում ընդհանրապես ու մանկավարժական առումով։ Նրա պետք է տիրապետի մեթոդական քաջակողմանի ու քաջաշնորհ գիտելիքների, դրանք դարձրածականների ուսուցման ու դաստիարակության պրակտիկայում կենսագործելու կարողության ու հմտության։

Բացի այդ, նկատի առնելով նրկյանների ընկալունակությունն ու դիտողականությունը՝ մանկավարժը պետք է հետևի իր գործելակերպին ու արտաքինին՝ ուշադրություն հատկացնելով հագուստին, սանքրվածքին, ընդունած դիրքին, ձեռքի շարժումներին, շարժումներին, վարքագծին, շրջապատում ու ընկերական շրջանում, մանկավարժական, ծնողական ու աշակերտական կոլեկտիվներում շփման ձևերին, գրավոր ու բանավոր խոսքին։ Դպրոցականները պետք է ուսուցչի մեջ տեսնեն իր աշխատանքին նվիրվածություն ու էնտուզիազմ, զգան նրա սերն ու բարձրակիթթ հավիածությունը իրենց հանդեպ։

Դասի արդյունավետության բարձրացման հնարավորություններն զգալիորեն պայմանավորված են նաև ուսուցման տեխնիկական միջոցներով։ Անհրաժեշտություն է զգացվում մարմնամարզության մեր ունեցած դասիծները վերածել ուսումնական կարքիներին, որոնք իրենց մեջ ընդգրկում են սովորողների ուսուցման նաև դաստիարակության համար պահանջվող ամեն ինչ։ Դա նաև նվազարկիչն է, որը նրկյանների մեջ մշտապես զարկ է տալիս հուզական զգացումների առաջացմանը, նաև մագնիսաֆոնը, նաև ֆիլմադիտակը, նաև կինոագրափոսը։ Եվ իհարկե, մարզագաղափրում պետք է լինի դասադասարան, լինումով կտոր՝ ամբողջական պատիշ։ Այդ դասադասարանին կարելի է սխեմատիկ ձևով պատկերել շարժողական գործողության ցանկացած տարր (էլեմենտ), գրանցել աշակերտներին ֆիզիկայի դասընթացից հայտնի ֆորմուլան ու այլն։ Նաև կարելի է, դասիծի տեխնիկական հազցվածության տեղական հնարավորությունները հաշվի առնելով, մշակել ուսումնական սարքավորումները ու հաստատակամորեն ձեռնամուխ լինել դրանց իրականացմանը (լիակատար հազցվածության առումով)։

Մեր շրջանավարտների, ինչպես նաև մյուս բոլոր դասարանների աշակերտների ֆիզիկական պատրաստվածության թույլ տեղերից մեկն էլ նրանց շարժողական որակների գարգացման ցածր մակարդակն է։ Այդ է վկայում, մասնավորապես, դպրոցականների կողմից ծրագրային նորմատիվների կատարման բավականին ցածր տոկոսը։

Դեռ 1970թ. ՍՍՀՄ լուսավորության նախարարության ֆիզիկական դաստիարակության բաժնի կողմից մեթոդական նամակ է հղվել ֆիզկուլտուրայի դասերին շրջանաձև մարզումների մեթոդների ընդունման կիրառման վերաբերյալ։ Ստուգումներից պարզվել է, առկայե, որ ուսուցիչները քիչ են օգտագործում այդ մեթոդը, ինչի շնորհիվ զգալիորեն բարելավվում են ուժի, արագության, ճկունության, դիմազդունության (տոկունության) ցուցանիշները։

Համակարգի մեջ չեն մտել նաև տարե ինքնուրույն մարզումների համար ուսումնական հանձնարարությունները, որոնք ուղղված են շարժողական որակների զարգացմանը:

Դասի ընթացքում որոշ ուսուցիչներ պակաս ուշադրություն են դարձնում անհատական մոտեցմանը, ինչպես նաև դպրոցականների ակտիվության բարձրացմանը: Այդ ամենը կարելի է արմատական հարցեր են, որոնց լուծումից հաճախ կախված է ուսումնական գործընթացի արդյունավետությունը:

Իհնչ պահանջներ են դրված ֆիզիկական կուլտուրայի դասերի առջև: Առարկայի հանդեպ դրվող պահանջի ամենազվազանը եւ բնութագրական գիծն այս հարցում պետք է լինի դաստիարակչական ուղղվածությունն ու նպատակայնությունը, բոլոր էլեմենտների հանգամանակից, մանրագնին մշակումն ու կատարելագործումը, աշխատանքի հստակ թույլատրվածությունն ու մեթոդները: Դասն սկսելով՝ ուսուցիչը պետք է նախապես ամեն ինչ ծանուրթնեցնի անի՝ հաստատապես իմանալու համար, թե մեթոդական ինչ խնդիրներ է լուծում, ինչու եւ հանուն ինչի է ընդունում հասկապես այդ եւ ոչ այլ վարժություններ, ինչու եւ ինչ նպատակով է ապավինում մեթոդական այս կամ այն ձեռին:

Ուսուցման գործընթացում տեղյակ չլինելով սովորողների կազմակերպության ժամանակակից մեթոդներին կամ չկարողանալով դրանցից գիտակցաբար օգտվել՝ ուսուցիչները ներքին չեն կարողանում հասնել դասապրոցեսի՝ ուսումնական առումով սերտ ամբողջականության ու համահավաքության: Բայց պատահում է եւ հակառակը. ձգտելով, ինչ գնով էլ լինի, հասնել բարձր շարժողական համահավաքության՝ ուսուցիչն ընդամենը հրահանգներ է տալիս ու հաշվարկներ անում՝ ուշադրություն չդարձնելով աշակերտների կեցվածքին ու քայլվածքին, այն բանին, որ վարժությունները կատարելիս նրանք սխալներ են թույլ տալիս: Հավանաբար, մանկավարժը մոռանում, չըջանցում է այն դեպքերը, որ դասի կոմպակտ լինելը՝ նրա սերտ ամբողջականությունը, ինքնանպատակ չէ, այլ ուսումնական գործընթացի բարձր արդյունավետության մեթոդներից մեկն է:

Դասի արդյունավետության վրա ազդում են բազմաթիվ գործոններ: Նրանցից գլխավորը, սակայն, միշտ եղել եւ մինչեւ այժմ էլ մնում է ինքը՝ ուսուցիչը: Որքան էլ նա օրինակ ծառայի եւ բարձրակիր լինի, միեւնոյն է, պետք է պարբերաբար թարմացնի իր գիտելիքները, իրականացնի մեթոդական ունակությունները: Ահա թե ինչու մեզ՝ բոլորիս համար այդքան կարևոր են զանազան դասընթացներն ու սեմինարները՝ ուղղված ուսուցիչների որակավորման բարձրացմանը:

Պրակտիկայում դեռ թույլ է ներդրվում աշխատանքի առաջավոր փորձը: Հարկավոր է խորությամբ ու բազմակողմանիորեն կիրառել այն եւ ոչ միայն տեղեկացնել նրա մասին, այլեւ մշակել մեր մանկավարժների կողմից այդ իսկ փորձին հաղորդակցվելու մեթոդներ՝ իրենց փուլերով հանդերձ (խմացության հաղորդման փուլային մեթոդներ):

Եվս մի կարևորագույն հարց, որից շատ բան է կախված: Պահանջվում է բարելավել ուսումնական աշխատանքի նկատմամբ վերահսկողությունը:

ԿԳ նախարարության բաժինները, ԿԱ սպորտկոմիտեն պարտավոր են ուշադրության կենտրոնում պահել այդ հարցը՝ կոչ անելով դեկավարման եւ ֆիզիկական դաստիարակության նկատմամբ վերահսկողություն սահմանել դպրոցների տնօրենների եւ ուսումնական գծով փոխտնօրենների տեղակալների կողմից: Վերջին տարիների պրակտիկան վառ ապացույցն է այն բանի, որ դպրոցների տնօրենները դեռ դժբով չեն շրջվել դեպի ֆիզիկական կուլտուրա առարկան: Նման դեպքում դասի արդյունավետությունն ու որակը չի հասնում ցանկալի՝ լավագույն աստիճանի (օպտիմում), որի հետևանքով էլ իջնում է աշակերտների կարգապահությունը դպրոցում:

Ի դեպ, չպետք է մոռանալ նաև այն մասին, որ ուսումնադաստիարակչական գործընթացում գլխավոր դերը, համեմայն դեպ, պատկանում է մանկավարժին: Նրա որակավորումը՝ բարձր պրոֆեսիոնալիզմը, գիտելիքները, էնտուզիսզմը, աշխատանքի հանդեպ ստիքագործական մոտեցումը վերջին հաշվով պայմանավորում են գործի հաջողությունը: Այդ պատճառով էլ, պլանավորելով ուսուցչի ուսումնական եւ արտադասարանական ծանրաբեռնվածությունը՝ դպրոցի տնօրինությունը նաև պետք է ազատ ժամանակ ընձեռի,

հնարավորություն տա նրան՝ համարելու, լրացնելու գիտելիքները, էլ չենք խոսում հանգստի եւ կուլտուրական ժամանցի մասին:

Ֆիզիկական կուլտուրայի դասի արդյունավետության բարձրացումը պետական կարենության խնդիր է: Վերջնաժամկետով, նրա լուծումից է կախված աշխատանքի եւ հայրենիքի պաշտպանության հանդեպ մեր դպրոցականների պատրաստականությունը:

Մի քանի խոսք ուսումնական օրվա ընթացքում սովորողների մտավոր գործունեության եւ առաջադիմության վրա ֆիզիկական վարժությունների ունեցած դերի մասին:

Իր ժամանակին դեռ Ֆ. Լեոգրաֆը բացահայտել է, որ ֆիզիկական վարժությունների պարապմունքներն ուսումնական օրվա ընթացքում աշակերտների վրա դրական ազդեցություն են թողնում՝ լավագույնս ներգործելով ոչ միայն ֆիզիկական զարգացման, այլեւ մտավոր գործունեության տնայկեսից: Փորձական մի ամբողջ շարք ուսումնասիրություններից պարզվել է, որ ֆիզիկական կուլտուրայի պարապմունքները եւ սպորտը դրական ազդեցություն ունեն աշակերտների առաջադիմության եւ մտավոր աշխատունակության վրա:

Հանրապետությունում բրիգադաբայելիզիոն մեթոդով ֆիզկուլտիկականների կողմից անց են կացվել ուսման մեջ հետ մնացող աշակերտների բժշկական եւ սոցիալ-հիգիենիկ համալիր հետազոտություններ (ընդհանուր առողջական վիճակ, հիվանդացություն, սնունդ, ֆիզիկական զարգացում, սեռական հաստիքացում, հոգեկան դրոշմ)՝ հոգեվիճակ, տնտյություն, լսողություն, նյարդային համակարգ, ընտանեկան սոցիալ-հիգիենիկ պայմաններ, շրջակա միջավայրի եւ դպրոցաշենքի հիգիենա, ֆիզիկական պատրաստվածություն, հետ մնացող դպրոցականների ակտիվացում):

Փորձաքննություն անցկացվեց քաղաքի նրբեր եւ կենտրոնների դպրոցներում: Հետազոտման նյութերվեցին 1-8-րդ դասարանների 530 հետ մնացող աշակերտներ: Հարցումներից ստացված տվյալները ցույց են տվել, որ հետ մնացողների մոտ 65 տոկոսը գործնականորեն առողջ է, մնացած 35 տոկոսի մոտ հայտնաբերվեցին, հաստատվեցին օրգանիզմի տարբեր օրգանների հիվանդություններ կամ դրանց հետեւանքները՝ 18 տոկոսի մոտ, ընտանեկան անբարենպաստ պայմաններում է 12 տոկոսը, հոգեկան դանդաղ զարգացում ունի 6 տոկոսը, տարբեր աստիճանի մտավոր հետամնացությամբ ստառալում է 5 տոկոսը:

Ֆիզիկական պատրաստականության եւ ակտիվության ուսումնասիրությունները հնարավորություն են տվել նգրականել, որ ուսման մեջ հետ մնացողներն անտարբեր են ֆիզիկական կուլտուրա առարկայի եւ սպորտի նկատմամբ՝ ընդհանրապես:

Հարցումներից նաեւ պարզ է դարձել, որ հետ մնացողների 15,7 տոկոսը չի սիրում ֆիզիկական կուլտուրայի դասերը, միայն 9,6 տոկոսն է (այն էլ՝ հազվադեպ) ժամանակ առ ժամանակ զբաղվում առավոտյան լիցքային վարժություններով, մարմնամարզությամբ: Հետ մնացողների յուրաքանչյուր երրորդը (հատկապես՝ աղջիկները) դպրոցից վերադառնալով՝ ազատ ժամանակն անց է կացնում տանը: Մնացածները, թեկուզեւ լինում են բաց օդում, ազատ ժամանակը տնօրինում են ոչ շացիոնալ: Այն հարցին, թե ինչով են զբաղվում նրանք, ստացվել են հետեւյալ պատասխանները. «Լինում եմ բակում», «Խաղում եմ ընկերներիս հետ», «Ջրսնում եմ մտերիներին ուղեկցությամբ»: Նրանցից շատերը խոսափում են նպատակադիր՝ ակտիվ շարժումներից, ընդհանրապես՝ շարժման մեջ լինելուց: Նրանց այդ թերությունը կարելի է վերացնել, չնդգացնել՝ մարզական պարապմունքներով, մրցություններին, մրցախաղերին մասնակցությամբ, նորմատիվային կարգերին նախապատրաստվելով ու դրանց հանձնելով: Հետ մնացողների թուր այս ցուցանիշներն ավելի աննպաստ են, քան ուսման առաջավորներին:

Ուսումնասիրություններից ստացված տվյալները հանգեցրել են հետեւյալ գաղափարին. գուցե մտավոր հետամնացությունը ուղեկցվում է դպրոցականների ֆիզիկական ոլոջ հետամնացությամբ, նվազ ակտիվությամբ ու նվազ նպատակային շարժողական գործունեությամբ, ֆիզիկական թույլ պատրաստվածությամբ:

Պարզվել է, որ ուսման մեջ հետ մնացողներն ավելի ուշ, դեպքից դեպք են հանձնում կարգային նորմատիվները, քան առաջավորները:

Եզրակացություններ.

1. Հետ մնացողների ֆիզիկական պատրաստության մակարդակն ավելի ցածր է, քան առաջավորներինը: Ուսման մեջ հետ մնացող դպրոցականներին քիչ կամ գրեթե չեն հետաքրքրում ֆիզիկական կուլտուրայի պարապմունքները եւ սպորտը:

2. Ֆիզիկական կուլտուրայի բարձր կազմակերպված դասերն ու արտադասարանային սպորտային աշխատանքը հետ մնացողներին օգնում են՝ բարելավել իրենց ֆիզիկական պատրաստականությունը:

3. Դպրոցականների՝ ուսման մեջ հետ մնալու պատճառները հաղթահարելուն և ֆիզիկական պատրաստականության հետագա կատարելագործմանը զուգընթաց՝ կրթական նրանց ուսման որակը, համապատասխանաբար էլ կնվազի նրկտարեցիների և թույլ առաջադիմությամբ աշակերտների թվաքանակը:

Резюме

Результаты проведенного анализа позволили сделать заключение о необходимости проведения организационных и методических мероприятий по повышению эффективности урока в учебно-воспитательном процессе.

Գրականություն

1. Ֆ.Գ. Ղազարյան, Մարզման հիմունքները (մեթոդական ձեռնարկ): ա) Սպորտային մարզման միջոցների կազմակերպչական-մեթոդական ձևերի կիրառումը պարապմունքներում, էջ 31: բ) Շարժողական հատկությունների մշակման մեթոդիկան, էջ 33:
2. Ա.Դ. Եղիազարյան, Շարժողական գործողությունների ուսուցումը (մեթոդական ձեռնարկ): ա) ուսուցման գործընթացի կառուցվածքի ընդհանուր բնութագիրը, էջ 15:
3. Ս.Ս. Նահապետյան, ընդհանուր զարգացնող վարժություններ (ուսումնական ձեռնարկ), «Լույս» հրատարակչություն, 1988:
4. Ֆ.Գ. Ղազարյան, Դպրոցականների շարժողական հատկությունների մշակման առանձնահատկությունները ֆիզիկական կուլտուրայի դասերին, «Լույս» հրատ., 1981:
5. И.В.Школьников, Журнал «Физкультура в школе», Развитие прыгучести по принципу круговой тренировки, N1., 2007, стр. 39.
6. В.И. Лях, П.Я. Гальперин, М.М.Боген, Журнал «Физкультура в школе», Теория о повторном формировании знаний, умений и навыков в процессе освоения двигательных действий, N3, 2007, стр. 15.
7. П. Ф. Ченчик, журнал «Физкультура в школе», Востребование временем, N1, 2006, с.44.
8. В.И.Лях, журнал «Физкультура в школе», Двигательное действие и его производные, N2, 2006, с.45.
9. И. Я. Левинтов, Комплексная подготовка круговым методом, журнал «Физкультура в школе», N2, 2006, с.45.
10. М.В.Овсянко, На уроках – олимпийское многоборье, журнал «Физкультура в школе», N2, 2006, с. 28.
11. Г.И. Погадаев, В процессе занятий, журнал «Физкультура в школе», N7, 2006, с.8.
12. Ю. А. Копылов, Н.В. Поленская, Е. В. Акуткина, Внедряем третий урок, журнал «Физкультура в школе», N6, 2006, с.27.
13. Для повышения учебного процесса (из опыта работы в старших классах с юношами), журнал «Физкультура в школе», N4, 1980, с.14.
14. Наша главная задача (качество урока), журнал «Физкультура в школе», N4, 1980.
15. Педагогика – моя жизнь, журнал «Физкультура в школе», N 10, 1979, с.11.
16. Основы профессионального мастерства учителя физкультуры, журнал «Физкультура в школе», N5, 1979, с.17.

ԱրՊՀ, նախագորակոչային և ֆիզիկական պատրաստության ամբիոն

2008թ. № 1 (17)

Բովանդակություն

1	Պ. Մարտիան	Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի գործունեությունը 1973-1974 թվականներին.....	3
2	Г.Г.Саакян	Об осцилляции собственных функций одного оператора Дирака.....	9
3	Ս.Կ. Պետրոսյան	Կուրսային և ավարտական աշխատանքների կազմակերպումը ամբիոնի գործունեության կարևոր բաղադրիչներից է.....	14
4	Ռ. Լ. Ասրբեյան	Վամակարգչային ծրագրի կիրառության օրինակներ 10-րդ դասարանի մաթեմատիկայի խնդիրների լուծման գործընթացում.....	23
5	С.А.Аветисян	О некоторых аспектах преподавания языка С++ в вузах.....	26
6	Վ. Շ. Մանասյան	Ագրեգատների օպտիմալ բեռնավորումը.....	30
7	Г.Г.Гавриелян	Сингулярный сферический осциллятор в постоянном магнитном поле: притяжение.....	34
8	Ա.Գ. Ալեքսանյան, Գ.Ր. Դճամալյան, Լ.Ր. Մինասյան	Двухбарьерные резонансно-туннельные структуры: бистабильность и пороговые условия.....	39
9	Ա. Ղաթրիճյան	Միջառարկայական կապը դպրոցական դասընթացի ֆիզիկայի և քիմիայի դասերին.....	45
10	Ա.Է. Ավետիսյան	Եթերայտղմերի ստացումը ջրային գոլորշիներով թորման եղանակով.....	49
11	Ս. Գ. Բաղդասարյան	Молекулярные характеристики промышленных поливинилбутиралей.....	53
12	Ю.Р. Каграманов, Х.В.Хачанов	К вопросу о перспективах нефтегазоносности Мартакертского района Нагорно-Карабахской республики.....	57
13	Վ.Տ. Հայրապետյան, Մ.Ռ. Գրիգորյան, Ա.Լ. Գրիգորյան	Լեռնային Ղարաբաղի ֆաունայում տարածված սովորական ոգնիների (Erinaceus europeus Linnaeus 1758) էկոլոգիային և հեմոդինամիկական ցուցանիշներին վերաբերող որոշ հարցեր.....	60
14	Մ.Ա. Աղայան, Ա.Ա. Մարգարյան	ԼՂՀ-ում խոզերի ասկարիդոզը և դրա դեմ տարվող պայքարը.....	65
15	Տ.Վ. Բալայան	ԼՂՀ տարածքում վայրի ածող սննդային և բուժական նշանակություն ունեցող որոշ խոտաբույսերի էկոլոգո-կենսաբանական առանձնահատկությունները.....	68
16	Ա. Պ. Պետրոսյան	«Հին արևելքի պատմություն» դասընթացի բակալավրիատի ծրագիր-նախագիծ.....	72
17	Լ.Յ.Վարդանյան	Преподавание истории как основной инструмент формирования и развития исторического сознания общества Арцаха.....	77

2008 1(17)

+18	<u>Ս.Ա. Խանյան</u> Անմահ վիպագիրն ու գրամատուրգը /Ալ. Ծիրվանգաղնի ծննդյան 150-ամյակի առթիվ.....	80 +
+19	<u>Ա.Ա. Աթայան</u> Հովհաննես Թումանյանը՝ մանկական գրականության տնտաքան.....	85 +
+20	<u>Լ.Ս. Գրիգորյան</u> Աստվածահայտնությունը Մաշտոցի կյանքում	88 +
+21	<u>Զ.Ս. Բալայան</u> Պատմա-բանասիրական քննություն «Գաղտնիք Ղարաբաղի» ուսումնասիրության շուրջ.....	91 +
+22	<u>Տ. Գ. Մուսայելյան</u> Շրջադարձ դեպի հավասարակշռություն.....	95 +
+23	<u>Է.Ա. Մովսիսյան</u> Մայրենի լեզուն՝ հայրենիքի հիմնասյուն.....	100 +
+24	<u>Ա. Ա. Մելքունյան</u> Խաժակ Գյուլնազարյանի՝ կրտսեր դարձահասակ երեխաներին հասցնագրված նրկները.....	105 +
+25	<u>Օ.Ե. Բաբայան</u> Հրաչյա Աճառյանի «Հայ գաղթականության պատմություն» ուսումնասիրությունը.....	109 +
+26	<u>Ա.Յու. Սարգսյան</u> Բարբառային բառերը և բառածները Ղազարոս Աղայանի հեքիաթներում.....	117 +
+27	<u>Շ.Ս. Մինայան</u> Ժամանակակից հայերենի կրավորական ածանցման շենթարկվող ներգործական սեռի բայերը.....	119 +
+28	<u>Ե.Ա. Միրզոյան</u> Մասնագիտական բառապաշարի ուսուցումը ագրարային ֆակուլտետում.....	123 +
+29	<u>Մ.Ր. Осипян</u> Роман А.Битова «Оглашенные» - первое произведение русского экологического постмодернизма.....	127 +
+30	<u>В.А. Аванесян</u> Профессионально – ориентированное обучение русскому языку студентов химико-биологического факультета.....	130 +
+31	<u>А. Э. Айрапетян</u> Обороты со стативным характером в немецком языке.....	137 +
+32	<u>Н. В. Дурасян</u> Европейский языковой портфель как средство оценки и самооценки знаний учащихся по иностранным языкам.....	142 +
+33	<u>Ж. А. Саркисян</u> Агрессивное поведение подростков в семье и его истоки.....	148 +
+34	<u>Ն.Ս. Մելքունյան</u> Համագործակցային ուսումնասիրությունը և ստնդադգործական մտածողությանը նպաստող թագմավարությունները.....	153 +
+35	<u>Մ.վ. Բարդասարյան</u> Դասի արդյունավետության բարձրացումը որպես ուսումնադաստիարակչական գործընթացի կազմակերպման հիմնական ձև.....	159 +

Արցախի պետական համալսարան

Арцахский государственный университет

Գիտական տնօրինագիր

Ученые записки

1 (17)

2008

Համակարգչային շարվածքը և խմբագրումը՝
Արցախի պետհամալսարանի հրատարակչության

Արցախի պետհամալսարանի հրատարակչություն

Ստեփանակերտ, Մ. Գոշի փ. 5

Издательство Арцахского госуниверситета

Степанакерт, ул. М. Гоша, 5

ԿԱՆՈՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՀԱՍՄԱՐ

1. ԱրՊՀ «Գիտական տեղեկագիր» պարբերականում հրատարակվում են օրիգինալ հոդվածներ ու նամակներ տեսական և էքսպերիմենտալ բնույթի մաթեմատիկայի, մեխանիկայի, ռադիոֆիզիկայի, քիմիայի, երկրաբանության, կենսաբանության, աշխարհագրության, տնտեսագիտության և հումանիտար գիտությունների բնագավառներից:
2. Ընդունվում են նաև ԱրՊՀ-ի մասնակցությամբ կայացած կոնֆերանսների, գիտաժողովների և գիտական դպրոցների նյութեր:
3. Բնագրերը ներկայացվում են երկու օրինակով, մեքենագրված, մեկ ինտերվալով, հայերեն, ռուսերեն կամ անգլերեն լեզուներով՝ հայերեն, ռուսերեն ամփոփումներով: ՀՏԳ-ից (վերելի ծախ անկումում), հոդվածի վերնագրի և հեղինակի անվանատառերից ու ազգանունից հետո բերվում է կարճ անոտացիա: Հոդվածի ծավալը աղյուսակներով չպետք է գերազանցի 10 էջ, հաղորդմանը՝ 4, նամակինը՝ 2:
4. Հոդվածի հետ ներկայացվում է արձանագրության քաղվածք այն ամբողջից, որտեղ կատարվել և քննարկվել է աշխատանքը:
5. Թույլատրվում է 5-ից ոչ ավելի նկար (հստակ լուսանկար կամ գծագրեր՝ արված առանձին սպիտակ քղրի վրա): Յուրաքանչյուր նկարի հակառակ կողմի վրա գրվում է կարգային համարը: Տեքստի լուսանցքներում նշվում է նկարների և աղյուսակների տեղերը:
6. Միեւնույն նյութը աղյուսակի և նկարի ձևով ներկայացնել չի թույլատրվում:
7. Բերվող գրականության մասին հոդվածում նշվում է միայն կարգային համարը, թառակուսի փակագծերում [1,3-5]. ըստ հանդիպման հերթականությամբ: Հոդվածի վերջում նույն հաջորդականությամբ բերվում են գրականության ցուցակը, կարգային համարը, հեղինակների ազգանուններն ու անվանատառերը, գրքի կամ հոդվածի վերնագիրը: Պարբերականը հրատարակությունների համար այնուհետև հաջորդում է ամսագրի ընդունված կրճատ անվանումն առանց չափերտների, թվականը՝ հատորի ու թողարկման համարները, հերթական համարը և էջը: Գրքի դեպքում՝ հրատարակման վայրը, հրատարակչությունը, թվականը և էջը: Հիշատարակված աշխատանքի վերաբերյալ (բացի ատենախոսությունից) գրականության մեջ նշել չի թույլատրվում: Արտասահմանյան գրականությունը տեքստում նշվում է հոդվածի լեզվով, իսկ գրականության մեջ օրիգինալով:
8. Հոդվածի տեքստի վերջում ծախ կողմում նշվում է այն ամբողջը կամ լաբորատորիան, որտեղ կատարվել է աշխատանքը:
9. Հոդվածը ստորագրվում է բոլոր հեղինակների կողմից:

ПРАВИЛА ДЛЯ АВТОРОВ

1. В журнале „Ученые записки., АрГУ публикуются оригинальные статьи, сообщения и письма теоретического и экспериментального характера из области математики, механики, физики, радиопизики, химии, геологии, биологии, географии, экономики и гуманитарных наук, выполненные в Арцахском государственном университете.
2. Принимаются также материалы научных конференций, симпозиумов и научных школ, проведенных при участии АрГУ.
3. Рукописи представляются в двух экземплярах в машинописи через один интервал на русском, армянском или английском языках, с армянским или русским резюме. После указания УДК (вверху слева), инициалов и фамилии автора и названия статьи приводится краткая аннотация. Объем статьи вместе в таблицах не должен превышать 10 страниц, сообщения-4, письма-2.
4. К статье необходимо приложить выписку из протокола заседания кафедры, где выполнена и обсуждена статья.
5. Разрешается не более 5 рисунков (контрастные фотографии или чертежи, выполненные черной тушью на белой бумаге). На оборотной стороне каждого рисунка отмечается его порядковый номер. На полях статьи должны быть помечены места рисунков и таблиц.
6. Представление одного и того же материала в виде рисунков и таблиц не допускается.
7. Цитируемая литература отмечается в тексте поочередно порядковым номером в квадратных скобках [1,2-5]. В конце статьи в той же очередности приводится список цитированной литературы: порядковый номер, фамилия и инициалы авторов, названия книги или статьи. В ссылках на периодические издания далее следует общепринятое сокращенное название журнала без кавычек, год, том, выпуск, порядковый номер, страница; книги-место издания, изд-во, год, страница. Ссылки на неопубликованные работы (кроме диссертаций) не допускаются. Зарубежная литература в тексте дается на языке статьи, а в литературе- на языке оригинала.
8. В конце статьи слева указывается кафедра или лаборатория, где выполнена работа.
9. Статья подписывается всеми авторами.